

Ժիրայր Գլենց (վեպ) մաս առաջին

հեղինակ՝ Մկրտիչ Արմեն
աղբյուր՝ «Պատվիրեցին հանձնել ձեզ»

Բովանդակություն

- [1 Մաս Ա](#)
 - [1.1 1](#)
 - [1.2 3](#)
 - [1.3 4](#)
 - [1.4 5](#)
 - [1.5 6](#)
 - [1.6 7](#)
 - [1.7 8](#)
 - [1.8 9](#)
 - [1.9 10](#)
 - [1.10 11](#)
 - [1.11 12](#)

Մաս Ա

1

Երբ նա մտավ սենյակ՝ մի կին այնտեղ ջնջոցը ձեռքին կարասին էր սրբում: Կարասին շքեղ էր, կնոջ հագուստը տան գործ անելու համար՝ նույնպես շքեղ էր, նրա ձեռքի ջնջոցն անգամ նոր եւ լավ մի կտոր էր:

Որովհետեւ կինը մեջքով էր կանգնած դեպի նա, չէր կարելի ճանաչել նրան դեմքից: Նրա կազմվածքն ու շարժումները նույնպես անձանոթ էին: Դա ուրիշ կին էր:

Բայց նա հասկացավ՝ կինը չէր ուրիշը, այլ ժամանակը: Ուստի եւ, աշխատելով գապել հուզմունքը, իր մարմնի բոլոր կողմերից ուժը ձգելով դեպի կոկորդ, արտասանեց մի կերպ.

— Բրաբի...

Կինը կտրուկ շարժումով, կարծես բարկացած, շուռ եկավ տեսնելու, թե ով է Բրաբինն Ավետովնայի փոխարեն մտերմաբար Բրաբի անվանում նրան: Նայեց ուշադիր, երկար, չճանաչեց: Ապա նրա հայացքն ընկավ պայուսակի վրա՝ քրքրված, կեղտոտ, ինչեր տեսած... Անձանոթ պայուսակի այդ տեսքը մի ակնթարթում բացատրեց ամեն ինչ...

— Ժիրայր...— արտասանեց Բրաբին խզված ձայնով:

Այն, որ նա չնետվեց դեպի ամուսինը եւ չգրկեց նրան՝ Ժիրայրը համարեց միանգամայն բնական: Չէ՞ որ ինքը նույնպես կանգնել էր իր տեղում՝ մեխվածի պես: Հազար զգացմունքներ էին փոթորկվել նրա մեջ, որոնք շարժվում էին իրարամերժ ուղղություններով՝ ստիպելով Ժիրայրին եւ նետվել առաջ, եւ մնալ տեղում, եւ շուտ գալ, փախչել այդ անձանոթ բնակարանից, այդ անձանոթ կնոջից: Ի վերջո ստացվում էր այն, որ այդքան զգացումների մեջ խճողված, նա չէր կարողանում անել ոչինչ:

Մի՞թե կարելի էր մերժել, որ կինը եւս գտնվեր նույն վիճակում:

— Տասնվեց տարի...— արտասանեց Բրաբին:

Ժիրայրն սպասեց մի պահ, թե կինը շարունակելու է, բայց կինը չշարունակեց: Վիրավորանքի դառն զգացումը բարձրացավ դեպի Ժիրայրի սիրտը:

— Տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օր,— ճշտեց նա խաղաղ-հանդիմանական տոնով: Ի՞նչպես կարելի է մոռանալ երկու ամիսը եւ նույնիսկ տասնհինգ օրը, երբ Ժիրայրն այնտեղ հաշվում էր մինչեւ իսկ ժամերը: Այդպես, աղքատը գիտե իր գրպանի դրամը մինչեւ վերջին կոպեկը: Իսկ տուր դա հարուստին՝ զգուշությունից դողողացող ձեռքերով, նա կվերցնի կտրուկ եւ անփույթ շարժումով՝ առանց վախենալու, թե կարող է թափել թղթադրամների մեջ փաթաթած մանրը, եւ կհաշվի միայն ռուբլիները կամ նույնիսկ տասնյակ ռուբլիները... Բրաբին երեւի չի հիշում նաեւ այն, թե ինչ օր էր այն օրը: Ժիրայրը գիտե՝ երեքշաբթի էր, ինչպես բոլորը գիտեն, որ այսօր ուրբաթ է:

Խորթության անտանելիորեն ծանր զգացումը պաշարել էր Ժիրայրին: Որ դա նոր բնակարան էր եւ ոչ թե այն, որտեղից տարել էին նրան՝ դա կարող էր չունենալ ինքնին ոչ մի նշանակություն: Ոչ մի նշանակություն կարող էր չունենալ նաեւ այն, որ ամբողջ կահ-կարասին, բոլոր իրերը, նոր էին, չկար դրանց մեջ որեւէ ծանոթը: Նրա կին Բրաբին այժմ եւ միշտ կարող էր ջերմացնել ամեն մի բնակարան, ամեն մի կահավորություն, դարձնել Ժիրայրի համար հարազատ: Բայց ամենասարսափելին այն էր, որ չկար հենց Բրաբին: Դիմացը կանգնած կինն այնքան էր նման Բրաբինին, որքան որ ահա այդ շքեղ բուֆետ-պահարանը՝ նրանց երբեմնի աղքատիկ թարեքներին...

Երբ տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օր առաջ ընդհատվեց Ժիրայրի կյանքը, նա բոլորովին նախապատրաստված չէր դրան: Դեռեւս չհասկանալով կատարվածի ամբողջ ողբերգությունը, նա շտապում էր նույն օրն իսկ վերադառնալ տուն եւ շարունակել իր կիսատ թողած անհետաձգելի գործերը: Բայց նրան չթողեցին... Հուսահատությունից նա պատրաստ էր լաց լինելու, բայց մի՞թե դա կօգներ:

Եվ օրն անցավ: Բայց չէ՞ որ նա, դուրս գալով աշխատավայրից, շտապում էր գնալ դեղատուն՝ դեղ վերցնելու մրսելուց հիվանդացած իր մի տարեկան Հովիկի համար: Եվ քանի որ նա այդ օրն աշխատավարձ էր ստացւ, ապա մտադրվել էր նաեւ նարինջ գնել Բրաբինի համար: Կինը շատ էր սիրում նարինջ եւ անշուշտ հիմա, իր հղիության ամիսներին, շատ կուզենար ուտել գոնե մի քանի հատ: Բայց խնայողություն անելու անհրաժեշտությունից դրդված, այդ մասին լռում էր Բրաբին՝ նիհար ու սուսիկ նրա երիտասարդ կինը: Հազիվ երեք տարի էր, ինչ նրանք ամուսնացել էին, հարկավոր էր անընդհատ դրամ կուտակել ռուբլի առ ռուբլի, իրեր գնել, հագուստ... Իսկ Ժիրայրն

աշխատում էր որպես մի փոքրիկ հիմնարկի գործավար եւ ստանում էր շատ համեստ աշխատավարձ: Ու թեւեւ նա գիտեր, որ կինը տրտնջալու էր նրա կատարած ավելորդ ծախսի համար, բայց որոշել էր գնել նարինջ՝ մի ամբողջ կիլո...

Բայց նա չվերադարձավ տուն՝ դեղի ստացականը եւ ամսվա աշխատավարձը գրպանում: Երբ անցավ առաջին գիշերը, նա չէր հավատում, թե անցնելու էր նաեւ երկրորդ օրը: Եվ գուցե խելագարվեր, եթե ասեին նրան, որ անցնելու են հինգ հազար ինը հարյուր տասնութ այդպիսի օրեր...

Չկարողանալով ինքը վերադառնալ դեպի կյանք, Ժիրայրն ակամայից, անգիտակցորեն, ճգնում էր բռնել, ետ պահել գոնե ժամանակը, որպեսզի երբ վերջ ի վերջո վերադառնար տուն, կյանքը շարունակվեր ընդհատված կետից՝ ինչպես կտրված եւ նորից միացված կինոժապավեն:

Եվ, իրոք, չտեսնելով, թե ինչպես է ընթանում կյանքն այնտեղ՝ դրսում, Ժիրայրն ուներ այն պատրանքը, թե այն չի ընթանում, թե, իրոք, ժամանակի բարի մեխանիկը մի օր սոսնձելու է կտրված ժապավենի ծայրերը, եւ կյանքը շարունակվելու է ընդհատված տեղից:

Ճիշտ է, նա տեսնում էր օրերի ու գիշերների, տարվա եղանակների իրար հաջորդելը, երբեմն լսում կամ կարդում էր լուրեր աշխարհի գործերի ընթացքի մասին, բայց դրանք շատ ընդհանուր եւ հեռու բաներ էին՝ նրա մտերիմ մարդկանց փոփոխության տեսանելի պատկերն ստեղծելու համար: Ուստի եւ նրա մտապատկերների մեջ նրա կին Բրաբին այդ ամբողջ ժամանակամիջոցում մնացել էր նույն քսանամյա նիհար ու հեզ կինը, Հովիկը՝ նույն մի տարեկան երեխան՝ մրսելուց հիվանդ, իրենց տունը՝ նույն անշուք սենյակը՝ խղճուկ ու սիրելի իրերով...

Մի՞թե կարելի էր կասկածել, որ Բրաբիի հուշերի մեջ եւս, նրա ամուսին Ժիրայրը չէր մեծացել ու փոխվել, այլ մնացել էր նույնը:

Եվ ահա այժմ իրար դեմ կանգնել էին երկու ուրիշ մարդիկ: Ավաղ, նրանք մինչեւ անգամ անձանոթներ չէին: Անձանոթների միջեւ դեռեւս չկան փոխհարաբերություններ, նրանք հնարավորություն ունեն ծանոթանալու միմյանց հետ, սիրելու միմյանց: Իսկ նրանք կանգնել էին իրարից հիասթափված, երկար տարիների իրենց սպասումների մեջ խաբված: Եվ բոլորովին էլ կարելու չէր՝ տգեղացե՞լ էին նրանք հեռու անցյալի համեմատությամբ, թե գեղեցկացել, թարշամե՞լ էին, թե փթթել: Կարելուրն այն էր, որ նրանք ուրիշ մարդիկ էին, ոչ սպասվածները...

— Նստիր... — անարտահայտիչ ձայնով ասաց Բրաբին: — Դիր պայուսակը վար:

Իսկ ինքը դեռ բռնել էր ջնջոցը ձեռքում:

Ժիրայրը պայուսակը դրեց դռան անկյունը, առաջ եկավ, փվեց ամենամոտիկ աթոռի վրա:

— Ինչո՞ւ նամակ չէիր գրում, — խուլ ձայնով հարցրեց Բրաբին:

— Մի ամբողջ տարի, դու դա չգիտես, ես չէի կարող գրել: Իսկ երբ հնարավորություն ստացա՝ չպատասխանեցիր: Եվ դադարեցիր:

— Ես քո նամակները չեմ ստացել: Հենց հետևյալ օրն ինձ փոխադրեցին ավելի վատ բնակարան, մերինից էլ վատը: Ո՞վ պիտի հարկ համարեր վերուղարկել նամակներդ ինձ: Հարեւաններն անշուշտ պատռում էին ու նետում դեն:

— Իսկ ինչո՞ւ ինքդ չփորձեցիր գտնել իմ հասցեն:

— Ինձ ասացին, որ դու իրավունք չունես նամակներ ստանալու: Գուցե այդպես էր, գուցե իրենց էին ազատում քո հասցեն գտնելու ավելորդ նեղությունից:

Լռեցին ծանր, ճնշող լռությամբ, յուրաքանչյուրն իր մտքի հետ:

— Իսկ ինչո՞ւ չեկար վեց տարի առաջ: Չէ՞ որ կենդանի մնացողների ամենամեծ ժամկետը տասը տարի էր: Կարծեմ:

— Եկա: Վերադարձրին կեսճանապարհից:

Ժիրայրի դեմքը ծամածռվեց՝ կարծես մի հին ցավի հանկարծակի նուպայից: Վշտացածություն, փոխադարձ վշտացածություն երկու անմեղ մարդկանց միջեւ... «Ինչո՞ւ չէիր գրում»... «Ինչո՞ւ չփնտրեցիր հասցես»... «Ինչո՞ւ չվերադարձար վեց տարի առաջ»... Նա ասաց խնդրական.

— Եկ չխոսենք անցյալի մասին: Լա՛վ:

— Լավ: Ուրեմն ներկայի մասին: Ինչպե՞ս գտար ինձ:

— Շատ հասարակ:

— Հասցեների սեղանի միջոցո՞վ:

— Իհարկե:

— Իսկ եթե ազգանունս փոխա՞ծ լինեի: Շատերն էին փոխում այն ժամանակ: Եվ ոչ միայն ամուսնանալու դեպքում:

— Պիտի ենթադրել:

— Այդ դեպքում դժվարությամբ պիտի գտնեիր:

— Այդ դեպքում չէի փնտրի:

— Իսկ երեխանե՞րը: Չէ՞իր ուզենա տեսնել նրանց:

— Երեխաները... Երկրորդը տղա՞ է թե աղջիկ:

— Աղջիկ:

Հեռախոսի զանգն իր անսպասելիությամբ թվաց չափազանց ուժեղ: Երկուսն էլ ցնցվեցին: Բրաբին վեր կացավ, ջնջոցը դրեց իր նստած աթոռի վրա, մոտեցավ հեռախոսի սեղանակին:

Ժիրայրն ակամայից լսում էր խոսակցությունը՝ առանց հասկանալու: Նա չէր հասկանում ոչ միայն այն պատճառով, որ հուզված էր ու շփոթված, ոչ միայն այն պատճառով, որ լսում էր միայն կնոջը եւ ոչ թե նաեւ խոսակցին, այլեւ որ նա դրսից եկած մարդ էր՝ անծանոթ այդ կնոջը, անծանոթ նրա գործերին: Այնուամենայնիվ բավական ձգձգված հեռախոսության ընթացքում նա աստիճանաբար հասկացավ, որ Բրաբին ինչ-որ հիմնարկի պետ է կամ դրա պես մի բան, եւ որ նրանից կախում ունեցող ինչ-որ մարդիկ

խնդրում են նրան կարգադրել ինչ-որ գործ, իսկ Բրաբին պատասխանում է, որ նա արձակուրդի մեջ է, իսկ արձակուրդն արդեն ավարտվում է եւ երկուշաբթի օրվանից նա նորից գնալու է աշխատանքի: Այնպես որ, կարող են սպասել մի երկու օր: Ոչ, ոչ, նա հեռախոսով ոչինչ չի կարող կարգադրել, պետք է մոտիկից ծանոթանա գործին: Իսկ եւ ճիշտը կուզեք իմանալ, նա իրավունք էլ չունի արձակուրդի ընթացքում կարգադրություններ անելու: Դիմեցեք նրա տեղակալին...

Աստված իմ, Բրաբիի տեղակալին... Բրաբիի... Այն նիհար, հեզ կնոջ, աղջկա տեսքով, որն այն առավոտ Ժիրայրին նախանաչ պատրաստելիս լուռ լաց էր լինում՝ առանց սրբելու այտերով հոսող արցունքահատիկները: Երբ Ժիրայրը, նկատելով նրա լացը, վեր կացավ, գրկեց նրան եւ համբուրելով արցունքոտ այտը, հանգստացրեց, որ Հովիկին ոչինչ չի պատահի, որ նա կառողջանա, կինը պատասխանեց.— «Գիտեմ, ես նրա համար չեմ լալիս»... Նախորդ օրը Ժիրայրի հիմնարկում տեղի էր ունեցել փոթորկալի ժողով, որտեղ ծանր մեղադրանքներ էին շարժել Ժիրայրի եւ մի ուրիշի հասցեին: Այդ մյուս մարդը կիսամեռ վիճակում հագիվ էր ոտքերը դուրս քաշել ժողովից, իսկ Ժիրայրն առանձնապես չէր անհանգստացել, քանի որ գիտեր իր անմեղությունը: Նրան գրպարտել էին առանց հիմքի: Նա որոշել էր մոտ օրերը գրավոր հերքել գրպարտությունը՝ բերելով անվիճելի փաստեր: Նա չէր կասկածում, որ ճշմարտությունը չի կարող չվերականգնվել մեր երկրում:

Իսկ երբ Ժիրայրն արդեն դուրս էր գալիս տնից, Բրաբին ձեռքի հուսահատ շարժումով արագ բռնեց նրա թեւքից, ընկավ գիրկը եւ փղձկաց. «Ի՞նչ պիտի անեմ ես մենակ, առանց քեզ...»: Բայց Ժիրայրը ծիծաղեց երեխայի անմեղ, միամիտ ծիծաղով, համբուրեց կնոջը եւ ասաց, որ Հովիկի դեղը նա հենց հիմա կպատվիրի եւ աշխատանքից դուրս գալիս հետը կբերի:

Նա գնաց եւ վերադարձավ միայն այսօր:

Թե ինչ էր նշանակում տասնվեց տարվա, երկու ամսվա եւ տասնհինգ օրվա բացակայություն՝ Ժիրայրը չէր պատկերացնում: Նա չէր կարողանում իր բաց թողած կյանքի մեջ դնել շոշափելի, տեսանելի բովանդակություն: Կանվանես դա հինգ տարի, տասը տարի, թե տասնվեց՝ էությունը չի փոխվի դրանից, տարիների քանակը կմնա լոկ թվաբանական արստրակտ հասկացողություն: Չկա ոչ մի պատկեր, ոչ մի հուշ, որը կապված լինի դրա հազարավոր օրերից որեւէ մեկի հետ, առանձնացնի այդ օրը մյուսներից, բոլոր օրերն իրարից, ամիսներն ու տարիներն իրարից:

Տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օրը նրա համար ուներ այլ բովանդակություն, լցված էր մի այլ կյանքով: Բայց այդ արդեն ոչ մի կապ չունեի նրա քաղաքի, նրա տան, նրա հարազատ մարդկանց հետ: Եվ երբ նա ճգնեց ստեղծել իր կյանքի վերջին օրն օղակի պես եկավ ագուցվեց այսօրվա օղակին, իսկ տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օրն առանձնակի ընկան մի կողմ՝ որպես ժանգոտ ու սեւ մի շղթայակտոր:

Բրաբին, մեջքով դեպի Ժիրայրը, վար դրեց հեռախոսափողը, մի պահ մնաց այդպես կանգնած՝ երեւի մտածելով, որ երբ նորից շուռ գա ու նայի, պիտի տեսնի՞ արդյոք Ժիրայրին, թե՞ նա տեսիլք էր, որ չքացավ: Բայց գուցե կինը մտածում էր ավելի ռեալ եւ գործնական բաների մասին, մտածում էր, թե ինչ անի կամ ասի այժմ:

Շուռ գալով դեպի ամուսինը, նա հարցրեց.

— Սոված չե՛ս, Ժիրայր: Ծիշտ է, այսօր դեռ ոչինչ չեմ եփել, բայց լավ ճաշ է մնացել երեկվանից:

Բրաբին չհասկացավ, թե ինչու նրա այդ խոսքերի ժամանակ Ժիրայրը ցնցվեց եւ անթարթ նայեց նրան՝ կարծես չհասկանալով հարցը: Ապա ասաց դանդաղ.

— Ոչ, սոված չեմ:

— Այդ դեպքում ես վաննա կպատրաստեմ, լողացիր, հետո կխոսենք:

Բրաբին դուրս ելավ՝ տանելով իր հետ ջնջոցը:

Երեկվանից մնացած ճաշ... Ի՞նչ երեկվա մասին է խոսքը... Ժիրայրի համար երեկն այն օրն էր, երբ նա մեկնեց տնից՝ Հովիկի դեղատոմսը գրպանում: Բայց ոչ, պետք է զգաստ մտածել.— երեկն այն օրն էր, երբ նա, գնացքի լուսամուտից անհամբեր նայելով դուրս, կիլոմետրերն էր հաշվում՝ շտապելով հասնել Երեւան:

Այժմ նա տեսնում էր, որ եղել է նաեւ մի ուրիշ երեկ, առանց նրա... Ծաշի սեղանի շուրջը հավաքվել են նրա կինը, նրա տղան, նրա աղջիկը, գուցե նաեւ հյուրեր՝ նույնքան անծանոթ: Ծաշել են, խոսակցել իրենց գործերի մասին, եւ չի եղել դատարկ աթոռ, եւ չեն էլ հիշել ինչ-որ վաղուց աղոտված, իսկ ոմանց համար մինչեւ իսկ բոլորովին անծանոթ մարդու... Երեկ... Դա միակ օրն էր հինգ հազար ինը հարյուր տասնութ անմարմին օրերից, որը ճաշի պարզ հիշատակությամբ նյութացավ եւ վերածվեց կոնկրետ օրվա: Այրվածքի նման մի սուր ափսոսանք, ուշացած մարդու մի անդառնալի վիշտ կսկծացրեց նրա սիրտը, որ նա այստեղ չի եղել երեկ, սեղան չի նստել յուրայինների հետ:

Երեկ... Մի օր... Իսկ մնացած հինգ հազար ինը հարյուր տասնյոթ օրե՛րը... Ոչ, դրանք դեռ դատարկ թվեր էին նրա համար: Առայժմ միայն երեկվա օրն էր նրա համար կենդանի օր, նա դրա կորուստի համար ավելի էր ափսոսում, քան մնացյալ ամբողջ ժամանակաշրջանի համար:

Ժիրայրն աթոռի վրա նստել էր մի տեսակ կույ եկած, վախեցած, կարծես աշխատելով ըստ հնարավորին քիչ տեղ զբաղեցնել այդ անծանոթ սենյակում, ուրիշի տանը: «Ծիշտ այդպես էի նստել տարիներ առաջ, հարցաքննության ժամանակ...»,— անցավ նրա մտքով:

Նա ուզեց թոթափել իրենից անախորժ հուշը: Նայեց շուրջը: Ինչպիսի՛ կանոնավոր եւ ներդաշնակ բնակարան... Շքեղությունն ամեն կողմ սփռված է ոչ թե «զեղարվեստական անփութությամբ», այլ երկրաչափական խստությամբ եւ մաթեմատիկական անվիճելիությամբ: Եթե մի լուսամուտի քողն վարագույրն ունի յոթը ծալք, ապա մյուսինը նույնպես յոթն է եւ ոչ թե վեց կամ ութ: Սփռոցը սեղանի վրա փռված է բոլորովին չջնջված խոր ծալքերով, կարծես պահարանից նոր հանված: Սեղանի վրա՝ բյուրեղյան ջրաման եւ բյուրեղյա բաժակ՝ բյուրեղյա տակդիրի վրա, սեղանի ուղիղ մեջտեղում: Սեղանի շուրջը՝ վեց փափուկ աթոռներ, իհարկե, երկարավուն կողմերում երկուական աթոռ, իսկ կարճ կողմերում՝ մեկական: Կարելի է գրագ գալ, որ տարածությունները դրանց միջեւ համաչափ են՝ մինչեւ մի միլիմետր ճշտությամբ: Բացառություն է կազմում այն աթոռը, դուրս քաշված եւ թիկնակը դեպի սեղանը դարձրած, որի վրա նստել էր Ժիրայրը: Իսկ Բրաբին նստել էր ռադիոընդունիչի սեղանակակի մոտ դրված աթոռի վրա: Ռադիոընդունիչն իր սեղանակով, հեռախոսն իր սեղանակով, բուֆետ-պահարանը, գրքերի պահարանը, լայն ու մեծ բազմոցը, բոլորը փայլում են իրենց դեղնավուն-շագանակագույն մակերեսներով,

վայտանյութի մուգ ու բաց երանգներով: Ապակեղենն ու բյուրեղը բուֆետ-պահարանում եւ գրքերն իրենց պահարանում դարսված են այնպիսի սպառիչ կանոնավորությամբ ու ներդաշնակությամբ, կարծես դրված են այնտեղ միանգամ ընդմիշտ եւ այլեւս ձեռք չի կպել դրանց, թեւ, կարելի է չկասկածել, որ ընտանիքի անդամներն ամեն օր օգտվում են դրանցից:

Այդ դեպքում ովքե՞ր են ապրում այս տանը, ինչպիսի՞ կանոնավոր ու կարգասեր մարդիկ: Նրանք երեւի կատարում են երկրաչափորեն ճիշտ շարժումներ, չեն խախտում տտեղից ոչինչ, իսկ եթե խախտում են էլ կարճ ժամանակով, որեւէ իր օգտագործելու համար, ապա նորից, իսկույն, վերականգնում են կարգն ու ներդաշնակությունը...

Ժիրայրի աչքն ընկավ իր բրեզենտե պայուսակին եւ նա իրանի մի ընդոստ շարժումով ձգվեց դեպի այն: Գունաթափված, կեղտոտ, այն նման էր հազար պատահարներով անցած մի փոքրիկ կենդանու՝ հոգնատանջ տեսքով: Դրա վրա, տեղ-տեղ, մի ուղղությամբ ձգված հաստ թելերը քրքրվել թափվել էին եւ մնացել էին միայն դեմկտրուկ ուղղությամբ ձգվող թելերը, կարծես կենդանու մաշկն էր պլոկվել այդ տեղերում եւ տակից երեւում էին կոպիտ մսի հաստ հյուսվածքները: Սիրելի, փոքրիկ կենդանի, Ժիրայրի երկար տարիների ընկերը եւ այժմ միակ հարազատն այդ սենյակում...

Հեռախոսը նորից զանգահարեց, եւ դրա մեղմ հնչյունը նորից ներգործեց Ժիրայրի վրա՝ սառը ջրի սթափեցնող ցնցուղի պես: Նա վեր ցատկեց Բրաբին կանչելու: Արագ բաց արեց դուռը եւ ավելի արագ ծածկեց: Ոչ, դա այն չէ, դա ննջարանի դուռն է: Նա վախեցավ տեսնել այնտեղ ուրիշ տղամարդու գոյության նշաններ: Իհարկե, հագիվ թե մի ուրիշ տղամարդու գոյությունն ավելի խորթ դարձներ նրա համար արդեն իսկ լիովին խորթ այդ բնակարանը, բայց նրա ուղղամիտ խառնվածքին հակառակ բան էր դեսուդեն հոտմտելը, ցույց չտրված բաներն անձնական ջանքերով տեսնելը:

Ժիրայրն իր պայուսակի մոտով դուրս ելավ նախասենյակ, աչքերով փնտրեց վաննայի դուռը: Այն բաց էր: Բրաբին նստել էր վաննայի եզրին՝ մի ոտքը կախ, եւ մտածում էր: Նրա ետեւում խշշում էր ծորակից թափվող ջուրը:

— Բրաբի, հեռախոսը:

Կինն սթափվեց, վեր կացավ, Ժիրայրը նրա ետեւից վերադարձավ սենյակ:

Այս անգամ զանգահարում էր ինչ-որ ծանոթ մի կին: Երեւի Բրաբին պայմանավորվել էր հանդիպել նրա հետ եւ երեւի ժամանակն արդեն անցել էր: Խոսելով հեռախոսափողի մեջ, Բրաբին մեքենայական շարժումով նայեց իր թելի ժամացույցին եւ ասաց, որ չի կարող գնալ, որովհետեւ զբաղված է, մարդ է եկել իր մոտ Նա հենց այդպես ասաց՝ «մարդ»: Եվ քանի որ ծանոթուհին պնդում էր, Բրաբին հարկադրվեց ասելու, որ ունի մերժելու շատ կարելու պատճառ, եւ որ հետո ամեն ինչ կբացատրի...

Ժիրայրը շարջումներով հասկացրեց կնոջը, որ կարող է գնալ, ինքն արգելք չի լինի, կմնա տանը կամ դուրս կգա շրջելու: Բայց կինը կտրուկ շարժեց ձեռքը՝ դեմքին տալով այնպիսի արտահայտություն, թե նա առանց այդ էլ չէր ուզում հանդիպել իր ծանոթուհուն, եւ Ժիրայրը հենց հաջող պատրվակ է նրա համար:

— Ջուրն արդեն պատրաստ է,— ասաց կինը՝ ավարտելով խոսակցությունը հեռախոսով:— Փոխնորդ սպիտակեղեն ունե՞ս:

— Այո,— ստեց Ժիրայրը՝ վախենալով, որ նրան կարող են առաջարկել ուրիշ տղամարդու սպիտակեղեն:

Նա դռան մոտից վերցրեց իր պայուսակը, գնաց: Փակեց սենյակի դուռը ներսից եւ լուռ զնայանքով նայեց շուրջը: Երեխա ժամանակ նա հաճախ էր տեսնում երագում, թե ինչպես մի շափահաս աղջիկ, նար ձեռքից բռնած, նրան տանում էր ահա այսպիսի մի շողշողուն սենյակ, թեեւ ավելի մեծ, դահլիճ...

Սենյակը ողողված էր առատ լույսով, որը տաք ջրի պես հորդում էր առաստաղի կենտրոնում եւ երկու տեղով հայելու վերելում ամրացված կիսաթափանց լուսամփոփներից: Պատերը, համարյա մինչեւ առաստաղ, սպիտակ կաֆելի աղյուսակներից էին: Սպիտակ վաննա, լվացարանի սպիտակ խեցի: Փայլում էր ծորակների եւ ցնցուղի նիկելը: Լվացարանի վերելում գտնվող մեծ հայելին իր մեջ վճիտ արտացոլում էր փայլուն շրջապատը: Հայելու տակ՝ ապակյա թարեք՝ նիկելե շրջանակի մեջ առնված, վրան՝ օճառ, օղեկոլոն: Վաննայի կողքի պատի վրա, վաննայի պռունգից մի քիչ բարձր, կաֆելե աղյուսակներից երկուսը դուրս են ցցել երկու թարեքներ, մեկը՝ գոգավոր, օճառի համար, մյուսը՝ տափակ, սունգի: Լվացարանի եւ վաննայի նիկելե ծորակների վրա՝ հախճապակյա պտուտակներ, կապույտ՝ «սառը» եւ կարմիր՝ «տաք» բառերով: Պատի վրա կախարան՝ սպիտակ ներկած փայտից, նիկելե ճաղերով, որոնք ունեն հախճապակյա սպիտակ գլխիկներ: Մի ազատ անկյունում՝ կրեմագույն-սպիտակ աթոռ՝ սպիտակեղենը դնելու համար: Եվ այդ բոլորը՝ երկրաչափորեն կանոնավոր, մաթեմատիկորեն ներդաշնակ, օճառի կտորները՝ դեռ չսկսած, օղեկոլոնի սրվակը՝ նույնպես, երեսսրբիչը՝ ձեռք չտված, սրփիչ-խալաթը՝ թարմության բույր արձակող...

Ժիրայրն իր պայուսակը նետեց աթոռի տակ, ինքը նստեց աթոռի վրա՝ մոռանալով հանվել: Ինչո՞ւ բերեց Բրաբին նրան այստեղ եւ ընդհանրապես ինչո՞ւ եկավ նա այս բնակարանը... Սանդուղքով բարձրանալով երկրորդ հարկ, նա դռներից մեկի վրա տեսավ պղնձե տախտակ՝ իր ազգանունով Գլենց... Բ. Ա. Գլենց: Ուզեց թակել, բայց նկատեց, որ դուռը բաց է: Եվ իր ազգանունը կրող դռնով մտավ ուրիշի տունը...

Մոտ երկու տասնյակ տարի առաջ, նա, եռանդով լի երիտասարդ, համատեղ կյանք սկսեց մի խելոք ու նվիրված աղջկա հետ: Դրանից առաջ նրանք քսան տարի եւ տասնյոթ տարի ապրել էին առանձին-առանձին: Այժմ, միանալով, նրանք ծրագրել էին ե՛լ լավ բնակարան ունենալ, ե՛լ լավ հագնվել, ե՛լ լավ ապրել, ե՛լ երեխաներ ստեղծել, ե՛լ բարձրագույն կրթություն ստանալ, ե՛լ լավ գործեր կատարել հանուն հայրենիքի ու սեփական բավականության: Կյանքը նրանց առջելումն էր, եւ նրանք անշուշտ կիրագործեին իրենց ծրագիրը:

Բայց Ժիրայրը գնաց իրենից բոլորովին անկախ պատճառներով եւ Բրաբին մենակ, առանց նրա, շարունակեց կյանքը եւ հասավ այդ ամենին: Ի՞նչ մաս ունի Ժիրայրն այդ ամենի ստեղծման մեջ... Ուրեմն ինչո՞վ է սա իր տունը, ինչո՞վ են Հովիկն ու աղջիկը նրա զավակները: Նա ոչ միայն չի փայփայել ու դաստիարակել նրանց, այլև չի կարողացել դեղ անգամ հասցնել տղային նրա հիվանդության ժամանակ, իսկ աղջկան չի էլ տեսել, չգիտե անգամ նրա անունը...

Եվ այժմ նա լողանալու է ուրիշի վաննայում, օգտվելու է ուրիշի օճառից ու սպունգից, մարմինը չորացնելու է ուրիշի սրբիչով, հագնելու է ուրիշի սրբիչ-խալաթը: Դրանք բոլորն

ստեղծվել են երկրի դժվար ջանքերով, որոնց մեջ ոչ մի մասնակցություն չունի Ժիրայրը, եւ պատկանում են Բրաբիին, որին ոչնչով չի օգնել նույն անկոչ Ժիրայրը:

Քսան եւ տասնյոթ տարի առանձին-առանձին եւ ապա նորից տասնվեցական տարի առանձին: Նրանք առանձին ապրել են մի ամբողջ կյանք: Եվ միայն երեք տարի են եղել միասին: Բայց քիչ են պատահում ծանոթություններ, մտերմություններ, որոնք տեսում են երկու տարի, երեք, չորս, եւ հազիվ մի տասնյակ տարի անց՝ մոռացվում են համարյա բոլորովին: Պարտադիր է ուրեմն, որ միասին ապրած այն փոքրիկ ժամանակաշրջանը, երեք տարին, ստիպի նրանցից մեկին՝ պարտավոր զգալ իրեն, իսկ մյուսին՝ իրավունք համարել իրեն՝ վերականգնելու երբեմնի համատեղ կյանքը, որը, իրերի բերումով, մի կարճատեւ էպիզոդ է եղել նրանց համար...

Ինչո՞ւ եկավ նա այս բնակարանը, ինչո՞ւ... Մի՞թե կարելի էր այնքան կորցնել ռեալականության զգացումը, որ կարծել, թե, իրոք, նա կարող էր գտնել այստեղ նախկինը, այն էլ՝ անխախտ վիճակում: Իսկ այժմ, երբ տեսավ, որ այդպես չէ, ինչո՞ւ է շարունակում մնալ այստեղ: Հանուն երեխաների՞: Ո՞ւմ երեխաների, ի՞ր: Բայց ինչո՞վ են նրանք իր երեխաները: Մե՞ծ սխրագործություն է՝ լինել նրանց սաղմնավորողը: Բիոլոգիական հայր, ճի՞շտ է: Եվ ուրիշ ոչի՞նչ: Իսկ չէ՞ որ հայրը՝ դա աշխարհի չափ մեծ հասկացողություն է եւ ոչ թե լոկ արու...

Ժիրայրը մի պահ վճռեց իսկույն գնալ բնակարանց, այլեւս չվերադառնալ: Նա եւ Բրաբին չունեն խոսելու ոչինչ, որոշելու ոչինչ: Ամեն ինչ որոշ է...

Նա նույնիսկ ընդոստ վեր կացավ աթոռից, բայց նորից հիշեց՝ երեխաները... Այնուամենայնիվ, շատ հետաքրքիր է, թե ինչպիսիք են նրանք, նմա՞ն են արդյոք իրեն: Համենայն դեպս բիոլոգիական հայր լինելն էլ ունի որոշ նշանակություն, իսկապես: Մյուս կողմից, գուցե երեխաներն իրենք էլ կուզենան տեսնել իրենց բիոլոգիական հորը...

Նա տխուր ժպտաց իր բառերի վրա եւ սկսեց հանվել:

Չուրը վաննայում այլեւս չէր խշշում, շիթն այլեւս անկման տեղ չուներ, այն համարյա կպել էր պռունգե-պռունգ լցված վաննայի մակերեսին: Վաննայի եզրի մոտի ապահովիչ անցքով ավելորդ ջուրը հոսում էր ներքեւ՝ դեղին կաֆելե հատակի տակ ինչ-որ տեղ:

Ժիրայրը ձեռքով փորձեց ջուրը եւ սրսափաց: Այն սառցային սառն էր: Բրաբին մոռացել էր բաց անել տաք ջուրը:

Նա փակեց ծորակը: Ձգելով վաննայի հատակի խցանի շղթայիկը, բաց արեց անցքը, դուրս թողեց ջրի մեծ մասը: Ապա նորից փակելով այն, բաց արեց տաք ջուրը: Սպասելով դրա լցվելուն, մոտեցավ հայելուն: Բայց տաք ջրից սենյակն անմիջապես լցվել էր գոլորշիով եւ հայելին պատել քրտինքով: Ժիրայրը չտեսավ իրեն այնտեղ: Նա ավիով սրբեց մաքրեց շրջանաձեւ մի տարածություն: Դիմացից նրան նայեց երեսունիննամյա տղամարդու դեմքը, որ կարծես հարցնում էր. «Դո՞ւ... Ի՞նչ գործ ունես դու այստեղ»... Մտախոհ, թախծոտ աչքեր, տառապած մարդու դեմք՝ ոչ նիհար, բայց կրածի անջնջելի դրոշմով: Խիտ մազեր, բայց արդեն ճաղատացող ճակատ: Իսկ ինչպիսի՞ն էր այն մյուս Ժիրայրը, հինը... Չի հիշում: Դրա փոխարեն նա շատ լավ հիշում է Բրաբիին: Այժմ նա շատ է գիրացել: Գուցե եւ ոչ շատ, բայց նեղ թեւերով պիրկ հագուստի մեջ նրա մարմինը թվում է նեղված: Դեմքը նույնպես, զգալիորեն կլորացել է, բայց գուցե դա եւս թվում է միայն,

որովհետև նա կտրել է իր երկար հյուսերը եւ այժմ ունի կարճ մազեր՝ առջելից հարթ, իսկ ետելից գանգրացրած:

Մի՞թե կարող է այդքան փոխվել մարդկային դեմքը: Մանավանդ՝ աչքերը: Դրանք ուրիշ աչքեր են՝ համարձակ, զգաստ: Փոխվել են նաեւ շրթունքները, դրանք երեւի կարգադրություններ անելու սովորած մարդու շրթունքներ են: Ինչո՞ւ թվարկել ամեն մի դիմագիծը, Բրաբին ամբողջովին է փոխվել:

«Ես այդպիսի կնոջ չէի կարողանա սիրել»,— ակամայից անցավ Ժիրայրի մտքով: Բայց նա ճիգով մի կողմ հրեց այդ անտեղի միտքը: Եթե նա այդ բոլոր տարիներին լիներ Բրաբիի հետ, չէր էլ նկատի նրա այդքան փոխվելը:

Բայց հանկարծ Ժիրայրը մտածեց, որ եթե այդ բոլոր տարիներին նա լիներ Բրաբիի հետ, Բրաբին կփոխվեր գուցե եւ ճիշտ այդքան, բայց ոչ այդպես, այլ մի ուրիշ կերպ: Չի կարելի ասել, թե այժմ նա վատացել է, գուրկ է կանացի հմայքից, բայց կա նրա մեջ ինչ-որ անսխալ բան, որը, կասկած չկա, արդյունք է նրա ապրումների, ամուսնու հետ այդպես ողբերգորեն անջատվելու...

Վաննան... Ժիրայրը կտրուկ շուռ եկավ, նայեց: Այս անգամ արդեն, այն լիք-լցված էր տաք ջրով: Այդպիսով սառը ջուրն ու տաք ջուրը մինչեւ երեկո կարող են մուկ ու կատու խաղալ իրար հետ...

Նա բաց թողեց ջրի մեծ մասը, ապա զովացրեց մնացածը եւ, հանելով իր կոպիտ ոտնամանները, գունաթափ բուշխտը, կանաչավուն վերնաշապիկը, երկու տեղով կարկատված անդրավարտիքն ու կեղտոտ սպիտակեղենը, մտավ վաննա: Երանության մի վաղուց չապրած, գուցե եւ երբեք չապրած զգացում պաշարեց Ժիրայրին եւ նա բավականությունից փակեց աչքերը:

Այնուամենայնիվ, երբեմն որքա՛ն անմիջականորեն է կապված լինում մարդու կենդանագացումը նրա ֆիզիկական կեցության հետ: Սոված ես մտածում որեւէ նյութի մասին, թե կշտանալուց հետո՞ դրանք տարբեր բաներ են:

Վաննայից դուրս գալուց հետո Ժիրայրը փառավոր լավատեսական տրամադրության մեջ էր: Եվ իսկապես, ի՞նչ հիմք կա հոռետեսության: Բրաբին, ինչպես երեւում է, չի մոռացել նրան, ահա չի փոխել նույնիսկ ազգանունը: Տարիներ շարունակ գուցե մտածել է, թե Ժիրայրը մահացել է, դրա համար էլ անսպասելի եղավ ամուսնու հայտնվելը: Իսկ խորթության զգացումը՝ թե Բրաբիի մոտ եւ թե նրա, կանցնի, պետք է որ անցնի...

Սենյակ մտնելով, Ժիրայրը տեսավ մի տոմսակ՝ սեղանի վրա: Բրաբին էր գրում նրան: Դուրս է գնում կես ժամով: Եթե կզանգահարեն՝ այդպես էլ հայտնել: Իսկ Ժիրայրը կարող է հանգստանալ ճաշասենյակի բազմոցի վրա: Եթե կուզենա զբաղվել որեւէ բանով՝ թող միացնի ռադիոընդունիչը, կամ վերցնի որեւէ գիրք, կամ աչքի անցկացնի լուսանկարների ալբոմը, որը գտնվում է ննջարանում, անկյունի սեղանակի վրա: Այսօրվա թերերը դեռ չեն ստացվել...

Բայց ոչ, ներկա դեպքում խորթության երկուստեք զգացումը հանդիպման առաջին պահի այն սովորական զգացումը չէ, որն անցնում է շուտով: Գլենցների ընտանիքը վաղուց ի վեր դուրս է գրել նրան իր հաշվից: Եթե մինչեւ իսկ նրա թափուր աթոռը չի զբաղեցրել մի ուրիշը, ապա աթոռն ինքն այլեւս չկա: Կինը վաղուց է վարժվել, որ ամուսին չունի, երեխաները՝ որ հայր չունեն:

Սպասիր, ալբոմը... Ի՞նչպես նա չմտածեց իսկույն այդ մասին: Չէ՞ որ նա այնտեղ կարող է տեսնել իր զավակների լուսանկարները...

Ժիրայրն արագ մտավ ննջարան, առանց շուրջը նայելու վերցրեց ալբոմը եւ ելավ դուրս: Դնելով սեղանի վրա, մի պահ նայեց կազմին: Ո՞րտեղից Գլենցների տանն այսպիսի հնամյա, ընտանեկան շքեղ ալբոմ՝ թավշե կազմով, պղնձե փականքով: Ո՞չ Բրաբիի գյուղացի ծնողները կարող էին ունենալ այդ եւ .՛չ էլ ունեին Ժիրայրի հանգուցյալ ծնողները: Եվ ընդհանրապես, ո՞րտեղից այս տանն այս կուլտուրան, ո՞րտեղից նոր Բրաբին, նրա հեռախոսը, նրա տեղակալը...

Ըստ երեւույթին տասնվեց տարվա, երկու ամսվա եւ տասնհինգ օրվա դատարկ ընդմիջումը բոլորովին էլ դատարկ չի եղել, բոլորովին...

Ժիրայրը բաց արեց ալբոմը եւ սկսեց դանդաղ թերթել:

Սկզբում նա դեռ չէր կարողանում ճանաչել իր երեխաներին, որովհետեւ ալբոմում կային նաեւ ուրիշները: Ապա, սկսած մի լուսանկարից, ճանաչեց: Դա ծանր տպավորություն թողնող լուսանկար էր, անախորժ լուսանկար: Այնտեղ նստել էր Բրաբին՝ թխամոր պես իր ձագերին թելերի տակ առած, եւ տազնապալի աչքերով նայում էր ուղղակի աչքերիդ: Նա նույնիսկ առաջ էր մղվել իրանով՝ կարծես պատրաստվելով օրհասական պայքարի մեջ մտնել ուրուրի հետ: Այդ նկարի վրա նա դեռ նիհար էր, աղքատիկ հագուստով, դեռ Ժիրայրի ճանաչած Բրաբին: Ապա, հաջորդ էջերի վրա, նա սկսեց գիրանալ, նրա շրթունքներն սկսեցին ստանալ ավելի եւ ավելի խիստ արտահայտություն, անդրդվելիության դարձվածք: Իկս այն սակավ նկարների վրա, որտեղ նա ժպտում էր, նրա ճակատի, կզակի, այտերի, աչքերի յուրջ ու խիստ արտահայտությունը բոլոր կողմերից շուրջկալել էր ժպիտը՝ թույլ չտալով նրան ծավալվել, ընդարձակվել: Դա հոգուց եկած ժպիտ չէր:

Ժիրայրը շուտով նորից կորցրեց իր երեխաներին, կսկվեցին մեծ ու փոքր խմբերով երեխաների նկարներ: Նույնիսկ այնտեղ, որտեղ նկարված էին ընդամենը երկու-երեք հոգի, նա չէր կարողանում որոշել, թե դրանցից որոնք էին իր տղան ու աղջիկը եւ որոնք՝ նրանց ընկեր-ընկերուհիները:

Ալբոմը լիքն էր անծանոթ երեխաներով, անծանոթ կանանցով, անծանոթ տղամարդկանցով: Ահա Բրաբին՝ ծովափում՝ լողահագուստով: Նկարի ներքեւի մի անկյունում սպիտակ տառերով գրված է՝ «Գուրգուֆ» եւ նշված է տարեթիվը: Ահա նորից Բրաբին, նորից ծովափում, տղամարդկանց ու կանանց մի փոքր ընկերախմբի մեջ, այս անգամ՝ «Սոչի» մակագրությամբ, այլ տարվա լուսանկար: Պիոներներ՝ ճամբարում: Բրաբին՝ երկու երիտասարդների հետ, գրքերը թելի տակ, ինչ-որ երեքհարկանի շենքի մուտքի մոտ: Մուտքի դռան վրա տախտախ՝ «Ինստիտուտ»: Ավելի մանր տառերը չեն կարդացվում: Ահա սիրողական անվարժ լուսանկար՝ մի տղամարդ խորոված է պատրաստում ծառերի տակ, իսկ նրան օգնում են ուրիշները, դրանց թվում՝ նաեւ Բրաբին: Մայիսմեկյան ցույց, Բրաբին քայլում է մի տղամարդու եւ մի կնոջ թեւանցում արած: Բրաբին իր տանը, լուսամուտի մոտ՝ դարձյալ սիրողական անվարժ լուսանկար, գուցե Հովիկի առաջին փորձերից: Էլի զանազան երեխաներ: Բրաբին՝ մի տղամարդու հետ գրկախառնված: Բայց դա ինչ-որ ներկայացումից է, նրանք դերերի մեջ են: Ահա մի անծանոթ տղամարդ՝ գեղեցիկ արտաքինով: Եվս մի տղամարդ՝ նույնպես գեղեցիկ...

Ժիրայրը մի տանջալի շարժումով փակեց ալբոմը՝ առանց նայելու մինչև վերջ: Նա հասկացավ գլխավորը, ամենաէականը.— երեքշաբթի օրվանից մինչև ուրբաթ անցել է մարդկային մի ամբողջ կյանք՝ լի ե՛լ դառնություններով, ե՛լ ուրախություններով: Այնտեղ եղել են ե՛լ մանկապարտեզ ու դպրոց, ե՛լ ինստիտուտ ու աշխատանք, ե՛լ ճամբար ու ծովափ, ե՛լ տղամարդիկ,— ամեն ինչ ինչպես կյանքում...

Նախասենյակում լավեց խշխշոց: Բայց ոչ ոք ներս չէր մտնում: Ժիրայրը գնաց ընդառաջ: Մարդ չկար: Փոստատարը դրսից աշխատում էր փոստարկղ խոթել լրագրերի սովոր տրցակը: Ավարտելով, նա գնաց: Լավեց նրա ոտքերի քստքստոցը հաշորդ հարկի սանդուղքի վրա:

Ժիրայրը հանեց լրագրերը, վերադարձավ սենյակ: Ուզեց կարդալ, բայց նրա աչքն ընկավ ալբոմին: Ալբոմն իր տեղում չէր եւ խանգարում էր: Նա տարավ ննջարան: Ետ գալով, նկատեց, որ անփույթ շարժումով սեղանի վրա նետած լրագրերը խախտել են սենյակի երկրաչափական խստաբարո կարգը: Հավաքեց, ավերով հավասարեցրեց տրցակը եւ դեռ չէր վերցրել լրագրերից մեկը՝ կարդալու, երբ մտավ Բրաբին:

— Չուշացա՞:

— Ինչի՞ց պիտի ուշանայիր:

— Կես ժամից:

— Երեւի ոչ: Ես ժամացույցին չեմ նայել:

— Չանգ տվող չի՞ եղել:

— Ոչ:

— Լավ լողացա՞ր:

— Այո: Վաննան եւ վաննայի սենյակը մաքրեցի: Ամեն ինչ կարգին է:

— Ոչինչ, ես նորից կմաքրեմ: Տղամարդը չի կարող կնոջ պես: Դե, պատմիր, Ժիրայր:

— Ի՞նչ պատմեմ: Չէ՞ որ մենք պայմանավորվեցինք չխոսել անցյալի մասին:

— Էլ ուրեմն ինչի՞ մասին խոսենք՝ եթե ոչ անցյալի,— ներողամիտ ժպտաց Բրաբին:— Քո անցյալի, իմ անցյալի:

— Քո անցյալի մասին կարող ենք խոսել, ինչո՞ւ չէ,— համաձայնվեց Ժիրայրը:— Ասա... շա՛տ դժվար էր քեզ համար սկզբում...

Բրաբին փակեց աչքերը, բաց արեց եւ ասաց անարտահայտիչ ձայնով.

— Հիմա արդեն չեմ հիշում: Ազնիվ խոսք:

— Լավ, չխոսենք նաեւ քո անցյալի մասին,— գլխով արեց Ժիրայրը:

«Իլ ինչի՞ մասին, իրոք որ»,— անցավ նրա մտքով: Եվ կարծես ի պատասխան դրա, Բրաբին ասաց.

— Մի երկու ժամից երեխաները կգան:

Ուզում էր Բրաբին այդ, թե ոչ: Բայց այնպես ստացվեց, որ միակ բանը՝ Ժիրայրին այդ տան հետ կապող, մնացին միայն երեխաները: Ժիրայրի ներկայությունը բնակարանում վերածվեց լոկ երեխաների սպասման:

— Գուցե ես մինչև այդ դուրս ելնեմ, թանոթանամ մեր քաղաքի հետ,— ասաց նա:

— Ինչպես ուզում ես: Անշուշտ նաեւ տեղեր կունենաս գնալու: Բայց ոչ, այսօր դեռ ոչ մի տեղ մի գնա: Շտապ չէ:

— Եվ չունեմ էլ գնալու: Մեր հիմնարկը չեմ ուզում մտնել...

— Չես էլ կարող: Քո հիմնարկը լուծարքի է ենթարկվել դեռ երեսնական թվերի վերջերին:

— Ուրիշ տեղ եւս չունեմ գնալու: Ազգականներ չունեմ, ծանոթներ՝ նույնպես, իսկ ում ունեցել եմ՝ հիմա չեմ հիշում: Կուսակցական չեմ եղել, որ ներկայանամ կոմիտե: Կշրջեմ հենց այնպես: Կայարանից գալիս նկատեցի, որ քաղաքը շատ է փոխվել: Հենց թեկուզ դեպի կենտրոն եկող փողոցը: Դա միանգամայն նոր է:

— Բոլորովին էլ նոր չէ, դու պարզապես մոռացել ես,— ներողամիտ ժպտաց Բրաբին:— Արդեն մեկուկես տասնյակ տարի է, ինչ գոյություն ունի:

— Այո, բայց ես բացակայել եմ տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օր,— հիշեցրեց Ժիրայրը:

Նա ելավ դուրս:

3

Հազիվ իջնելով առաջին հարկ, Ժիրայրն զգաց որ բան է մոռացել տանը: Հիշեց իսկույն՝ պայուսակը: Նա նույնիսկ մի մեքենայական, համարյա բնագոյական շարժում արեց վերադառնալու, բայց ստիպեց իրեն՝ շարունակելու ճանապարհը:

Ուրեմն, ի՞նչ կատարվեց նրա հետ: Անհամբերությունից այրվելով նա վերադարձավ Երեւան, տազնապով փնտրեց գտավ իր կնոջ հասցեն, սրտատրոփ մտավ նրա բնակարանը եւ... եւ տոմսակ թողեցին նրա համար՝ պատվիրելով հայտնել հեռախոսով հարցնողներին, որ Բրաբին կվերադառնա կես ժամից... Կարծես նա բացակայել էր ոչ թե տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օր, այլ միայն վերջին տասնհինգ օրը...

Բայց գուցե կինը դիտմամբ ստեղծեց այդպիսի առօրյա փոխհարաբերություններ հենց առաջին րոպեներից, որպեսզի Ժիրայրն իրեն զգար ինչպես իր տանը, մոռանար սարսափելի մեծ ընդմիջումը:

Իհարկե, այդ այդպես չէր: Բայց եթե նույնիսկ այդպես լիներ, նման մտադրություն ունենար Բրաբին, ի՞նչպես կարելի էր կարծել, թե դա խելոք բան է, թե կարելի է մոռանալ ընդմիջումը՝ հենց միայն ձեւացնելով, թե այն չի եղել: Ընդմիջումը խիստ մեծ էր՝ մոռանալու համար: Ոչ թե մոռանալ է հարկավոր այն, դա անհնար է, այլ հաղթահարել:

Ոչ, իհարկե, Բրաբին չունեւ էլ այդպիսի անլուրջ մտադրություն: Նա պարզապես ուզում էր ժամանակ շահել, որովհետեւ, հանկարծակիի եկած, դեռ չգիտեր իր անելիքը...

Ժիրայրը հիշեց, թե ինչպիսի անկեղծ զարմանքի տոնով կինը հարցրեց նրան. «Էլ ուրեմն ինչի՞ մասին խոսենք՝ եթե ոչ անցյալի»: Նա այնպիսի բնական տարակուսանքով ասաց այդ, որ մի պահ Ժիրայրին էլ թվաց, թե կինն իրավացի է, թե չկա խոսելու ուրիշ նյութ:

Իսկ ապագա՞ն... Մի՞թե նրանք ոչինչ չունեն ասելու իրար այդ մասին եւ մի՞թե դա շատ ավելի կարելուր չէ, քան անցյալի մասին խոսելը: Ընդ որում, ապագայի մասին պետք է խոսել իսկույն, անմիջապես, որովհետեւ ժամանակ չկա սպասելու, նրանց անցյալի եւ ապագայի միջեւ չկա ներկայի ոչ մի շերտ: Այն վայրկյանին, երբ Ժիրայրը խզված ձայնով ասաց՝ «Բրաբի», եւ կինը, շուռ գալով, տեսավ ու ճանաչեց նրան, անցյալն ավարտվեց եւ անմիջապես սկսվեց ապագան:

Դե ինչ, թող մտածի Բրաբին: Պակաս մտածելու բան չունի նաեւ Ժիրայրը: Ի՞նչպես կարելի է պահանջել ուրիշից, երբ ինքդ էլ դեռ չես կարողանում որոշել ոչինչ: Իսկ չկարողանալու պատճառն այն է, որ խիստ մեծ է կոնտրաստն իրականում անցած ժամանակի եւ քո մտապատկերների մեջ կանգ առած ժամանակի միջեւ:

Ժամանակի ընթացքի այն կասեցումը, որին ակամայից, անգիտակցորեն, ձեռնարկել էր Ժիրայրն այն երեքշաբթի օրվանից, իհարկե, լիակատար անմտություն էր: Դա նման էր այն բանին, երբ մարդ, իր աչքերի առաջ տեսնելով մի սարսափելի դեպք, իրեն հասած մի դժբախտություն, աչերն է փակում, իրեն է խաբում, թե չի կատարվել այդ դեպքը: Դա դժբախտություն կրող մարդու առաջին բնական ռեակցիան է դժբախտության հանդեպ: Առանց դրա կարելի է խելագարվել: Ու թեեւ գիտակցությունդ հեզնում է քո արածը, ծիծաղում է անմիտ ձեռնարկությանդ վրա, խորհուրդ է տալիս բացել աչքերդ եւ շեշտակի նայել իրականությանը, բայց դու ավելի եւ ավելի ամուր ես սեղմում կոպերդ...

Եվ ահա, քո աչքերը բաց են...

Այն, որ նրանց անջատումից հետո անցել է այդքան մեծ ժամանակ եւ կյանքում եւ կյանքում կատարվել են այդքան շատ փոփոխություններ, դա ինքնին դեռ չի կարող դժվար կացություն ստեղծել ամուսինների միջեւ՝ եթե նրանք երկուսն էլ մնացած լինեին նույնը, նախկինը: Սակայն խնդիրը հենց այն է, որ ժամանակի ընթացքում եւ կյանքի հետ միասին փոխվում են նաեւ մարդիկ իրենք: Այն դեպքում, երբ նրանք միասին են ամբողջ ժամանակ, ապա չեն նկատում միմյանց փոխվելը, իսկ եթե նկատում են էլ, դարձյալ ոչինչ, որովհետեւ նրանք փոխվում են միմյանց հետ կապակցված, միմյանց վրա ներազդելով: Նրանցից յուրաքանչյուրի կրած փոփոխությունները նրանց երկուսի ընդհանուր փոփոխություններն են:

Բայց Բրաբին ու Ժիրայրը մի հսկայական ժամանակաշրջան եղել են իրարից առանձին: Եվ այժմ նրանք անճանաչելիորեն ուրիշ են իրար համար, օտար եւ խորթ...

Խնդիրն ավելի է բարդանում այն պատճառով, որ դրա հետ միասին Ժիրայրի զգացումների աշխարհը չի փոխվել եւ մնացել է կոնսերվացիայի ենթարկված: Եթե նա էլ հասունացած լիներ Բրաբիի պես, ապա գուցե կարելի կլիներ գտնել նրանց միջեւ հետզհետեւ մտերմանալու եզրեր.— հանդիպել են երկու չափահաս, ինքնուրույն մարդիկ, մեկը՝ երեսունինը տարեկան, մյուսը՝ երեսունվեց, եւ ուզում են վերականգնել իրենց երբեմնի համատեղ կյանքը: Ճիշտ է, միմյանց հետ շատ քիչ ապրած եւ միմյանցից շատ երկար ժամանակով բացակայած լինելու հետեւանքով այժմ նրանց մտերմությունը նման կլինի ոչ թե հինը վերականգնելու եւ շարունակելու, այլ համարյա նոր կյանք սկսելու, բայց ի՞նչ կա որ, կարելի է եւ այդպես:

Բայց ներկա դեպքում հնարավոր չէ նաև այդ, որովհետև Ժիրայրը երեսունինը տարեկան չէ, այլ քսաներեք, որը դեռ նոր է սկսելու իր իսկական կյանքը, կրթությունը, ճանապարհին աշխարհում: Քարացումից արթնացած նրա երիտասարդ հոգին բոլորովին հասունացած չէ տասնյոթ տարեկան տղայի եւ տասնվեց տարեկան աղջկա հայր զգալու համար իրեն: Նա դեռ չի ճաշակել նոր ոտք ելնող եւ նոր լեզու առնող երեխայի պատճառած երջանկությունը: Իր ծնկան վրա նստեցրած, նա դեռ ցույց չի տվել իր զավակին առաջին տառը: Նա դեռ չի էլ պատկերացնում իրեն երկու եւ ոչ թե մի երեխայի հայր...

Նրանց բնակարանի երբեմնի թարեքները... Թարեքներ՝ գրքերի համար, թարեքներ՝ ամանեղենի համար: Անկատար է մնացել այն մեծ բավականությունը, երբ բնակարանիդ համար գնած որևէ նոր կարասիով դու հեշտացնում ես կյանքը կնոջդ համար: Նա դեռ չի տեսել, թե ինչպես ուրախ երգում է Բրաբին քթի տակ՝ գրքերն ու ամանեղենը թարեքների վրայից փոխադրելով պահարան եւ շունչ առնելով հանգիստ: Այժմ նա ամեն օր հարկադրված չի լինելու փոշուց սրբել յուրաքանչյուր գիրքը կամ ափսեմ, բավական կլինի սրբել միայն պահարանը:

Պահարանն ի՞նչ, դա չնչին բան է կյանքում: Ժիրայրը դեռ չի ապրել գլխապտույտ առաջացնող այն երանությունը, երբ աշխատասենյակդ է մտնում մի մարդ,— վարիչն է դա, թե պրոֆմիտյան տեղկումի քարտուղարը,— եւ հայտարարում.

— Գլենց, գործերը հանձնիր, դու գնում ես սովորելու:

Կամ գուցե այլ ձեւով էր կատարվելու դա, ի՞նչ կարելու է ձեւը: Հաստատ է միայն այն, որ Ժիրայր Գլենցը հավիտյան չէր մնալու մի փոքրիկ հիմնարկի գործավար, այլ ստանալու էր բարձրագույն կրթություն:

Ոչ, նա դեռ չի ապրել այդ ամենը եւ էլի հազարավոր ուրիշ բաներ, որոնցից բաղկացած է կյանքը: Կասեցնել ժամանակն արտաքին աշխարհում Ժիրայրը չի կարողացել եւ չէր էլ կարող, բայց ժամանակը նրա ներքին աշխարհում, նրա հոգու մեջ, կանգ է առել այն անջնջելի երեքշաբթի օրվա վրա...

Ժիրայրը հանկարծ նկատեց, որ քայլելով փողոցներով, չի էլ նայում շուրջը: Ծիգով ստիպեց իրեն՝ կտրվել մտքերից: Դա դժվար էր միայն առաջին պահին: Այնուհետև նա իսկույն կյանվեց շրջապատով, որն այնքա՛ն շքեղ էր իր երբեմնի գիտեցածից:

Ժիրայրի առաջին տպավորությունը, դեռևս կայարանից քաղաք գալիս, այն էր, որ նա խոր ընկղմված է փողոցի մեջ: Այժմ նա հասկացավ. դա նրանից էր, որ շենքերն այժմ ավելի բազմահարկ էին: Համատարած շքեղությունը նրա երկրորդ տպավորությունն էր: Ծքեղ էին վարդագույն քարերից կառուցված շենքերը, շքեղ էին ցուցափեղկերը, շքեղ էր վաղ-գարնանային, բայց արդեն շոգ արեւն այդ ամենի վրա:

Եվ, իհարկե, շքեղ էին մարդիկ, հատկապես երիտասարդությունը: Ծքեղ էին ե՛ւ իրենց լավ հագուստներով, ե՛ւ ամենից առաջ, դեմքերով ու կազմվածքներով: Դրանք ուրիշ, ավելի հարուստ եւ ավելի կուլտուրական քաղաքի բնակիչներ էին, քան Ժիրայրի գիտեցած երբեմնի Երեւանն էր: Բայց նրանք չէին եկել ոչ մի տեղից, նրանք աճել էին հենց այդտեղ, զավակներն էին Ժիրայրի ու Բրաբիի պես նիհար, վատ հագնված, փոքր աշխատավարձ ստացած երբեմնի երիտասարդների...

Հանկարծ Ժիրայրը մտածեց, որ գուցե հենց այս րոպեիս նրա կողքով անցնում են նրա տղան կամ աղջիկը: Ի՞նչպես ճանաչել նրանց: Նա սկսեց ուշադիր նայել մարդկանց դեմքերին: Բայց դա անհույս գործ էր եւ նա շուտով թողեց այդ: Ավելի հուսալի էր, թեկուզեւ շատ քիչ հավանական, տեսնել որեւէ հին ծանոթի: Բայց ո՞ւմ: Ժիրայրը չէր հիշում ոչ ոքի: Բայց դա ոչինչ: Եթե տեսնի՝ կհիշի իսկույն: Այդպես էր թվում նրան:

Փողոցի մի հատվածում նա տեսավ երկհարկանի մի հին տուն՝ բազմահարկ շենքերի միջեւ իր գոյությունը դեռ պահպանած: Ճանաչեց, ուրախացավ: Բայց եւ անդրադարձավ իսկույն՝ ինչո՞ւ է ուրախանում...

Իսկապես, ինչո՞ւ է ուրախանում: Նրա՞ համար, որ հանդիպեց հին ծանոթի: Բայց այդ հին ծանոթն այնքա՛ն ժամանակավրեպ է շրջապատի բազմահարկ շենքերի միջեւ: Ճիշտ եւ ճիշտ Ժիրայրի նման: Ի՞նչ կա այդտեղ ուրախանալու: Ինչո՞ւ փնտրել անցյալի կռվանները եւ կառչել դրանցից: Ընդհակառակը, հարկավոր է մերվել նորի հետ, իսկ ուրախանալ հարկավոր է անցյալի ոչ թե կոնսերվացած թանձրակների համար, այլ անած ու փոխված ծիւղերի...

Որ Ժիրայրը ետ է մնացել կյանքից՝ դա դաժանորեն վատ է: Մակայն առավել եւս վատ է, որ նա ետ է մնացել իր տարիքից: Քսաներեքամյա երիտասարդ՝ արդեն ճաղատանալ սկսող գլխով, ճակատի վրա երկու խոր ծալքերով, միջին տարիքի մարդու բավական լիքը կազմվածքով եւ ապրած կյանքի ողջ բովանդակությունն արտահայտող, ոչ հոգնած, բայց հարկ եղածից ավելի լուրջ, թախծոտ աչքերով...

Ոչ, բոլոր անցորդներն անձանոթ են, չկա դրանց մեջ ուրեւէ մեկը, որին ճանաչի Ժիրայրը:

Բայց դա գուցե պատահական բան է: Պարտադիր հո չէ՞, որ առաջին իսկ օրը, շրջագայության առաջին իսկ րոպեներին, ծանոթներ հանդիպեն այսպիսի բավական մեծ քաղաքում: Նույնիսկ դրա մշտաբնակիչները, անշուշտ, ամեն անգամ փողոցով անցնելիս չէ, որ առիթ են ունենում բարեւել որեւէ մեկին:

Մարդիկ ի՞նչ, երբ Ժիրայրին անձանոթ են նույնիսկ շենքերը: Դրանք բոլորը նոր են: Ի դեպ, դա գուցե նրանից է, որ Ժիրայրն առայժմ շրջում է քաղաքի կենտրոնական փողոցներով:

Անախորժության զգացումը, ինչպես որեւէ անհամ բան ուտելուց հետո, պաշարել էր Ժիրայրին եւ մի տեսակ դառնահամով էր լցրել նրա բերանը: Նա այսպես չէր պատկերացնում իր վերադարձի առաջին օրը: Նրան թվում էր, թե դա նշանավորվելու էր անմոռանալի դեպքերով՝ ընտանիքի հետ խելահեղ ջերմ հանդիպումով, փողոցում բազմաթիվ ծանոթ մարդկանց բուռն ողջույններով եւ էլի ուրիշ բաներով, որոնք նրա մտապատկերներում չունեին որեւէ կոնկրետ կերպարանք, բայց որոնց այնքա՛ն համառ բաղձում էր նրա հոգին:

Փողոցի անկյունում Ժիրայրը նկատեց լրագրերի մի կրպակ: Մոտեցավ: Գուցե հայրենիքի կամ միջազգային կյանքո՞ւ որեւէ դեպքով նշանավոր է այս օրը:

Նա գնեց մի թերթ, հագիվ նայեց վրան եւ այլեւս բաց չանելով, անախորժությամբ դրեց տեղը եւ շարունակեց ճանապարհը: Ոչ, ուրիշ բան է նրան հարկավոր: Հարկավոր են նվազ եւ խնդություն, ցնձալի աղաղակներ եւ նորից նվազ: Իսկ շուրջն ամեն ինչ առօրյա է, թեկուզեւ շքեղ, թեկուզեւ կենսախիճ, վաղ գարնանային:

Բայց ինչի՞ առթիվ է Ժիրայրը բաղձում ընդհանուր ցնծություն: Ի՞նչ է պատահել առանձնապես: Եվս մի մարդ վերադարձել է իր Ժողովրդի գիրկը: Ի՞նչ կա այդտեղ զարմանալի եւ արտակարգ: Ընդհակառակը, զարմանալին եւ արտակարգն անարդարությունն էր՝ այն սեւ երեքշաբթիով սկսված եւ այս վարդագույն ուրբաթով ավարտված: Եվ ահա այժմ նա անցնում է իր քաղաքի գլխավոր փողոցով եւ ոչ ոք նույնիսկ ուշք չի դարձնում նրա վրա: Դրա մեջ կա հուզող բնականություն, վերադարձած մարդու լրիվ ճանաչումն որպես հարագատի: Իսկապես, հարկավոր չէ Ժիրայրին ոչ մի ցնծություն, հարկավոր չէ, որ նա աչքի ընկնի որեւէ բանով, երեւա արտակարգ: Արտակարգն այժմ նրա համար կդառնար արտառոց: Հենց այն բանով կմնա այս առաջին օրը նրա հիշողության մեջ, որ ոչնչով չի տարբերվի հետագա բոլոր օրերից...

Ոչ թե Ժիրայրի, այլ մի ուրիշ մարդու վրա էին ուշադրություն դարձնում համարյա բոլոր անցորդները: Դա մի կին էր, ըստ երեւույթին՝ երիտասարդ, որը դանդաղ քայլում էր Ժիրայրի առջևով, մի քանի քայլ նրանից առաջ: Նա հագել էր սպիտակ լայն վերարկու, որի կոճակներն արձակել էր շոգից եւ այդ պատճառով վերարկուն թվում էր ավելի լայն: Գլխին նա դրել էր նույնպիսի սպիտակ գլխարկ՝ տափակ, ցածրիկ ու կլոր: Միայն նրա կիսակոշիկներն էին ոչ թե սպիտակ, այլ երկնագույն, բայց դա, անշուշտ, նրա զգեստի գույնն էր:

Փողոցով անցնում էին շատ աղջիկներ ու կանայք, բայց նրանցից ոչ մեկը չէր առաջացնում այդպիսի ընդհանուր հետաքրքրություն: Ժիրայրը տեսնում էր, թե ինչպես դիմացից եկողները, տղամարդ, թե կին, տեսնելով արտակարգ անցվորուհուն, անթարթ նայում էին նրա դեմքին, իսկ անցնելով նրա մոտով, շուռ էին գալիս եւ մի երկար հայացք նետում նրա ետևից: Իսկ անցվորուհին, անշուշտ վաղուց ի վեր վարժված այդպիսի հետաքրքրության, գնում էր իր համար, դանդաղ քայլերով, ձեռքերն իր զարմանալին լայն վերարկուի գրպանները դրած:

Այ, այսպես. կարելի է լինել սովորական մարդ՝ առաջին իսկ օրվանից, եւ կարելի է միշտ գտնվել ուշադրության կենտրոնում՝ թեկուզեւ մշտապես ապրելով նույն մարդկանց մեջ: Դե ի՞նչ, մարդիկ ծնվում են տարբեր արտաքիններով եւ տարբեր ընդունակություններով: Ժիրայրը սովորական մարդ է եւ նրա արտաքինն աչքի չի ընկնում ոչնչով: Այժմ դա ամենից ավելի հարկավոր է նրան: Նա անշուշտ պիտի նեղվեր՝ եթե լիներ այդ կնոջ փոխարեն:

Որովհետեւ Ժիրայրն ակամայից հարմարվել էր կնոջ քայլերին եւ գնում էր դրանց համընթաց, կարող էր թվալ, թե հետեւում է նրան: Ուստի եւ որոշեց ետ մնալ կամ անցնել առաջ: Եվ քանի որ նրան եւս, վերջ ի վերջո, հետաքրքրեց, թե ինչի համար են բոլորն այդպես նայում անցորդուհուն, նա արագացրեց քայլերը, առաջ անցավ նրանից, քայլեց էլի որոշ տարածություն եւ կանգ առավ մի ցուցափեղկի մոտ՝ իբր թե դիտելու ցուցադրված իրերը: Չգալով, որ կինն արդեն բավական մոտեցել է, նա շուռ տվեց գլուխը, նայեց նրան:

Առաջին բանը, որ նա նկատեց, դա կնոջ հասկացող հայացքն էր՝ նրա վրա սեւեռված: Ժիրայրը շփոթվեց: Ինչի՞ համար էր նրան հարկավոր այդ պրիմիտիվ խորամանկությունը՝ գուցե դեռ դարեր առաջ արդեն հասկացված: Նա ամաչեց իր արարքից: Մպասեց, որ կինն անցնի, որպեսզի ինքը եւս շարունակի ճանապարհը՝ այս անգամ արդեն հակառակ ուղղությամբ:

Բայց կինը, անցնելու փոխարեն, նույնպես մոտեցավ ցուցափեղկին, կանգնեց Ժիրայրի կողքին եւ սկսեց նայել: Ցուցափեղկի ապակու մեջ Ժիրայրը տեսավ կնոջ հայացքը՝ նրա

վրա ուղղված: Ոչ, այդ արդեն լավ չէ: Ի՞նչ հանցանք գործեց ժիրայրն իր փոքրիկ խորամանկությամբ: Ոչ մի: Ուզեց տեսնել կնոջ դեմքը եւ ուրիշ ոչինչ: Կարելի՞ է դրա համար այդպես պատժել նրան, մոտենալ եւ կանգնել կողքին: Բավական էր նույնիսկ այն, որ նրանց աչքերը հանդիպեցին եւ կինն իր հայացքով զգացնել տվեց, որ նրա խորամանկությունը բացված է: Մի ուրիշ կին այդ էլ չէր անի, այլ կանցներ անտարբեր:

Ժիրայրն սպասում էր, որ կինը գնար, բայց կինը չէր գնում: Եվ նրա հայացքը, ապակուց անդրադարձած, անթարթ ուղղված էր ժիրայրի վրա: Ջղայնանալով, ժիրայրը վճռեց ինքը հեռանալ առաջինը: Բայց այդ բոպեին նրա կողքին հնչեց կնոջ կամացուկ, բայց հստակ ձայնը:

— Բարեւ ձեզ...

Ժիրայրն ապշած եւ տհաճ զգացումով նայեց կնոջը, որն իր նախաձեռնությամբ ուզում էր հաստատել փողոցային պատահական ծանոթություն: Բայց հազիվ էր նայել նրան, երբ զգաց, որ սխալվում է չարաչար, հանցանք գործելու աստիճան:

Ժիրայրին նայում էին այնպիսի հստակ ու վճիտ աչքեր, որ նա մի պահ կարկամեց՝ չկարողանալով պատասխանել բարեւին:

— Բարով եք վերադարձել,— շարունակեց երիտասարդ կինը՝ հավաստիացնելու համար, որ չի շփոթել նրան մի ուրիշի հետ:

— Ես ձեզ չեմ ճանաչում... ներեցեք, չեմ հիշում...— արտասանեց ժիրայրը:

— Իհարկե, չեք հիշի, ես այն ժամանակ փոքր էի, տասներեք տարեկան,— ժպտաց կինը:— Մենք ձեր հարեւաններն էինք՝ երկու տուն այն կողմ եւ ձեզ անձանոթ: Դուք ե՞րբ եք վերադարձել, ժիրայր Գլենց:

— Այսօր:

— Տասնվեց տարվա բացակայությունից հետո,— շնչաց կինը:— Տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օր...

Ժիրայրը ցնցվեց: Իր կյանքում նա երբեք այդքան մոտ չէր եղել երախտագիտական բուռն արցունքների, նյարդային փղձկոցի, որքան որ այժմ: Մեծ ճիգով կարողանալով զսպել միայն փղձկոցը, բայց ոչ իր աչքերի, ճակատի, դեմքի արտահայտությունը, բայց ոչ իր ձայնն ու շարժումները, նա իսկ խնոջ ձեռքը, ամուր սեղմեց գույգ ափերի մեջ եւ հազիվ արտաբերեց ջղաձգվող կոկորդից.

— Ծնորհակալություն...

Կինը հասկացավ նրա վիճակը եւ այլևս չշարունակեց խոսակցությունը:

— Ցանկանում եմ ձեզ ամեն, ամեն լավ բան աշխարհում,— ասաց նա հոգու խորքից, իր վճիտ ձայնով, յուրաքանչյուր «ամեն»-ի հետ կարճ ցնցելով իր ձեռքը ժիրայրի ձեռքերի մեջ, ապա դուրս քաշեց կամացուկ եւ շարունակեց ճանապարհը:

Ժիրայրը մնաց տեղում կանգնած եւ դառն վիրավորանքի զգացումը Բրաբիի նկատմամբ նորից ներխուժեց նրա սիրտը: Հարեւանի աղջիկը, հարեւանի երեխան... երկու տուն այն կողմ... իրենց ընտանիքի հետ ոչ ծանոթ...

Իսկ Բրաբին...

Այս անգամ դուռը փակ էր: Ժիրայրը զանգահարեց: Դուռը բացվեց շատ արագ, ըստ երեւոյթին նրան անհամբեր սպասում էին եւ վազքով մոտեցան զանգահարոյթյան վրա:

Ժիրայրն իսկույն նկատեց նմանոյթյունը: Այո, դա նրա տղան էր՝ նրան շատ նման, բայց եւ զգալիորեն տարբեր: Կարծես հիշողոյթյամբ էին պատճենահանել եւ միքիչ էլ շարժի էին վերածել դիտմամբ: Ի դեպ, դա նրանից էր, որ տղան գտնվում էր անցման տարիքում, արդեն կորցրել էր իր մանկական կազմավորոյթյունը, բայց չէր ստացել երիտասարդականը: Նա լող-լող էր, նիհար թելերով ու ոտքերով, բայց ունէր մեծ ականջներ, մեծ ձեռքեր եւ ոտքերի մեծ թաթեր: Ոչ թե երիտասարդ, այլ երիտասարդի շտապ գծագրված էսքիզ, սիւեմատիկ կարկաս: Բայց հենց այդ կարկասից էլ երեւում էր, որ դրա վրա աճելու էր մարդկային մի հաղթ ու դուրեկան շէնք: Բայց դա՝ հետագայում:

Ժիրայրը նույնիսկ ետ ընկրկեց: Եվս մի խորթ էակ: Խորթ՝ ոչ միայն իր աննմանոյթյամբ նախկինին, այլեւ իր մեծոյթյամբ:

— Համեցեք,— հայրիկ,— կարմրելով կակազեց տղան:

Ժիրայրը մտավ ներս, մեջքով սեղմեց դուռը, փակեց, եւ բռնելով տղայի խոշոր ձեռքերը, ոտից գլուխ նայեց նրան: Հասարակ շալվարով, բրդե բարակ սվիտրով, երկուսն էլ՝ սեւ, մազերը՝ զանգուր, ավելի շուտ՝ խռիվ...

— Դու մեծ տղամարդ ես, սիրելի...

Նա մի պահ կանգ առավ՝ չիմանալով ինչպէս անվանել նրան.— Հովի՞կ՝ ինչպէս երեխա ժամանակ, թե՛ արդեն Հովհաննես:

— Ջոն,— օգնոյթյան եկավ տղան:

— Ջո՞ն... Ինչո՞ւ Ջոն...

— Հենց այնպէս,— բռնազբոսիկ ժպտաց տղան:— Համեցիր, հայրիկ:

— Մի՞թե Հովհաննեսն ավելի վատ է,— շարունակեց հայրը՝ մտնելով սենյակ:— Հովհաննես Այվազոսսի, Հովհաննես Մարուխանյան, Հովհաննես Թումանյան, Հովհաննես...

— Ջոն Դալտոն, Ջոն Ռեսկին, Ջոն Ռեյ, Ջոն Բուլ, ջոն Գոլսուորսի...— Հորն ընդհատելով, շուտասելուկով իրար վրա թափեց տղան մի ամբողջ կույտ Ջոններ, որոնց բոլորի ընդհաուր ֆունկցիան այն էր, որ հաստատեին Հովիկ Գլենցի իրավունքը՝ Ջոն կոչվելու: Ակներեւ էր, որ նա հաճախ էր հարկադրված լինում պաշտպանվել եւ դրա համար վաղուց ի վեր ապահովել էր իրեն Ջոնների մի պատկառելի պաշարով:

— Լավ, թող լինի Ջոն,— հաշտարար եւ մի քիչ էլ անտարբեր տոնով համաձայնվեց հայրը:— Դե, եկ ծանոթանանք, Ջոն Գլենց: Պատմիր տեսնեմ քո մասին...

Նա նստեց իրեն արդեն ծանոթ այթոռի վրա՝ դրա հանդեպ զգալով մի ինչ-որ թելթելակի մտերմոյթյուն, եւ սպասողական նայեց տղային:

Բայց Ջոնը երեւի չէր էլ լսել հոր խոսքերը: Նա անթարթ, գնաբար նայում էր իր առջեւ նստած միջին տարիքի տղամարդուն՝ աշխատելով տեղավորել իր գլխի մեջ այն միտքը, որ դա իր հայրն էր:

— Դե՛...— քաջալերեց հայրը:

— Ի՞նչ: Իմ մասի՞ն: Ես ծնվել եմ...

— Ես գիտեմ, թե երբ ես ծնվել: Դա միակ բանն է որ գիտեմ: Ուրի՞շ:

— Սովորում եմ մեքենագիտական տեխնիկումում: Կոմերիտական եմ: Շատ սիրում եմ տեխնիկան, նաեւ ֆուտբոլ, լուսանկարչություն, շախմատ... Ավելի լավ է՝ դու հարցեր տուր, հայրիկ, իսկ ես պատասխանեմ:

— Ռուսերեն գիտե՞ս:

— Ես սովորում եմ տեխնիկումի ռուսական բաժնում: Իսկ առաջ հայկական դպրոցումն էի: Մի քիչ էլ անգլերեն գիտեմ: Հայրիկ, դու հիմա ո՞րտեղից ես եկել:

— Շատ հեռվից... Ուրեմն, տեխնիկայով ես հետաքրքրվում: Իսկ գրականություն սիրո՞ւմ ես:

— Առաջ շատ էի կարդում, բայց հիմա ժամանակ չկա: Համարյա միայն տեխնիկական գրքեր եմ կարդում:

— Ժամանակ չկա՞: Իսկ ի՞նչ ես անում ազատ ժամերիդ:

— Տեխնիկայով եմ զբաղվում: Մայրիկը քեզ դեռ ցույց չի՞ տվել իմ արհեստանոցը:

— Դեռ ոչ:

— Բակի կողմի պատշգամբումն է: Ես ցույց կտամ: Իսկ դու տեխնիկայով հետաքրքրվո՞ւմ ես, հայրիկ:

— Ի՞նչպես չէ. կացին, սղոց, խարտոց...

— Դրանք գործիքներ են,— ներողամիտ ժպտաց տղան:— Իսկ ես հարցնում եմ մեքենաների ու սարքերի մասին:

— Հետաքրքրվում եմ, բայց առիթ չեմ ունեցել զբաղվելու:

— Դու ի՞նչ մասնագիտություն ունես, հայրիկ:

— Կարծեմ ես էի հարցեր տվողը, Ջոն: Ապա, տեսնեմ ի՞նչ գրքեր ունես գրադարանում:

Ժիրայրը մոտեցավ պահարանին, նայեց գրքերի կողերին:

— Րաֆֆի... Ի՞նչ ես կարդացել Րաֆֆուց:

— Դա մերոնք են կարդացել:

— Իսկ դո՞ւ: Ի՞նչ գրողների գիտես:

Ջոնն ակներեւաբար նեղվում էր, որ խոսակցությունը գնում է գրականության եւ ոչ թե տեխնիկայի շուրջը:

— Ռո՞ւս գրողներից, թե անգլիական:

— Առայժմ հայ:

— Հա՛յ... Բոլորն էլ գիտեմ:— Եվ սկսեց շուտասելուկի ձեւով թվարկել ազգանունները՝ դրանց սկզբից կցելով անունների միայն սկզբնատառերը: Ըստ երեւույթին նրանց բոլորին

նա հիշում էր իր անցած դասերից:— Շիրվանզադե, Հրթումանյան, Գըսունդուկյան, Ղաղայան...

Ժիրայրն անսպասելիությունից բարձր ծիծաղեց: Ջոնն ընդհատեց թվարկումը:

— Ի՞նչ ես կարդացել Ղաղայանից:

Տղան լարեց հիշողությունը, կնճռեց ճակատը:

— Իսկ Թումանյանի՞ց:

— «Շիլիոնի կալանավորը»,— իսկույն ասաց տղան՝ ըստ երեւույթին ոչ պատահաբար հիշելով այդ երկը:

— Դա Թումանյանը չէ:

— Գիտեմ: Գրել է Լըբայրոնը, իսկ Հրթումանյանը թարգմանել է: Ինքնուրույն գրվածներն էլ գիտեմ:

— Անգիր հիշո՞ւմ ես որեւէ բան:

— Ես գրականությունից միշտ միայն բավարար եմ ստացել,— անկեղծորեն խոստովանեց տղան:

— Այդ դեպքում կարդա գրքով:

— Անպայման ես ուզում, հայրիկ:

— Ցանկալի է: Իսկ հետո կտեսնենք նաեւ արհեստանոցդ: Կարդա հենց թեկուզ «Շիլիոնի կալանավոր»-ից,— այս անգամ առաջարկեց Ժիրայրն ինքը:

Ջոնը պահարանից վերցրեց եւ բաց արեց գիրքը, գտավ պոեմը: Եվ որպեսզի շուտ վերջացնի ընթերցումը, նա դիմեց խորամանկության, սկսեց կարդալ ամենավերջին գլուխը.

Ամիսներ, տարիք թե օրեր անցան,
Ես ոչ հաշվել եմ եւ ոչ իմացել.
Մութն էր իմ բանտը, տըխուր մըշտական
Ու երբեք պայծառ հույս չեմ ունեցել:
Եկան վերջապես ինձ ազատելու.
Չէի հասկանում, ուր եմ գնալու,
Ոչ էլ հարցրրի, է՞ր էն ազատում.
Մին էր ինձ համար, ազատ թե բանտում.
Ու այն ժամանակ իմ բանտի միջին
Երբ որ ձրգեցին կապանքս վերջին,
Այնպես էր թվում, թե նրանք եկել
Ուզում էին ինձ բաժանել, գրկել
Իմ երկրորդ տանից: Ես մինչեւ անգամ
Այնտեղ սարդեցին դարձա բարեկամ.
Ու միշտ ուշադիր հետեւում էի,
Երբ որ լըրջորեն նրանք ձանձրալի
Իրենց արհեստով էին ըզբաղվում.
Կամ դիտում էի, երբ մուկն էր խաղում

Լուսնի լույսի տակ: Ինչո՞ւ նրբանց պես
Ինձ էլ մեր տանը չըզգայի եւ ես...
Մենք բնակիչներ ամենքս մի տան,
Ու ես նրանց մեջ մի պետ անսահման,
Կյանքի ու մահվան վճիռն իմ ձեռքում.
Բայց այնպես խաղաղ էինք բընակվում...
Նույնիսկ շրջաօդիս դարձա ես ընկեր...
Այսպես մընայով օրեր, տարիներ,
Սովորում է մարդ իրեն վիճակին,
Ու... ես ցավեցի իմ բանտի շեմքին:

Տղայի կարդալու ընթացքում հայրը մռայլվեց եւ երկու ծալքերը նրա ճակատի վրա ավելի խորացան: Փոխվեց նաեւ Ջոնի ձայնը: Կարդալիս նա մի քանի անգամ աչքերով քաղելով գրքից մի տողի չափ անհրաժեշտ պաշար, բարձրացնում էր հայացքը, ուշադիր նայում հորը՝ կարծես համենատելով նրան իր կարդացածի հետ: Ապա, տողը պրծնելով, արագ իջեցնում էր գլուխը եւ շարունակում կարդալ:

Երբ նա ավարտեց, մի պահ երկուսն էլ լուռ էին: Ապա հայրն ասաց հանգիստ ու դանդաղ, բայց հաստատուն ձայնով.

— Մխավում է Լորդ Բայրոնը, Ջոն:

Տղան մինչեւ իսկ մի ընդոստ շարժում արեց գարմանքից.

— Ի՞նչպես թե... Չէ՞ որ նա կլասիկ է...

— Բայց եւ այնպես սխավում է: Երբեք, երբեք չի կարելի վարժվել բանտին: Վերցրու, օրինակ, գաղութային երկրները: Ստրկանալուց դարբե հետո նույնիսկ, նրանք ապստամբվում են իշխողների դեմ:

— Ախր Բայրոնն անհատի մասին է գրել, հայրիկ,— հանգիստ շունչ առնելով, ներողամիտ ժպտաց տղան՝ թյուրիմացությունը համարելով պարզված:

— Միեւնույնն է: Ես ուրիշ կերպ կվերջացնեի պոեմը:

— Դո՞ւ... համարյա սրբապղծությունից սարսռողի պես, արտասանեց Ջոնը:

— Այո: Կուղղեի: Ավելի ճիշտ՝ շուռ կտայի բոլորովին: Երբ ազատում են Շիլիոնի կալանավորին, նա սկսում է խելահեղորեն վազել, վազել, վազել... Չնայած իր ուժասպառությանը, նա վազում է, վազում, վազում... Նա շտապում է հասնել բաց թողածին, բռնել այն: Ու թեեւ բաց թողածը երկար տարիներն են, իսկ շահածը՝ թոպեններն ու վայրկյանները, բայց նա վազում է, վազում, վազում... մինչեւ որ վար է ընկնում գետնատարած...

— Մեռնո՞ւմ է...— վախեցած հարցրեց տղան:

— Ոչ: Վեր է կենում եւ նորից է վազում: Ես այդպես կվերջացնեի պոեմը:

— Իսկ... հասնո՞ւմ է:

— Ով որ չի վազում՝ նա երբեք չի կարող հասնել, ստույգը դա է:

Գիրքը պահարանում խնամքով տեղավորելիս հայրը հարցրեց.

— Մի՞թե դա ավելի լավ վերջ չէ, Ջոն:

— Ոչ, հայրիկ, դա վերջ չէ: Դա սկիզբ է:

Ժիրայրը կտրուկ շուռ եկավ պահարանից, նայեց որդուն: Պատանու աչքերը հասկացող հայացքով նայում էին այդ մարդուն, որը նրա հայրն էր: Եվ այդ մարդը, առաջին անգամ նրանց հանդիպման ընթացքում, բուռն մղում զգաց դեպի պատանին, մոտեցավ եւ գրկեց նրան: Բայց ճիշտ է նաեւ այն, որ հայրական քիչ բան կար այդտեղ եւ դա ավելի շատ մի տղամարդու շնորհակալությունն էր մի ուրիշ տղամարդու:

Ժիրայրն ու Ջոնը դեմ-դիմաց նստած նայում էին իրար:

— Այնպես ենք լռել, կարծես խոսելու բան չկա,— ծիծաղեց հայրը:

— Դա նրանից է, որ խոսելու շատ բան կա,— բացատրեց տղան:

— Ապրես: Եվ անհնար է բոլորը միանգամից ասել իրար, ճիշտ է: Հարկավոր է կամաց-կամաց, առիթից առիթ, ժամանակի ընթացքում: Դե, լավ, ի՞նչ արած, եկ խոսենք ինչի մասին որ մտնքներս ընկնի: Դու ի՞նչ էիր մտածում իմ մասին, Ջոն, որ ես մեռա՞ծ եմ, թե կենդանի:

Տղան կարմրեց հանցանքի մեջ բռնվածի պես: Ավելի ճիշտ՝ կարմրեցին նրա միայն ականջները, իսկ դեմքը թեթեակի շիկնեց:

— Ես չեմ մտածել քո մասին, հայրիկ,— կամացուկ խոստովանեց նա:— Դու ինձ համար պապի ու տատի պես էիր...

— Այսինքն՝ մեռա՞ծ:

— Ոչ, հայրիկ, իբրեւ մեռածի մտածում են նրա մասին, ում որ տեսել են մեռած կամ գոնե կենդանի: Դու ինձ համար գոյությունն չունեիր: Բայց քիչ առաջ,— շտապեց ավելացնել նա՝ քանի դեռ հայրը չէր վիրավորվել,— երբ մայրիկն ասաց, որ դու եկել ես, ես այնքան հուզվեցի, որ նա նույնիսկ վախեցավ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ առաջին անգամն էի այդպես հուզվում: Վալերիան կաթիլներ առաջարկեց,— տղամարդավարի արհամարհանքով փնջացրեց Ջոնը:

— Չիմեցի՞ր:

— Ի՞նչպես կարելի չիմել՝ երբ մայրիկն է պահանջում:

— Նա տա՞նն է:

— Ոչ, գնաց, շուտով կգա:

— Իսկ... քո՞ւյրդ:

— Նա նույնպես շուտով կգա:

— Դու սիրո՞ւմ ես նրան:

— Ինչո՞ւ չէ:

— Իսկ նա քե՞զ:

— Ավելի շատ:

— Իսկ երկուսդ մայրիկի՞ն:

— Հայրիկ,— ժպտաց տղան,— դու այնպես ես հարցուփորձ անում, կարծես վաղը նորից մեկնելու ես: Կապրես՝ կտեսնես: Իհարկե, երկուսս էլ սիրում ենք մայրիկին ու լսում: Ներողություն, ես գնամ ննջարան՝ պիժամաս հագնեմ, թե չէ մայրիկը կբարկանա:

Հազիվ էր Ջոնը մտել ննջարան, երբ դուրս ելավ հագուստը չփոխած, հանցավորի դեմքով:

— Հը՞, Ջոն:

— Շատ ներողություն, հայրիկ: Քիչ մնաց մոռանալի: Ախր այսօր ուրբաթ է:

— Այսի՞նքն:

— Ես պիտի գնամ: Խմբակի պարապմունք ունենք: Իսկ բաց թողնել չեմ կարող, ես եմ զեկուցողը:

— Գնա, գնա,— քաջալերեց հայրը:

— Բայց ախր դեռ հազիվ իրար տեսած...

— Դու այնպես ես խոսում, Ջոն, կարծես վաղը նորից մեկնելու եմ,— ժպտաց հայրը:

Ժպտաց նաեւ Ջոնը եւ դուրս ելավ առանց գլխարկի: Համարյա ամբողջ երիտասարդությունն էր շրջում գլխաբաց: Ժիրայրը դա նկատել էր փողոցում եղած ժամանակ: Անցյալում այդպես չէր:

— Հայրիկ,— մի պահ ետ դառնալով միջանցքից, ասաց տղան,— հանգստացիր իմ բազմոցի վրա, շուտով մերոնք կգան: Չբաղվիր ինչով ուզում ես: Զեզ գգա ինչպես քո տանը: Դե, առայժմ...

Հոգնությո՞ւն... Երկար տարիներից ի վեր Ժիրայրն առաջին անգամն էր ապրում այդ զգացումը: Ուժասպառ նա շատ էր եղել, բայց հոգնած՝ երբեք: Ու թեեւ այժմ նույնպես, նա բաղձանքով գնաց պառկելու եւ անձկությամբ ձգվեց Հովիկի բազմոցի վրա, բայց գիտեր, որ ֆիզիկական ուժասպառություն չէր դա, այլ հոգեկան հոգնածություն: Իր վերադարձի առաջին րոպեներից մինչեւ հիմա այնքան խնդիրներ էին բարդվել նրա մտքի ու հոգու վրա, որ նա կքվել էր դրանց տակ:

Այնտեղ այդպես չէր, այնտեղ ամեն ինչ պարզ էր: Եվ կար միայն մի խնդիր.— ապրել, սպասել արդարամտության, որը, նա համոզված էր, հաղթանակելու էր վերջիվերջո: Մնացյալ բոլոր խնդիրները մանր-մունր էին դրա համեմատությամբ, բխում էին դրանից եւ ենթարկվում դրան:

Նրա հոգին ե՛լ ընկնված էր այնտեղ, ե՛լ ողբերգության մեջ, ե՛լ դառնությամբ պատած, ե՛լ ուրիշ ամեն ինչ, բայց ոչ հոգնած: Հոգնածության ճահիճ գոյանալուն խանգարում էր սպասումը՝ աշխարհում գոյություն ունեցող ամենագորավոր էներգիաներից մեկը:

Իսկ այսօր...

Չարմանալի էր նաեւ այն, որ այսօրվա այդ հոգնածությունը դրսևորվել էր որպես ֆիզիկական կեցություն: Անուշադիր մտածելիս նրան կարող էր թվալ, թե նա կերել է

ինչ-որ անախորժ բան, որից կծկվել է նրա ստամոքսը, ձգվել է կոկորդը՝ որձկալու պատրաստ, իսկ բերանը պատտառվել է թունավոր դառնահամով:

Բայց եւ այնպես, պատկերով բազմոցի վրա, նա զգաց, թե ինչպես երանության մի մաքուր գով տարածվեց նրա հոգնածության վրա: Ոչ, դա զսպանակավոր փափուկ ու պիրկ պատկերատեղի պատճառած ֆիզիկական հաճույքը չէր, որ ներծծվեց նրա մեջ: Չովը գալիս էր հոգու միջից:

Երկար ժամանակ նա չէր կարողանում գտնել դրա պատճառը, որովհետեւ չէր մտածում այդ մասին, այլ անկամ ենթարկվել էր դրա խաղաղարար հմայքին: Ապա հասկացավ՝ հանդիպումը փողոցում...

Այժմ Ժիրայրն զգաց, որ այդ հանդիպումը նրան տվել էր անսահման ավելին, քան հուզված երախտագիտության մի պահն էր: Գլենրնեցի դեռեւս օտար ընտանիքի, Երեւանի դեռեւս անձանոթ եւ անսովոր միջավայրի հանդեպ կանգնած միայնակ ու անկարեկից Ժիրայրի համար այդ հանդիպումը միակ անկյունն էր որը ջերմացած էր հարազատության զգացումով: Այժմ, մտովին վերադառնալով այնտեղ, նա զգաց, որ վերադառնալու է էլի եւ էլի, մինչեւ որ ուրիշ կողմերում եւս ջերմություն ծագի նրա համար, նրա կյանքի վրա տիրի համատարած գարունը:

Կարելու էր, որ ջերմ անկյունը նա հոգու համար ստեղծել էր նրա ոչ թե կինը, ոչ թե տղան, աղջիկը, կամ որեւէ հին ծանոթը, բարեկամը, այլ անձանոթ մի կին: Կամ, ընդհանրապես, հենց այդ էր կարելու, հենց այդ էր տալիս ջերմությանն այդպիսի անկաշառություն եւ ինքնաբերականություն: Կինն ամուսնու նկատմամբ կարող է այդպես ջերմ վարվել նույնիսկ լոկ ի պաշտոնե, զավակը՝ ազգակցության բերմամբ: Ուրիշ է անձանոթ մարդը, որը ոչնչով ո՛չ պարտավոր է, ո՛չ իրավասու:

Ինչպիսի՛ մաքուր եւ հոգեհույզ ձայնով նա ցանկացավ Ժիրայրին ամեն, ամեն լավ բան աշխարհում՝ առանց գիտակցելու, որ դրանով իսկ նա տալիս է այդ: Ոչ, իզուր են ամեն տեսակ փիլիսոփայությունները վերադարձի առաջին օրվա մասին, այն մասին, թե իբր նա նշանավոր պիտի լինի նրանով, որ չպիտի տարբերվի հետագա բոլոր օրերից: Դա զրկված մարդու փիլիսոփայություն է: Առաջին օրը պետք է հնչեին շեփորները եւ դրանք հնչեցին:

Եվ բոլորովին էլ կարելու է, թե ով էր այդ կինը, թե Ժիրայրը գուցե այլեւս երբեք չհանդիպի նրան: Հաճախ է պատահում արդյոք, որ ցրտից մտնելով մի տաք անկյուն, մենք գոնե մի բարի խոսքով հիշում ենք դրա կառուցողին:

Եվ որքան՝ զարմանալի է, որ ամեն ինչ սկսվեց պատահականությունից, օրինաչափությունների այդ օրինաչափությունից, որի մեջ այնքան են իրար խաչաձեւում օրինաչափությունները, որ դրանց բարդ հանգույցը, իրոք որ, թվում է պատահականություն: Քանի՛ տասնյակ «եթե»-ներ... Եթե Ժիրայրը դուրս չգար տնից, եթե չանցներ այդ փողոցով, եւ այն էլ հատկապես այդ բոլորին, եւ եթե կինը նույնպես, դուրս չգար տնից եւ չանցներ այդ փողոցով եւ այն էլ հատկապես այդ բոլորին...

Երբ Ժիրայրը նկատեց, որ անցորդները լուռ հիացմունքով նայում են իր առջեւում քայլող կնոջը եւ վերջապես ինքն էլ հետաքրքրվեց նրանով, կարո՞ղ էր ենթադրել, թե ինչպիսի նշանակություն պիտի ունենար այդ կինը նրա համար:

Առաջ անցնելով նրանից եւ կանգ առնելով ցուցափեղկի մոտ, Ժիրայրն սպասում էր տեսնել շատ գեղեցիկ մի դեմք եւ ուրիշ ոչինչ: Աչքի վայրկենական բավականություն, ընդ

որում՝ երեխայական, նրա տարիքին ոչ վայել: Բայց Ժիրայրը չտեսավ հենց դեմքը... Դա այժմ անհավատալի է, բայց այդպես է. Ժիրայրի վրա սեւեռած կնոջ աչքերը կարծես պատնեշել էին դեմքը: Ավելին. Ժիրայրը չտեսավ նույնիսկ աչքերը, այլ միայն դրանց հայացքը՝ մաքուր եւ հստակ: Եվ այդ հայացքի միջոցով նա ստացավ անսահման ավելին, քան այն երեխայական բավականությունը, որը նա սպասում էր՝ ցուցափեղկի մոտ կանգ առնելիս:

Շնորհակալություն քեզ, անձանոթ կին: Շնորհակալություն նույնիսկ ոչ թե հանդիպման համար, այլ որ դու կաս, որ դու չէիր կարող չլինել: Դու կամուրջ հանդիսացար Ժիրայրի համար, դու պակասող այն օղակն էիր, որ իրար կապեցիր խզված շղթայի երկու ծայրերը՝ երեքշաբթին եւ ուրբաթը, դու իրար միացրիր կինոժապավենի երկու կտորները, եւ դրա հետեւանքով մի քիչ պակաս ցավագին դարձավ օտարության զգացումը, մենակությունը, մի քիչ պակաս սարսափելի դարձավ այն ընդմիջումը, որը կոչվում է տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օր...

5

Շա՛տ էր քնել Ժիրայրն արոյոք, թե քիչ, երբ լսեց թեթեւ ոտնաձայն հատակի վրա՝ զգուշությունից դանդաղած:

Նա բաց արեց աչքերը: Կապույտ շրջագեստով, կապույտ եւ սպիտակ երիզավոր կոֆտայով, վարանոտ, վախեցած, սենյակի մեջտեղում կանգնել էր մի այնպիսի նիհար, թեթեւ օղային աղջիկ, որ եթե նույնիսկ դիտմամբ դուրսերը, հագիվ կարողանար ավելի մեծ շրշոց հանել: Հանցանք գործածի խոշորացրած աչքերով նա նայում էր պառկած մարդուն՝ տանջալի զոջումով տեսնելով իր արարքի հետեւանքը՝ նրա արթնանալը:

— Բարեւ ձեզ... — ասաց նա կարմրելով, ներողություն հայցողի պես:

Ժիրայրը կտրուկ վեր ցատկեց, ելավ ոտքի: Իր աղջիկը... Նրա սիրտն սկսեց ուժգին բարբախել: Իր հարազատ, իր արյունակից աղջիկը... Մի՞թե, իրոք, իրենն է այդ շփոթված, նիհար, գեղեցիկ աղջիկը...

Հպարտություն, խանդաղատանք, պոռթկալու պատրաստ ջղաձիգ հեկեկոց, չգիտես՝ ուրախությունի՞ց, թե՞ երկար տարիներ կորցրածի վշտից, այրեցին նրա կուրծքը՝ ինչպես անզգուշորեն մի ումպով խմած եփ թեյ:

— Դու գիտե՛ս, թե ով եմ ես,— խռովահույզ ձայնով, տանջվելով, որ նա «դուք»-ով խոսեց իր հետ, հարցրեց Ժիրայրը:

— Այո: Դուք իմ հայրիկն եք:

— «Դու» ասա ինձ, խնդրում եմ,— պոռթկաց Ժիրայրի կոկորդից եւ նրա աչքերը լցվեցին արցունքով: Նա խելագար խանդ զգաց աշխարհի հանդեպ, Ջոնի, Բրաքիի հանդեպ, որոնց այդ աղջիկը կարող էր ասել «դու», ասում էր «դու», իսկ նրան, հարազատ, արյունակից հորը՝ ոչ...

Աղջիկն իր նիհար թեւերով հանկարծ գրկեց հոր գոտկատեղը, գլուխը հպեց նրա կրծքին, խոնարհեց ներքեւ եւ, նայելով հատակին, գուցե եւ աչքերը փակած, շնջաց:

— Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ... Հայրիկ, դո՛ւ... Միրելի հայրիկ..., դո՛ւ...

Ժիրայրն արագ վեր բարձրացրեց նրա գլուխը: Աղջկա աչքերը լիքն էին արցունքով: Բայց նա չուզեց էլ թաքցնել այդ: Նայելով ներքեւից վերեւ, հոր աչքերին, նա կրկնեց.

— Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ...

Նրա նիհար ուսերը ցնցվեցին ետ ու առաջ, նա բարձրացավ ոտների ծայրի վրա, թեւերը փաթաթեց հոր պարանոցով՝ ամուր, ամուր, կարծես խեղդել էր ուզում իր փխրուն ուժով, եւ սկսեց համբուրել նրան, ոչ թե նրան, այլ նրա գունաթափ բուշխատը, դրա փայտե կոճակները, պատռվածքից դուրս ցցված գորշ բամբակը: Իսկ նրա շրթունքները թրթռում էին ամեն կողմ եւ նա ճիգով էր կարողանում իրար վրա բերել դրանք եւ կրկնել անընդհատ.

— Դու, դու, դու... Հայրիկ, դու...

Ժիրայրը, նրա հուզված վիճակով արդեն անհանգստացած, նստեցրեց նրան բազմոցի վրա, նստեց կողքին: Աղջիկն արագ դեպի իրեն ձգեց հոր գլուխը, նայեց ճաղատանալ սկսող ճակատին եւ ասաց.

— Ես համարյա այդպես էլ պատկերացնում էի քեզ, հայրիկ: Քե, քեզ, քեզ...

— Ուրեմն դու...— Ժիրայրը հագիվ կարողացավ արտաբերել իր խոսքի կտրված եւ կոկորդով ետ սահած շարունակությունը,— ուրեմն դու մտածո՞ւմ էիր իմ մասին...

— Միշտ, միշտ, միշտ...— շնչաց աղջիկը:— Ոչ ոքի չէի ասում, ոչ Ջոնին, ոչ մայրիկին, եւ մտածում էի: Մայրիկն սկզբում մեզ ասում էր, որ դու պատերազմումն ես գոհվել: Իսկ ես մտածում էի: Հետո իմացա, որ դու պատերազմում չես եղել եւ չես գոհվել: Եվ էի մտածում էի: Չգիտեի՝ ապրո՞ւմ ես, թե ոչ: Միեւնույնն է, միշտ մտածում էի: Լսիր, հայրիկ... դու, դու, դու...

Ժիրայրը գրկեց աղջկան, համբուրեց նրա մազերը, ուզեց թողնել, բայց զգաց, որ ձեռքերը չեն ենթարկվում նրան: Նա դեպի իրեն ձգեց իր աղջկան եւ սկսեց կարկուտի պես համբույրներ տեղալ նրա մազերի, աչքերի, դեռ մանկական ձեռքերի, մատների, եղունգների վրա: Նա հագիվ զսպեց իրեն՝ չհանելու նրա փոքրիկ կիսակոշիկները, համբուրելու դրանց ներբանները, կրունկները, ինչպես մայրն է անում խանդաղատանքից՝ իր երեխային առաջին անգամ կոշիկ հագցնելուց հետո: Իր աղջիկը, իր մեծ, բայց իր փոքր ակնիկը...

Նա վերցրեց աղջկա գույգ ձեռքերը, դրեց իր ճակատին, դրանցով շոյեց այնտեղի երկու խոր ծայքերը, կարծես ուզում էր հարթել: Հոր առաջին շարժումից հետո ձեռքերն իրենք շարունակեցին շոյել ճակատը:

— Դու շա՞տ ես տանջվել, հայրիկ...

— Շատ...— իր հարազատի մոտ անկեղծորեն շնչաց Ժիրայրը:— Շատ:

Աղջիկը պոռթկալի գրկեց հորը, թեքեց նրա մեծ գլուխն իր փոքրիկ, նիհար ուսի վրա եւ ասաց հոգու խորքից եկող հաստատակամությամբ.

— Դու այլեւս չես տանջվի: Ես չեմ թողնի:

— Գիտեմ, աղջիկս: Չեմ տանջվի: Դու չես թողնի:

Ահա թե ինչն էր պակասում նրան այդ տասնվեց տարվա, երկու ամսվա եւ տասնհինգ օրվա ընթացքում... Ոչ հաց, ոչ հանգիստ, ոչ քուն, ոչ տաք անկյուն, ոչինչ, ոչինչ միայն

կանացի քնքուշ հոգատարություն: Մո՛ր, քրո՛ջ, կնո՛ջ, աղջկա՛,— միայն թե կանացի քնքշություն, այդ ամենագոր, ամենաբուժիչ, ամենակենսատու էլիքսիրն աշխարհում:

Ժիրայրը վերցրեց իր գլուխն աղջկա ուսից՝ վախենալով հոգնեցնել նրան: Գրկեց մի թելով եւ նրանք լուռ, անշարժ, նստած մնացին այդպես՝ երկար, շատ երկար, որովհետեւ նրանք հայր ու աղջիկ էին եւ արդեն միասին էին եւ խոսքեր հարկավոր չէին նրանց եւ ոչինչ հարկավոր չէր...

Այդպես նստած էլ գտավ նրանց Բրաբին՝ մտնելով սենյակ:

— Դուք արդեն ծանոթացել եք,— ասաց նա՝ ո՛չ հարցական ձեւով, ո՛չ զարմանքով, ո՛չ զվարթությամբ, այլ միայն փաստն արձանագրելով: Եվ Ժիրայրը նորից տհաճորեն ապշեց, որ այդ կինը երբեմնի այն երիտասարդ Բրաբին էր, որի ամեն մի բառի, շարժման, հայացքի, ձայնի մեջ արտահայտվում էր զգացմունքը, որեւէ զգացմունք, ամեն անգամ ոչ միայն ներքուստ խոր, այլեւ արտաքուստ ցցուն: Եթե դա ուրախություն էր՝ ապա լեռան պես բարձր էր, թախիժ՝ անտառի պես ընդարձակ էր, սեր՝ հեղեղի պես հորդ էր... Մի՛թե սարը հարթվել էր, անտառը ոչնչացել, հեղեղը ցամաքել... Մի՛թե բնաջնջվել էր ամբողջ բնությունը...

— Մենք վաղուց ենք ծանոթ, մայրիկ,— արդեն ավելորդ համարեց թաքցնել իր կյանքի ամենամեծ գաղտնիքն աղջիկը,— իմ մանկապարտեզ գնալուց ի վեր...

— Ինչո՞ւ հագուստդ չես փոխել,— առանց բարկանալու, առանց հանդիմանելու, ըստ էության առանց մինչեւ իսկ իրոք հարց տալու, ասաց մայրն աղջկան:

— Հայրիկի գալու առթիվ: Թույլ կտա՞ս մայրիկ:

— Կարող ես: Միայն թե զոգնոց հագիր, հետեւիր ճաշին: Ես նորից դուրս եմ գալու: Դու երեւի չթողեցիր հայրիկիդ քնելու: Ախր երբ ես տուն եկա՝ նա քնած էր, իսկ երբ դու եկար՝ նախագուշացրի, որ աղմուկ չանես:

— Ես լուռ նստել եւ նայում էի հայրիկին: Հետո ուզեցի իսկույն դուրս ելնել սենյակից, որովհետեւ, եթե մնայի, պիտի մոտենայի ու առանց արթնացնելու համբուրեի, համբուրեի... Դեռ մի քայլ չէի արել, որ նա արթնացավ:

— Ոչինչ, ոչինչ,— ժպտաց Ժիրայրը,— ես քնել չեմ ուզում, ի՞նչ դրա ժամանակն է: Ես դա հենց այնպես քնեցի, ինքնաբերաբար...

Բրաբին հեռախոսի եւ ռադիոընդունիչի սեղանակների մոտ կանգնած, ինչ-որ բան էր մտմտում ինքնիրեն՝ մեջքով դեպի հայրն ու աղջիկը:

Հանկարծ Ժիրայրն անդրադարձավ, որ դեռ չգիտե աղջկա անունը:

— Անունդ ի՞նչ է, աղջիկս,— հարցրեց նա՝ թախիժով, ժպտալով հոր կողմից իր զավակին տրվող այդպիսի հարցի տրագիկոմիկականության վրա:

— Խիտա:

— Ի՞նչ: կրկնիր:

— Խիտա:

«Չոն»-ից հետո Ժիրայրը չզարմացավ «Խիտա»-յի վրա:

— Իսկ ե՞րբ ես ծնվել:

Պատասխանի փոխարեն աղջիկը հանկարծ վեր ցատկեց նստած տեղից: Նրա դեմքը փայլում էր երջանկությունից:

— Հայրիկ,— բացականչեց նա,— ես այսօր եմ ծնվել:

— Այսօ՞ր...

Նորից նա՝ պատահականությունը, երջանիկ գուգադիպության կերպարանք առած: Վերադարձի առաջին օրը պետք է հնչեին շեփորները եւ հնչեցին նորից, այս անգամ ավելի ուժգին:

— Այո, այո, այսօր, հայրիկ: Ոչ միայն փոխաբերական իմաստով, այլև իսկապես, իսկապես: Ի՞նչպես մոռացել էի, մայրիկ: Այսօր ամբողջ օրը հիշում էի, բայց տուն գալուցս հետո մոռացա:

— Իսկ ես չէի մոռացել,— ասաց Բրաբին:

— Ի՞նչ լավ նվեր ստացա այսօր,— բացականչեց Խիտան՝ հորը գրկելով,— աշխարհի չափ նվեր:

— Ի՞նչ նվեր,— առանց զարմանքի, առանց մինչև իսկ հետաքրքրության, անարտահայտիչ ձայնով հարցրեց մայրը՝ շուռ գալով դեպի նա: Տեսնելով հորն ու աղջկան գրակախառնված, նա ասաց՝ «ա», եւ գլխով հաստատական նշան արեց:

— Նվերը ես ինքս ստացա, աղջիկս, ոչ թե դու:

— Ոչ դու եւ ոչ էլ ես, հայրիկ, այլ մենք երկուսս...

Բրաբին հեռախոսի սեղանակը հրեց բոլորովին անկյունը, իսկ ռադիոընդունիչի սեղանակը՝ հակառակ կողմը: Վեր կենալով տեղից, Ժիրայրն օգնեց նրան: Երկու սեղանակների միջև ստեղծվեց արձակ տարածություն՝ այդ լիքը սենյակում տարօրինակորեն դատարկ: Սենյակը, իհարկե, չկորցրեց իր երկրաչափական կանոնավորությունը, այլ ստացավ մի փոքր այն գծագրություն:

Խիտան հարցական նայեց մորը, բայց Բրաբին, մտնելով ննջարան, դրամ վերցրեց գրասեղանի դարակից:

Խիտան վազ տվեց խոհանոց, նայեց ճաշին ու վերադարձավ հագին սպիտակ գոգնոց՝ ծածկված կրծքով:

— Անպիտան տղան երեւի նորից գնացել է առանց բան ուտելու,— անարտահայտիչ խաղաղ ձայնով արձանագրեց Բրաբին՝ տնից դուրս գալուց առաջ:— Էլի նկատողություն է ստանալու ինձանից:

— Նա կարծեմ կերավ ինչ-որ բան,— ստեց Ժիրայրը:

Բրաբին, որ մոտեցել էր դռանը, կտրուկ շրջվեց, շեշտակի նայեց ամուսնու աչքերին: Ժիրայրը սարսռեց նրա հայացքի ցրտի տակ: Կնոջ դուրս գնալուց հետո նա դառը գոջումով զգաց, որ չպետք է ասեր այդ, նա իրավունք չուներ խառնվելու ուրիշների գործերին: Մայրն իր զավակներին դաստիարակել է առանց նրա, եւ իզուր է նա, անկոչ հյուր, համարձակվում միջամտել, այն էլ՝ սկսելով ստելուց...

Բայց Ժիրայրի ցրտած հոգու վրա հանկարծ հորդեց վաղ զարնանային թարմ ու տաք շունչը:

— Հայրիկ,— ասաց Խիտան՝ մոր գնալուց հետո,— ես քեզ ցույց կտամ իմ բոլոր ընկեր-ընկերուհիներին: Որ բոլորը տեսնեն: Հետո կտանեմ քեզ, ցույց կտամ իմ նախկին ընկեր-ընկերուհիներին: Հետո՝ մեր նախկին հարեւաններին: Դրանից հետո ես քեզ ցույց կտամ իմ պիոներ ժամանակվա կովարին, մի շատ լավ աղջկա, որը հիմի ամուսնացել է: Ցույց կտամ իմ մանկապարտեզի դաստիարակներին, մանավանդ մի զգվելի կնոջ՝ եթե նա դեռ աշխատում է այնտեղ: Ես քեզ ցույց կտամ իմ ուսուցիչ-ուսուցչուհիներին՝ թե՛ հիմիկվա, թե՛ անցած: Ես քեզ ցույց կտամ մի խուլիզան տղայի՝ մեր փողոցից, եւ երկու լավ տղաների՝ նույնպես մեր փողոցից: Ցույց կտամ... Էլ ո՞ւմ ցույց կտամ: Բոլորին: Ոչ մեկին չեմ մոռացել, ոչ մեկին բաց չեմ թողնի: Իսկապես, դու չե՞ս հոգնի, հայրիկ: Եկ սկզբից պայմանավորվենք, որ ես ու դու շրջելու ենք թեւանցուկ եւ եթե ես մի անգամ սեղմեմ թեւո՞ւ ուրեմն չես նայի մեր մոտով անցողին, իսկ եթե երկու անգամ սեղմեմ՝ կնայես: Միրալիր կնայես: Դու չե՞ս բարկանա, եթե ես երբեմն լեզու հանեմ մեկնումեկին: Ասենք՝ դու չես էլ նկատի. մենք կանցնենք, հետո ես գլուխ շուռ կտամ ու կհանեմ: Դա շատ անհրաժեշտ է ինձ: Փողոցով գնալիս դու ինձ համար պաղպաղակ կգնես: Փողը ես քեզ կամ սկզբից, դու, իհարկե, չունես: Հետո կգնանք մանկական այգի ու կարուսել կնստենք քեզ հետ: Թող ծիծաղեն, որ մենք մեծ ենք, ճիշտ է, մե՞զ ինչ: Ես դիտմամբ մի անկարգություն կանեմ դպրոցում, որ ծնողիս կանչեն այնտեղ: Իհարկե, դու ինքդ կգնաս եւ ոչ թե մայրիկը: Մեծ անկարգություն չեմ անի, մի վախենա, ես երբեք ոչ մի անկարգություն չեմ արել, ոչ մեծ ոչ փոքր. ինձ չէր կարելի ուրիշների նման, կվտարեին: Կկանչեն քեզ, իսկ դու կբարկանաս իմ հասցեին՝ «Ես ցույց կտամ այդ անպիտանին»: Նրանք քեզ կհամոզեն, որ կարիք չկա խիստ պատժելու, որ դա առաջին դեպքն է, իսկ դու ասա՝ «Իմ աղջիկը չէ՞, ուզեմ՝ կպատժեմ, ուզեմ՝ կներեմ»:

— Այդպես չի կարելի,— ժպտաց Ժիրայրը:

— Գիտեմ... Ուրեմն ասա միայն՝ «իմ աղջիկն է»...

— Խիտա, ճաշը...

— Թող խանձնվի: Դա կդառնա աշխարհի ամենահամեղ ճաշը, ճիշտ չէ՞. մեր գրույցի պատճառով խանձված ճաշ...

— Աղջիկս, խնդրում եմ քեզ... Ճաշը...

Հանկարծ Խիտան հասկացավ, որ հարկավոր էր իսկույն գնալ խոհանոց: Առանց հորը նայելու նա վազեց դուրս: Ժիրայրը բերանքսիվայր ընկավ բազմոցի վրա եւ կիսախեղդ հեկեկոցը ցնցեց նրա ամբողջ մարմինը:

«Ժիրա՛յր...— կարծես լսեց նա մի ուրիշի զարմացած ձայնն իր ականջի մոտ,— դա ի՞նչ նորություն է: Ե՛րբ ես լաց եղել դու վերջին անգամ: Կարծեմ ինչ-որ խաղալիքի համար»...

Երբ քիչ հետո Խիտան մտավ ներս, հայրը հանգիստ նստած էր իր տեղում եւ սպասում էր աղջկան:

— Եթե տեսնես, թե ի՞նչ է կատարվում մեր խոհանոցում...— ասաց աղջիկը:— Է՛լ գինի, է՛լ ուտելիքներ: Դրա համար է մայրիկն այդպես ներսուդուրս անում: Մենք ամեն տարի ենք կատարում իմ ծննդյան տոնը: Չոնի՞նը նույնպես: Կատարում ենք մոտակա կիրակի

օրը, դրա համար ետ ենք զգում կամ առաջ: Ուրեմն, կկատարենք վաղը չէ մյուս օրը: Առաջ հավաքվում էին միայն երեխաները, իսկ երբ մեծացա, սկսեցին հավաքվել մեծերը, իսկ իմ ընկեր-ընկերուհիները գալիս են հաջորդ օրը:

Հեռախոսը զանգահարեց: Խիտան չհարժվեց տեղից: Հայրը նայեց նրան:

— Չեմ վերցնի,— ձեռքը թափ տվեց աղջիկը:— Դա մի տղա է:

— Ի՞նչ գիտես:

— Գիտեմ,— մեքենայաբար թելի ժամացույցին նայելով, ասաց Խիտան:— Լավ տղա է, բայց իզուր է զանգահարում այսօր:

Հեռախոսը չէր դադարում: Խիտան վեր կացավ եւ բարկացած դեմքով վերցրեց հեռախոսափողը:

— Մայրի՞կ... Ես կարծում էի, թե տղաներն են, դրա համար... Ներողություն: Տանն է, իհարկե: Այո, այո, շուտ-շուտ խառնում եմ, հետեւում: Ինչպե՞ս: Ոչ որի՞... Ինչո՞ւ... Այո, դեռ չեմ ասել ոչ որի, բայց արդեն ուզում էի զանգ տալ բոլորին: Լավ... Լավ:

Մոտենալով հորը, նա ասաց տարակուսանքով.

— Մայրիկը պատվիրեց առայժմ ոչ որի չասել քո վերադառնալու մասին... Իսկ ես արդեն ուզում էի...

— Մայրիկն իրավացի է,— մռայլվեց Ժիրայրը:

— Ոչ,— ժպտաց Խիտան,— դու վատ բան ես մտածում, իսկ դա սխալ է: Հիմի ուրիշ ժամանակներ են, դու դեռ չգիտես:

— Ես ժամանակների մասին չեմ ասում,— աղջիկս, այլ մայրիկի:

— Դու նրան էլ չգիտես: Նա բարի կին է, չնայած որ այդպես է:

— Ի՞նչպես:

— Ինչպես տեսնում ես: Ես ինքս էլ չեմ կարող բնորոշել: Բայց կտեսնես, նրա պատվերը լավ իմաստ ունի:

Ժիրայրը ոչինչ չպատասխանեց:

— Իսկ ինձ ոչ որ չի կարող զրկել իմ հայրիկից,— ասաց Խիտան հանկարծ:— Եվ ոչ էլ դու կարող ես խուսափել ինձանից: Ես կգամ քո ետեւից մինչեւ աշխարհի ծայրը...

6

Երբ Գլենցների ընտանիքը հավաքվեց ճաշի սեղանի շուրջը, Բրաբին դիմեց Ջոնին.

— Դու մարդկանց արդեն ասե՛լ ես հորդ վերադառնալու մասին:

— Ոչ...— Ջոնը շփոթված կարմրեց եւ գդալը բերանի մոտից ետ տանելով, դրեց տեղը:— Մոռացել էի... Գիտե՞ս, հայրիկ, ես ուշացել էի խմբակի պարապմունքից ու հենց որ հասա, իսկույն սկսեցի խոսել: Իսկ դուրս գալիս մի այնպիսի վեճ սկսվեց մեր մեջ, որ ամբողջ ճանապարհին ոչնչի մասին չէինք խոսում՝ բացի կիսահաղորդիչներից: Հայրիկ, դու գիտե՞ս, թե ինչ են դրանք:

— Գիտեմ: Մի քիչ:

— Վաղը եւ մյուս օրը նույնպէս ոչ որի չասես, Ջոն:

— Ինչո՞ւ...

— Բրաբի, գուցէ ես խանգարում եմ ձեզ իմ ներկայությամբ:

— Դու ինձ չես հասկանում, Ժիրայր, ես ուզում եմ պուրպրիզ անել:

— Տեսնո՞ւմ ես, հայրիկ, ախր ես քեզ ասացի:

— Խիտա, ի՞նչ ես աթոռոյ կպցրել հայրիկի աթոռին: Տեսնո՞ւմ ես, չի կարողանում թեւս ազատ շարժել:

— Իմ ի՞նչ գործն է, մայրիկ: Իմ հայրիկն է՝ ես էլ խանգարում եմ:

— Դու ինձ չես խանգարում, աղջիկս:

— Իսկ ես ուզում եմ, ափսոս: Որպէսզի չտարվես ուտելով ու ինձ մոռանաս:

Հեռախոսը զանգահարեց:

— Մի վերցրեք,— խնդրեց Խիտան:

— Ջոն, մոտեցիր,— կարգադրեց մայրը:

— Միշտ Խիտան է խանգարում ճաշը,— դժգոհ ասաց եղբայրը՝ վեր կենալով: Վերցնելով հեռախոսափողը, նա ձեւացրեց քրոջ ձայնը:— Ալո՛... Տանն է: Ճաշում է: Խիտա, եկ:

— Ճաշում եմ:

— Խիտա...— ասաց մայրն անարտահայտիչ ձայնով:

Աղջիկը մոտեցավ հեռախոսին, վերցրեց փողը, առանց լսելու իսկույն ասաց դրա մեջ միայն մի բան՝ «վաղը», եւ դրեց տեղը:

— Հայրիկ,— դիմեց որդին Ժիրայրին՝ վերցնելով մի կտոր հաց,— պատմիր քո մասին որեւէ բան:

— Ճաշի ժամանակ չի կարելի խոսել,— ոչ թե նկատողություն անելու, այլ հիշեցնելու ձեւով ասաց մայրը:

— Հարցը նույնիսկ դա չէ,— ասաց Ժիրայրը մռայլվելով եւ ուտելն ընդհատելով:— Լսիր, Ջոն... Կան ողբերգական, ծանր կամ թեկուզ միայն լուրջ այնպիսի նյութեր, որոնց մասին չի կարելի խոսել ի միջի այլոց, ճաշելուն զուգահեռ, ասենք թե՛ ինչպէս թեթեւ երաժշտություն, մարտողության համար...

— Ներողություն, հայրիկ,— անկեղծ գոջաց տղան,— ես չեի ուզում քեզ վիրավորել...

Ժիրայրը չպատասխանեց, չմեղմացրեց կացությունը: Լուռ շարունակեց ուտել: Միայն թե ճաշն այժմ նրան թվում էր մի քիչ ավելի թթվաշ: Նա այն տպավորության տակ էր, թե խոսել էր ոչ թե իր որդու հետ, այլ մի անծանոթ, օտար տղայի՝ բավական անտակտ:

Խիտան մի երկու անգամ հայացքն արագ-արագ եղբոր ու հոր վրա շուռ տալուց հետո ասաց ժպտալով.

— Հայրիկ, դու ճիշտ ինձ նման ես ուտում՝ գոյլը բերանդ տանելիս շրթունքներիդ մի քիչ ձգում ես առաջ, կարծես թռչունն ուտելիք է բերում իր ձագերին, իսկ նրանք կտուցներն են երկարում դեպի նա: Ճիշտ ինձ նման: Այ թե ինչ է նշանակում հայր ու աղջիկ:

— Ոչ թե նա քեզ նման, այլ դու նրա,— ուղղեց եղբայրը:

Երկրորդ պնակի ժամանակ Բրաբին խոհանոցից բերեց մի շիշ գինի, տվեց որդուն բաց անելու: Լցրեց բաժակները:

— Բարի վերադարձ քեզ, Ժիրայր,— ասաց նա իր անարտահայտիչ ձայնով, բայց ուղիղ նայելով ամուսնու աչքերին:

Ժիրայրը նայեց սպասողական, տագնապած: Նրան թվում էր, թե հրաշք էր տեղի ունենալու իր աչքի առաջ, եւ ինչպես կինոյում մի պատկերը հալչելով փոխարինվում է մի այլ պատերով, հալչելու է իր առջեւ նստած կինը եւ նրա փոխարեն հայտնվելու է վատ հագնված, նիհար, հարազատ ԲրաբիՆ...

— Բարի վերադարձ,— կրկնեց դիմացի կինը:— Ինչպես ընդունված է ասել՝ կրածդ թող ապաշխարանք լինի:

Եվ, տարօրինակ գուգադիպությամբ, նա իր անարտահայտիչ ձայնով, իր դեմքի անդրդվելի արտահայտությամբ, կրկնեց այն խոսքերը, որոնք Ժիրայրն այսօր արդեն լսել էր մի անգամ՝ հոգեբույս հուզմունքով արտասանված մի ուրիշի կողմից.

— Ցանկանում եմ քեզ ամեն լավ բան աշխարհում:

Բայց ոչ, խոսքերը նույնպես մի քիչ տարբեր էին: Այն ժամանակ նրան ասացին՝ «ամեն, ամեն լավ բան»...

Այնուամենայնիվ, չնայած այս կնոջ ցրտաշունչ արտահայտությանը, Ժիրայրը բնավ չկասկածեց նրա խոսքերի նույնքան անկեղծությանը: Եվ, իրոք, ի՞նչ առիթ ուներ Բրաբին կեղծելու, ամեն լավ բան չցանկանալու անարդարացիորեն այդպես դաժանորեն տուժած մարդուն, ընդ որում՝ իր գավակների հորը...

— Կենացդ, հայրիկ,— ցատկեց տեղից տղան եւ, մոտենալով հորը, բաժակ չխկացրեց նրա հետ:

— Մեր կենացը, հայրիկ,— ասաց Խիտան,— իմ եւ քո...

— Դո՛ւ որտեղից լույս ընկար,— ծաղրեց եղբայրը:

Խիտան միայն ձեռք թափ տվեց նրա վրա եւ կրկնեց՝ սակայն մի փոքր ուղղումով.

— Զո եւ իմ...

Նա բաժակը դրեց վար, արագ մոտեցավ բուֆետ-պահարանին, բերեց այնտեղից մի թեյի բաժակ: Մայրն ու եղբայրը լուռ հետևում էին նրա շարժումներին: Իսկ հայրը չէր տեսնում իր աղջկա արածը, նա տեսնում էր միայն իր աղջկան:

Խիտան իր եւ հոր գինին լցրեց թեյի բաժակը, ճոճելով խառնեց եւ նորից լցրեց գավաթները:

— Խիտա՛...— բացականչեց հայրը՝ անսպասելիորեն բարձր ձայնով,— իմ ազատության...

Աղջիկն իր փոքր ձեռքով վայրկենապես փակեց հոր բերանը.

— Լսիր, հայրիկ... Խնդրում եմ... Էլ ոչ մի խոսք... Դրա վրա ոչինչ չի կարելի ավելացնել...

Գուցե կողմնակի դիտող որեւէ անհոգի մարդու համար թատրոնական թվար այդ ամենը: Գուցե հենց իրենց եւս, ներկա գտնվողներին եւ նույնիսկ մասնակիցներին, այդպես թվար որոշ ժամանակ հետո: Բայց ոչ այդ րոպեին:

Չոնն արտասովոր ակնածությամբ նայում էր Խիտային, կարծես դա իր կրտսեր քույրը ջիներ, իր ամենօրյա քույրը, այլ անծանոթ ու հրաշալի մի էակ: Իսկ Բրաբին, որ նայում էր իր գեղեցիկ, բայց անարտահայտիչ աչքերով, հանկարծ սեղանի վրա դրեց իր մի բռունցքը, ապա դրա վրա՝ երկրորդը եւ ճակատը հպեց դրանց: Սակայն դա տեսեց միայն մի վայրկյան: Ոչ ոք չտեսավ:

Խիտան կատարեց եւս մի խենթություն: Խլեց հոր կիսատ գավաթը նրա բերանի մոտից, խմեց ինքը, իսկ իրենը տվեց նրան:

Ժիրայրը, որը միայն հուզմունքից մոռանալով էր, որ սկսել էր անմիջապես խմել իր գինին՝ առանց խոսք ասելու, արտասանեց՝ Խիտայի կիսատ բաժակը ձեռքին.

— Շնորհակալություն ձեզ, սիրելիներ...

Այնուամենայնիվ, որքա՛ն արտահայտիչ է մարդկային ձայնը, որքա՛ն անհաշիվ են դրա տարբեր ինտոնացիաները... Նա ասաց ճիշտ այդպես եւ ոչ ուրիշ կերպ՝ «շնորհակալություն ձեզ, սիրելիներ», ընդ որում՝ չնայեց ոչ մեկին, բայց նրան ունկնդրող երեքն էլ զգացին, որ «շնորհակալություն»-ը վերաբերում էր երեքին, իսկ «սիրելիներ»-ը՝ միայն երկուսին...

— Շնորհակալություն... Ես չգիտեմ, թե ինչպես է դասավորվելու իմ կյանքն առաջիկայում, ես չգիտեմ, թե... Ես ոչինչ չգիտեմ: Բայց, ինչ էլ որ լինի, ես... Թույլ կտա՞ք չխոսել...

— Դու այլեւս ասելու բան չունես,— ժպտաց Խիտան,— դու արդեն ամեն ինչ ասացիր: Խմիր, հայրիկ:

Ճաշից հետո մայր ու աղջիկ սկսեցին հավաքել սեղանը, իսկ հայր ու որդի դուրս ելան բակի կողմի պատշգամբը: Չոնն շտապում էր ցույց տալ հորն իր արհեստանոցը:

Ընդարձակ պատշգամբի մի փոքր մասը պատնեշված էր մնացյալից եւ ապակեպատված: Հայր ու որդի ննջարանի դռնով դուրս գալով պատշգամբի բաց մասը, մտան այդ վերանդա-արհեստանոցը:

— Հայրիկ, դու ի՞նչ կրթություն ունես,— հետաքրքրվեց տղան:

— Միջնակարգ:

— Նրա համրա եմ հարցնում, որ իմանամ, թե ինչ կերպ բացատրեմ քեզ զանազան բաների մասին՝ մակերեսորե՞ն, թե մանրամասն:

— Մանրամասն, Չոն, մանրամասն:

— Կիսահաղորդիչները, հայրիկ, լայն տարածում գտան միայն վերջին տարիներին: Դու հետեւե՞լ ես տեխնիկական գրականությանը:

— Ոչ պարբերաբար: Ինչ որ ձեռքս ընկել է: Եվ ինչ որ հասկացել եմ: Դու, Ջոն, բացատրիր ինձ այնպես, որպես թե ես չափահաս մարդ չեմ, այլ ընդամենը քսաներեք տարեկան...

— Քսաներեքն էլ է չափահաս,— ծիծաղեց որդին,— եւ ինձանից վեց տարով մեծ:

— Այդ դեպքում պատմիր որպես տասերեք տարեկանի:

— Ախ, հայրիկ, հայրիկ,— մեծավարի հառաչեց Ջոնը,— ետ ես մնացել կյանքից: Տասներեք տարեկան պիոներները կիսահաղորդիչներով ռադիոընդունիչներ են պատրաստում:

— Ապրես, Ջոն, դու ճիշտ գտար բառը: Խոսիր ինձ հետ ինչպես կյանքից ետ մնացած մարդու: Վերադարձիր ետ տասնվեց տարով...

— Մի տարեկան հասակից ես ոչ մի հուշ չունեմ,— ծիծաղեց որդին:

Ծիծաղեց նաեւ հայրը:

Ջոնը, ձեռքը մեկնելով դեպի աշխատասեղանի վրա դրված ինչ-որ կիսահավաք սարք, արդեն ուզում էր բացատրություններ տալ, բայց Ժիրայրը բռնեց նրա ձեռքը.

— Սպասիր: Նստենք մի քիչ: Դու ուզում ես սկսել ոչ ամենասկզբից: Նախ՝ ասա՝ ի՞նչպես եղավ, որ սկսեցիր հետաքրքրվել տեխնիկայով:

Ջոնը լարեց հիշողությունը, բայց ասաց մի պահ անց.

— Չգիտեմ:

— Մի շարք մեծ մարդկանց կենսագրության մեջ, գլխավորապես ուրիշների գրած, եւ ոչ թե իրենց, ասվում է, որ նրանք դեռ վաղ մանկությունից գիտակցելով գիտության ու տեխնիկայի դերը մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ, որոշել են իրենց ուժերը նվիրել այդ գործին: Նկատի առ՝ դեռ վաղ մանկությունից...

— Դրա համար էլ նրանք մեծ մարդիկ են դարձել, հայրիկ: Իսկ ես... Իսկ ինձ մոտ ամեն ինչ սկսվեց կարծես խաղալիքներից:

— Ճիշտ է, Ջոն: Ի միջի այլոց, մեծ մարդկանց մոտ էլ, կարելի է չկասկածել, սկսվել է դրանից: Իսկ կենսագրությունները փչոցներ են: Կարելի է գրել ամեն տեսակ կենսագրություն: Բայց մի կողմ թողնենք վաղ մանկությունը: Իկա հիմա՞ ինչի մասին ես մտածում, օրինակ, այս սարքը պատրաստելիս:

Որդին տարակուսանքով նայեց հորը եւ նրա նիհար դեմքի երկու կողմերում ականջները դարձան կարծես ավելի ցցուն:

— Մտածում եմ, որ շուտ ավարտեմ,— ասաց նա վերջապես:

— Ուրի՞շ:

Ջոնը մոլորված նայեց կիսավարտ սարքին, կարծես դրա մեջ էր ուզում գտնել պատասխանը:

— Ուրի՞շ... որ չտխրեցնի ինձ, աշխատի:

— Ուրի՞շ:

— Չեմ կարող պատասխանել, հայրիկ, չեմ հասկանում հարցիդ իմաստը:

— Ուրիշ՝ արդեն սկսիր մտածել ժողովրդի մասին, դու այլևս վաղ մանկության մեջ չես: Պատրաստվիր մոտ ապագայում այնպիսի սարքեր պատրաստել, որ հեշտացնես կյանքը մարդկանց համար: Դեռ շատ դժվար են ապրում մարդիկ աշխարհում, Ջոն, դու չգիտես...

Ջոնը գլխով դրական շարժումով արեց եւ մտասուզվեց:

— Հայրիկ, դու հումանիտա՞ր գիտություններ ես ավարտել,— հարցրեց նա մի պահ անց:

— Այո:

— Ինստիտո՞ւտ:

— Ակադեմիա:

— Ո՞րտեղից,— թերհավատորեն նայելով, հարցրեց որդին:— Եվ ե՞րբ: Քիչ առաջ դու ասացիր, որ միջնակարգ կրթություն ունես:

— Էլի դերերը փոխվեցին,— ծիծաղեց հայրը:— Կարծեմ ես էլ հարցեր տվողը:

— Իսկ մի՞թե ինձ չի կարելի հարցեր տալ,— մի քիչ նույնիսկ վիրավորվեց որդին:

— Կարելի է, ինչո՞ւ չէ, Ջոն: Բայց ավելորդ է, որովհետեւ ես քո բոլոր հարցերին մի պատասխան եմ տալու: Կարող եմ եւ սկզբից, առանց հարցերիդ սպասելու: Լսիր...

Ժիրայրը դանդաղեց, մտքով գնաց ինչ-որ հեռու, շատ հեռու տեղ եւ ապա արտասվեց.

— Մի նայիր այդ հորից ներս, մազերդ կխանձվեն դրա բոցերից...

— Ի՞նչ հոր:

— Այն որ այլևս գոյություն չունի: Գիտե՞ս ինչ, Ջոն... Կան բաներ, որոնց համար դու հիմա էլ դեռ վաղ մանկության մեջ ես: Մի շտապիր: Հասունությունը կգա իր ժամանակին: Ուրեմն, անիր կիսավաղորդիչներից: Ես լսում եմ:

Բայց նրանց վիճակված չէր զբաղվել կիսահաղորդիչներով: Արհեստանոցի շեմքի վրա հայտնվեց Խիտան եւ ասաց առարկություն չվերցնող տոնով.

— Ջոն, այսքան ժամանակ զբաղեցրիր իմ հայրիկին՝ բավական է: Շնորհակալություն հայտնիր ինձ ու ազատիր նրան:

— Դուրս ես տալիս,— բարկացավ եղբայրը:

Քույրը շոշափեց նրա թույլ տեղը.

— Մի ամիս է, որ չարչարվում ես դրա վրա, բայց դեռ չես վերջացրել: Այն էլ դեռ հարց է, բան դուրս կգա՞:

Ջոնը մռայլվեց, մտածկոտ շոյեց կիսահավաք սարքը եւ մրմնջաց.

— Որովհետեւ ժամանակ չկա, հա՛ խմբակ, հա՛... Լավ, հայրիկ, ես քեզ հետո կբացատրեմ, Խիտան եկավ խանգարեց...

Նա վերցրեց պտուտակների փոքրիւ բանալին:

— Հաջողություն եմ ցանկանում, Ջոն,— բարեմաղթեց հայրը:— Ես համոզված եմ, որ դուրս գալու է: Կարդա ավելի շատ տեխնիկական գրականություն: Եվ մտածիր ժողովրդի մասին...

«Ի՞նչ կարող եմ ասել այդպիսի ընդհանուր խոսքերից բացի»,— տխուր մտածեց նա:

Երբ հայր ու աղջիկ մտան ննջարան, եւ Ժիրայրն ուզում էր դուրս գալ մյուս սենյակը, Իսիտան բռնեց նրա երկու ձեռքը, նստեցրեց նրան գրասեղանի մոտ դրված բազմոցի վրա, ինքը նստեց նրա դիմաց, աթոռին: Ժիրայրը ներքին զարմանքով նայեց նրան: Նա այլևս կես-երեխա չէր, այլ չափահաս աղջիկ:

— Հայրիկ... Մայրիկը դեռ չի՞ պատմել քեզ մեր մասին: Իր մասին...

— Դեռ ոչ:

— Կարող է եւ չպատմել: Ոչ թե ինչ-որ բան թաքցնելու համար, այլ որովհետեւ նա ընդհանրապես քչախոս է եւ մի տեսակ փակ: Կամ կարող է շատ հետո, որեւէ անգամ: Դրա համար ես ինքս եմ ուզում պատմել...

— Ոչ, Իսիտա,— ասաց Ժիրայրը վճռական:— Թող մայրիկն ինքը պատմի: Ես կսպասեմ:

— Լավ,— համաձայնվեց Իսիտան՝ նրան երկար նայելուց հետո: Ապա, կարծես ինքնիրեն, կրկնեց.— սպասել...

Թվաց, թե նա ավարտած համարեց խոսակցությունն այդ մասին եւ անցնելով այլ նյութի, ասաց հորը.

— Դու գուցե ուզում ես հանգստանա՞լ ճաշից հետո, հայրիկ: Զո բազմոցի վրա: Հիմա դա քոնն է լինելու: Ջոնը կքնի ծալովի մահճակալի վրա, որն այսօր գնեց մայրիկը: Իսկ այս սենյակում քնում ենք ես ու նա: Սա նրա մահճակալն է, իսկ մյուսը՝ իմ:

— Շնորհակալություն, Իսիտա,— ասաց Ժիրայրը կամացուկ:

Աղջիկը չհարցրեց, թե ինչի համար է հայրը շնորհակալ: Նա հասկացավ:

Ժիրայրը վեր կացավ գնալու իր սենյակը: Իսիտան կրկնեց.

— Մայրիկն այնքան քչախոս է...

— Դու արդեն ամեն ինչ ասացիր, աղջիկը,— ժպտաց Ժիրայրը:— Համենայն դեպս՝ ամենաանհետաձգելին: Այժմ կարելի է եւ սպասել: Եվ նույնիսկ չսպասել:

— Կարելի՞ է միհարց, հայրիկ:

— Ասա, աղջիկս:

— Դու ի՞նչ կրթություն ունեիր երբ... գնացիր:

— Միջնակարգ:— Ժիրայրը հարցական նայեց նրան:

— Ուրիշ ոչինչ, հայրիկ:

— Բայց եւ այնպե՞ս:

— Առանց նպատակի, հայրիկ: Հիշեցի ժողովրդական մի իմաստություն՝ վաղուց արդեն շարլոն դարձած: Ուզեցի մի անգամ էլ համոզվել, որ դա, չնայած շարլոն է, բայց իմաստուն է:

— «Կյանքն ամենամեծ դպրոցն է»: Դա՞:

— Այո:

— Բայց թերի է այդ իմաստությունը: Լրացնե՞մ:

— Ոչ, հայրիկ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ես եմ ուզում լրացնել:

— Դո՞ւ...

— Կարծում ես չե՞մ կարող, հայրիկ: Այդ դպրոցը տեր-թողիկյան է, ֆալսիֆայով...

Ժիրայրը վեր ցատկեց տեղից եւ ուժգին գրկելով, համբուրեց աղջկա ճակատը:

— Իմ խելոք աղջիկս:

Խիտան ծիծաղեց:

— Ինչո՞ւ ես ծիծաղում:

— Իմ եւ քո վրա: Ես միշտ մտածում էի, թե ո՞րտեղից է իմ էքսպանսիվ բնավորությունը, երբ մայրիկը բոլորովին հակառակն է: Հիմա տեսնում եմ՝ դա քեզանից է գալիս, հայրիկ:

— Մայրիկն էլ էրառաջ այդպես:

— Չի կարող պատահել,— անսպասելիությունից բացականչեց Խիտան:

— Աշխատիր, աղջիկս,— շարունակեց հայրը,— որերբեք, երբեք կյանքում քո մասին եւս չասեն նույնը՝ անցյալ կատարյալով. «Խիտան էլ էր առաջ այդպես»: Միտո՞ւմ ես՝ սիրիր հոգուդ ամբողջ թափով, ատո՞ւմ ես՝ նույնպես: Հիանո՞ւմ ես մի բանով կամ զարմանո՞ւմ ես մի բանի վրա՝ ապա թունդ էլ ամբողջ էությանբ: Մի լինիր այսբերգի նման՝ ինը տասներորդը ջրի տակ, անտեսանելի, եւ միայն մի տասներորդը մակերեսից բարձր: Մի ամաչիր բղավելուց, տնքալուց, քրքջալուց, եւ խաղաղվեիր միայն այն դեպքում,— թշնամուս էլ չէի ցանկանա այդ,— եթե դատարկվես, սպառվես, ոչինչ չունենաս արտաբերելու: Չկա ավելի տխուր տեսարան, քան երբ մեկը ծիծաղում է առանց ուրախ կամ զոհն տխուր լինելու: Դա թարս շուռ տված այսբերգ է: Այդ դեպքում, իրոք, ավելի լավ է լինել խաղաղ եւ... քշախոս:

— Մխավում ես, հայրիկ, մայրիկը ոչ դատարկվել է, ոչ սպառվել:

— Ուրեմն ավելի վատ: Դա, ուղղակի ասած, սարսափելի է: Դա նշանակում է ոչ թե մինչեւ իսկ այսբերգ լինել, այլ ստորջրյա խուրժ: Այդպիսի մարդը մի օր ինքն է ընդհարվելու իրեն եւ խորտակվելու: Ցանկանք, որ դա չվերաբերի մայրիկին: Իսկ ես այդպես ապրել չեմ կրաող: Այ, հիմա նստած եմ քեզ հետ, այստեղ, բայց գիտե՞ս ինչ եմ ուզում: Ուզում եմ բարձրանալ կտուր եւ այնտեղից բղավել Երեւանով մեկ, բղավել ազատությունից, ուրախությունից, ապրելու եւ աշխատելու տենչից, սիրուց, ամեն ինչից...

— Մեզ կտանեն միլիցատուն,— ծիծաղեց աղջիկը:

— Մե՛զ: Ես բղավելու եմ տասնվեց տարվա կուտակվածը: Իսկ դո՛ւ ինչ գործ ունես իմ կողքին, կտուրի վրա,— գվարթ հարցրեց հայրը:

— Իսկ ես բղավելու եմ ավելի շատ տարիներով կուտակվածը: Բա՛ս... Հաղթվեցի՞ր, հայրիկ: Չասես, թե հիմար աղջիկ ունես: Դու դեռ չես ճանաչում ինձ: Աստիճանաբար կճանաչես ու կկորցնես իմ նկատմամբ ամեն հետաքրքրություն:

— Ինչո՞ւ:

— Ի՞նչ հետաքրքրիք է հայելու մեջ ժամերով նայել իրեն:

— Դու հայելի չես, Խիտա: Հայելին կամ նույնությամբ է արտացոլում, կամ աղավաղում է:

— Այո, միայն,— համաձայնվեց աղջիկը:— Եվ երբեք ավելի չի գեղեցկանում, քան իրականության մեջ է:

— Ուրե՛մն: Չէ՞ որ դու հրաշալի ես, աղջիկս:

— Ուրեմն հայելին ոչինչ չի աղավաղել:

Նայելով միմյանց, նրանք բարձր ծիծաղեցին, որ նստել են ահա այդպես եւ գովում են իրար:

7

Առաջին առավոտը Երեւանում...

Ժիրայրը բաց արեց աչքերը, նայեց: Չի կարելի ասել, թե նա մի պահ չհասկացավ իր որտեղ լինելը: Ընդհակառակը, ամբողջ գիշերը, քնի մեջ, նա զգում էր այդ եւ նրա էության մեջ տարածվել էր երանությունը,— երանություն անկողնի փափկությունից եւ բազմոցի ճկունությունից, երանություն թարմ օդից, որը հորդում էր երեկոյից ի վեր բաց թողած օդանցքով, երանություն հոգու, նյարդերի, մտքերի... Բայց, ոչ, ոչ մտքերի: Քնի մեջ անգամ արթուն էր նրա մոտ այն գիտակցությունը, որ այդ տունն իրենը չէ, ինքը միայն հյուր է այնդտեղ:

Այժմ, արթնանալով, նա զգաց, թե ինչպես ամբողջ գիշերը նրա երանության վրա շաղ եկած տհաճության այդ փոշին հավաքվեց, կուտակվեց, պնդացավ եւ վերածվեց քարի ամրություն ունեցող հարցի՝ «Լավ, իսկ հետո՞»...

Ժիրայրը նայեց Ջոնի կողմը: Ջոնն արդեն չկար: Ծալովի մահճակալը՝ նույնպես: Չկար նույնիսկ արձակ տարածությունը. հեռախոսի եւ ռադիոընդունիչի սեղանակները դրված էին իրենց նախկին տեղերում:

«Ոչ միայն հյուր,— անցավ Ժիրայրի մտքով,— այլեւ անկոչ հյուր: Գրավել եմ տղայի տեղը»...

Նա արագ վեր կացավ, նայեց բուֆետ-պահարանի վրա դրված ժամացույցին: «Լա՛վ ես սկսում առաջին առավոտդ,— բարկացավ նա մտքում իր վրա:— Ե՛րբ ես վերջին անգամ արթնացել այսքան ուշ»...

Մոտենալով լուսամուտին, նա տեսավ՝ փողոցը եռուզեռի մեջ էր, անցնում-դառնում էին մարդիկ, գնում-գալիս էին տրամվայներն ու մեքենաները:

Գնաց լվացվելու: Անցնելով խոհանոցի դռան մոտով, նա դրա ապակու միջով տեսավ, որ խոհանոցի մյուս դուռը պատշգամբի վրա բաց է: Տեսավ Խիտային՝ պատշգամբում մարգանք անելիս: Լվացվելուց հետո, նախքան սենյակ վերադառնալը, խոհանոցով դուրս ելավ պատշգամբ:

Խիտան արդեն չկար: Ջոնի արհեստանոցից գալիս էր խարտոցի խզոց: Ժիրայրը չուզեց խանգարել տղային եւ վերադարձավ իր անկողնու մոտ:

Անկողինն արդեն չկար: Բազմոցը կարգի էր բերված նստելու համար: Սենյակում ամեն ինչ վերստացել էր իր երկրաչափական կանոնավորությունը:

Ժիրայրը հագավ իր զինվորական տիպի հնամաշ վերնաշապիկը, կարգի բերեց իրեն, նստեց բազմոցի վրա՝ գնացքի սպասող ուղեւորի նման: «Նստո՞ւ...— նորից անցավ նրա մտքով,— հետո՞»...

Ննջարանի դուռը թխկթխկաց մի քանի անագմ, բացվեց, եւ այնտեղից դուրս ելավ Բրաբին՝ խալաթով, տնային ոտնամաններով: Շքեղ խալաթի մեջ նա անհամեմատ ավելի կանացի էր եւ փարթամ: Մոտենալով Ժիրայրին, նա մտերմաբար բարեւեց եւ սեղանի վրա դրեց թղթադրամի մի սովար կապ:

— Կոստյում կգնես քեզ համար, կոշիկներ, գլխարկ... սպիտակեղեն: Իհարկե, նաեւ վերնաշապիկ, գուլպաներ, թաշկինարներ, ինչ որ պետք է:

— Շնորհակալություն, Բրաբի: Բայց ես չեմ վերցնի այդ դրամը:

— Հիմարություն: Տղամարդու ավելորդ ինքնասիրություն:

Բրաբին նստեց ամուսնու կողքին, բազմոցի վրա:

— Ասում են՝ ինձ ինչ-որ գումար է հասնում, Բրաբի:

— Եվ ուղեգիր՝ հանգստանալու: Բայց դրանք կլինեն մի քիչ ուշ: Իսկ վաղը մեզ մոտ հյուրեր են գալու:

— Ես կվերադարձնեմ այդ գումարը,— գլխով ցույց տվեց Ժիրայրը դեպի սեղանը:

— Չեմ առարկում:

— Բրաբի:

— Ասա:

— Դու գո՞հ ես երեխաներից:

— Այո: Իսկ դո՞ւ:

— Նույնպես: Շնորհակալություն քեզ՝ նրանց դաստիարակելու եւ ամեն ինչի համար:

— Կարիք չկա: Ես պարտավոր էի: Նրանք իմ երեխաներն են:

Արտաքնապես շեշտը դրված չէր «իմ»-ի վրա եւ այդ բառը թռավ-անցավ համարյա աննկատելի: Բայց դա զեփյուռ չէր, այլ չուզումն արկ:

— Բրաբի, նրանք ոչնչի կարիք չե՞ն գագացել:

— Երբ ամբողջ ժողովուրդն էր զգում՝ նրանք էլ միասին: Իսկ դրանից հետո՞ ոչնչի:

— Եվ... ոչ ոքի՞:

— Դու ուզում ես, որ պատասխանե՞մ:

— Ոչ: Դու արդեն պատասխանեցիր: Ուրե՞մն:

— Հիմար բան ես մտածում, Ժիրայր: Դու նրանց հայրն ես: Եթե չես պակասել անցյալում, դա չի նշանակում, թե ավելորդ ես ներկայումս:

— Շնորհակալություն, Բրաբի,— ասաց Ժիրայրը՝ մի պահ մտածելուց հետո:— Այս անգամ դու չես կարող ասել՝ «կարիք չկա»: Շնորհակալություն, որ նրանք չեն զգացել իմ բացակայությունը: Դա եղել է քո ջանքերի շնորհիվ:

— Հանդիմանո՞ւմ ես:

— Ոչ, գովում: Դու փոխարինել ես նաև ինձ:

— Հորը չի կարելի փոխարինել: Համենայն դեպս՝ դա կնոջ գործ չէ:

— Հասկանում եմ:

— Ժիրայր, երեկ դու ինձ հարցրիր իմ անցյալի մասին: Ուզո՞ւմ ես լսել:

— Ոչ: Կարիք չկա:

— Երեւի Խիտան արդեն...

— Ոչ, այլ նրա համար, որ դրանից ոչինչ չի փոխվի:

Բրաբին չպատասխանեց:

— Գնիր լավ կոստյում,— ասաց նա քիչ հետո՝ վեր կենալով:— Եթե էլի դրամի կարիք ունենաս՝ վերցրու գրասեղանի ձախ դարակից: Չխոսենք ապագայի մասին: Նա ինքը կգա եւ կխոսի իր մասին: Չգա քեզ՝ ինչպես քո տանը:

— Ես ինձ այդպես էլ զգում եմ,— ակամայից ժպտաց Ժիրայրը:— «Ինչպես» իմ տանը...

— Մի՞թե ես ու դու մեղավոր ենք, Ժիրայր: Մեզ բաժանեցին իրարից: Եթե քեզ բռնի զրկեցին ազատությունից, ապա ինձ, նույնքան բռնի, տվեցին ազատություն: Ես ուզում էի քո կինը մնալ ընդմիշտ: Հիշո՞ւմ ես:

— Մենք որոշեցինք չխոսել անցյալի մասին:

— Դու իրավացի ես:

Կինը խալաթի փեշերը հավաքեց իրար վրա՝ կարծես ցրտից:

— Զիչ հետո կնոսենք նախաճաշի:

— Երեխաները նո՞ւյնպես:

— Խիտան գնաց դպրոց, իսկ Ջոնը կգնա հիմա:

— Ես ավելի ուշ կնախաճաշեմ: Դրսում:

— Երկուշաբթի օրվանից ես նույնպես: Հիմնարկում:

— Դու ի՞նչ պաշտոն ունես, Բրաբի:

— Մի փոքրիկ գործարանի դիրեկտոր եմ:

— Եվ ունես բարձրագույն կրթություն:

— Անշուշտ: Ավարտեցի սրանից ութը տարի առաջ եւ անմիջապես նշանակեցին այդ աշխատանքին: Հա, Ժիրայր, ահա քեզ դոռան բանալի: Իսկ հիմա եկ մտածենք, թե ում ենք հրավիրելու վաղը: Մյուսներին ես ինքս: Ուրեմն, նախ եւ առաջ Անթառամին:

— Ո՞վ է Անթառամը:

— Մոռացել էս,— հարցրեց կինը՝ առանց զարմանալու:— Իմ ու քո այն ժամանակվա ընկերուհին:

— Հիշեցի,— ասաց Ժիրայրը, թեւ չհիշեց բոլորովին:

— Այնուհետեւ, Արտակին: Թե՛ Արտակը քո ժամանակ չկար: Այո, այո, նա հետո հայտնվեց: Դե, դա ոչինչ, նաեւ նրան, իհարկե: Իսկ է՛լ ում...

— Ես ոչ ոքի չեմ հիշում, Բրաբի: Եվ կարծեմ ոչ ոք էլ չկա: Ի միջի այլոց, ինձ համար միեւնույնն է: Ինքդ ընտրիր:

— Մեր թանոթներից մի քանիսը գոհվել են պատերազմում, մի քանիսը... նույնպես չկան: Իսկ մի քանիսն էլ Երեւանում չեն, ցրվել են զանազան կողմեր: Ուրեմն, Անթառամին: Մնացյալներին դու չես ճանաչում: Ես հիմա նշեմ եւ հեռախոսով հայտնեմ բոլորին: Ի միջի այլոց, Ժիրայր, դու վաղը տուն կգաս ժամը ութից ոչ շուտ: Ես ուզում եմ այուրպի՞զ անել բոլորին:

— Դա ներկայացո՞ւմ է:

— Ոչ: Ավելի լավ կստացվի:

— Ինչպես ուզում ես,— անտարբեր համաձայնեց Ժիրայրը:

Կինը մտավ ննջարան՝ հրավիրվածների ցուցակը կազմելու եւ համարյա իսկույն միջանցքի դռնից ներս մտավ Ջոնը՝ տնից գնալու պատրաստ:

— Բարի լույս, հայրիկ, դու արդեն վե՛ր ես կացել: Իսկ մենք կարծում էինք՝ դեռ քնած ես: Խիտան գնաց, պատվիրեց, որ համբուրեմ քեզ, բայց ես այդպիսի սենտիմենտալ բաներ չեմ սիրում: Թող ինքը գա՛ համբուրի: Ես գնում եմ դպրոց, կգամ, միասին կանցկացնենք ժամանակը: Դու տանը կլինե՛ս:

— Այո, ես առայժմ տանն եմ: «Ինչպես» տանը,— ակամայից դուրս թռավ ուղղումը նրա բերանից:

Ջոնն ուղղումը չսեց, ելավ դուրս:

Մենակության անտանելի զգացումը ճմլեց Ժիրայրի սիրտը: Նա վեր ցատկեց բազմոցից, համարյա վայելով սկսեց անցնել սենյակի մի պատից մյուսը: Ի՞նչ անել, ո՞ւր գնալ, ո՞ւմ հանդիպել...

Չհարցնել արդյոք Խիտայի դպրոցի հասցեն եւ վազ տալ նրա մոտ՝ իր աղջկա... Բայց նա այժմ զբաղված է դասերով, իսկ դասերից հետո... Նա հեռախոսով ասաց ինչ-որ տղայի՝ «վաղը»: Ինչո՞ւ խանգարել:

Էլ ուրեմն ո՞ւր գնալ, ո՞ւմ հանդիպել...

Ժիրայրը պատրաստ էր դուրս վազել դեպի փողոցները, գտնել գոնե այն սպիտակ վերարկուով անձանոթ կնոջը: Գտնել, բայց ի՞նչ ասել: Ասել՝ «բարեւ», այո՞: Եվ լսել՝ «Բարեւ: Ձեզ ի՞նչ է հարկավոր: Ծնորհավորեցի, որ վերադարձե՞լ եք: Փորձանք հո չընկա՞: Վազն անցեք ինձանից»...

Ոչ երեխաներն զբաղված են, եւ չեն օգնի նրան ո՛չ Բրաբին, ո՛չ անթանոթ կինը: Մենակության զգացումը կարող են փարատել միայն նրանք, ում հետ դու ապրել ես եւ աշխատել, չարչարվել եւ հանգստացել, սիրել եւ ուրախացել... Մարդիկ, որոնց հետ գտնվում ես որեւէ առնչության մեջ:

Ժիրայրը ցանկություն զգաց վերադառնալու այնտեղ, որտեղից եկել էր: Այնտեղ իր բախտակիրներն են, երկար տարիների իր ընկերները: Բայց ո, նրանք այլեւս այնտեղ չեն, նույնպես վերադարձել են իրենց տները:

Այ քեզ բան... Մի՞թե կարելի է լինել այսքան մենակ: Ոչ ընտանիք, ոչ բարեկամ, ոչ ըկներ, ոչ ծանոթ...

Ո՞ր գնալ, ո՞ւմ հանդիպել...

Ծիշտ է, կարելի է գնալ հիմնարկները՝ իր գործերը կարգավորելու: Կդիմավորեն նրան այնտեղ խղճահարությունը, կարեկցությունը, ափսոսանքը եւ նման ազնիվ ու վիրավորական զգացումներ: Բայց գուցե դա ավելի լավ է, քան գտնվել «ինչպես» իր տանը...

Ժիրայրն արագ հագավ բուշլատը, դրեց եռականջ մորթե գլխարկը եւ ելավ դուրս:

Պայուսակը նա վերցրեց իր հետ: Դա նկատեց միայն փողոցում, բայց այլեւս չվերադարձավ՝ տեղը դնելու:

Առաջին առավոտը Երեւանում...

Որքա՛ն է երազել նա այդ մասին: Եղե՞լ է արդյոք որեւէ առավոտ՝ մոտ վեց հազար այն առավոտներից՝ օտար, ողբերգական, որ նա չվերհիշեր ահա սա, եւ իրեն՝ ահա այսպես քայլելիս, այստեղով քայլելիս...

Վերհուշ... Ծերության միակ մխիթարությունը...

Բայց ի՞նչ ծերության մասին է խոսքը: Ծերությունը, ինչպես հայտնի է, գալիս է կյանքի վերջում, երբ դիմացն այլեւս ճանապարհ չկա, պատ է կամ վիհ, կամ, ավելի ճիշտ՝ մի փոքրիկ հողաթումբ: Առաջ նայել չես կարող, այնտեղ հեռանկար չկա: Նայում ես ետ: Եվ տանջալի քաղցրությամբ տեսնում ես երկար ճանապարհը՝ ձգված հովիտներով ու քարքարուտներով, մերթ ցեխի, մերթ վարդերի միջով, երբեմն՝ թխպոտ երկնքի տակ, երբեմն՝ պայծառ արեւի: Դա քո կյանքն է: Դու մտովին նորից ես կտրում այն, միայն թե հակառակ ուղղությամբ, ծերությունից մանկություն: Դանդաղելով ճանապարհի ամեն մի հատվածում, դու կամ ժպտում ես բավականությամբ, կամ մռայլվում ես դժգոհությունից, կամ հառաչում ես թախիծով... Երբ դու առաջին անգամն էիր անում այդտեղով, ժամանակ չունեիր մտածելու, դու պարզապես անցնում էիր: Իսկ այժմ խորհում ես եւ գնահատում. «Օհ, ի՞նչ լավ է եղել, ի՞նչ լավ եմ արել»... «Ափսոս... Բայց ուրիշ կերպ չէի կարող, դա ինձանից չէր կախված»... «Ինչպիսի՛ հիմարություն... Ի՞նչպես եմ կարողացել այդպիսի բան թույլ տալ ինձ»...

Հասնելով քո սեփական օրորոցին, դու կանգ ես առնում մի պահ, միայն մի պահ, թախիծով ու սիրով նայում ես անխռով քնած նորածնին եւ, շուռ գալով կրունկի վրա, պատրաստվում ես նորից անցնել նույն կյանքը, բայց արդեն սրբագրված: Այժմ դու մտադրվել ես որոշ բաներ կատարել նախկինից ավելի շատ, որոշ բաներից հրաժարվել իսպառ, եւ միայն այն դեպքերում, երբ որեւէ բան փոփոխելը քեզանից չի կախված, ակամայից կրկնել նույնությամբ:

Դու կրնկիդ վրա շուռ ես գալիս քո օրորոցից եւ սառը քրտինքն իսկույն պատում է ճակատդ: Փոխանակ առջելումդ ձգվող ճանապարհի, դու տեսնում ես մի փոքրիկ հողաթումբ՝ ուղղակի ոտքերիդ տակ: Ճանապարհ չկա, դա ճանապարհի վերջն է, դու արդեն հասել ես: Ո՛չ նույնությամբ, ո՛չ սրբագրված, դու այլեւս չես կարող անցնել ոչ մի ճանապարհ, ոչ մի սանտիմետր: Կյանքը մի անգամ է տրված եղել քեզ...

Բայց պատահում է երբեմն, ոմանց հետ, երբ ծերությունը գալիս է ոչ թե կյանքի վերջում, երբ այլեւս չկա ոչ մի ճանապարհ, այլ կեսին, երբ մյուս կեսը դեռ արջելումն է: Այժմ, վերադառնալով մինչեւ օրորոց, դու կյանքդ կարող ես սկսել նորից, քո ուզածի պես:

Իհարկե, կա այստեղ որոշ չափազանցություն: Ոչ թե ծերությունն է գալիս կյանքի կեսին, այլ ծերության հատուկ խոհն ու հաշվեհարդարը քո անցած ճանապարհի մասին: Եվ, ինչպիսի՜ երջանկություն, այդ խոհն ու հաշվեհարդարը ոչ թե անհեռանկար է, միայն միխթարություն կամ ինքնախարազանման համար, այլ քո առաջիկա ճանապարհի նախապատրաստությունն է...

Բանտարկության տարիները Ժիրայրի համար հանդիսացել էին ահա այդ «ծերությունը» կեսճանապարհին եկած: Տասնվեց տարի շարունակ չունենալով ներկա, ավելի ճիշտ՝ ունենալով այնպիսի ներա, որից բաղձում ես հեռանալ գոնե մտովին, նա անդադար ունեցել էր երկու ապաստան՝ մերթ անցյալի երազները, մերթ ապագայի ծրագրերը: Եվ նրան հավասարապես հաճելի էին եղել այդ երկու ապաստանները եւս, որովհետեւ դրանց երկուսի վրա էլ փողփողել էր ազատության դրոշակը:

Տարբերությունն անցյալի եւ ապագայի միջեւ այն էր, որ անցյալն ուներ միայն մի վարիանտ՝ այն, որ եղել էր, իսկ ապագան՝ հազար վարիանտներ: Բայց այն մեկը հազար անգամ ավելի լավ էր հազարից, որովհետեւ իսկական կյանքն էր: Իսկ այդ հազարը նույնպես, հազար անգամ լավ էին մեկից, որովհետեւ հնարավոր էին եւ ենթակա էին Ժիրայրի ազատ ընտրությանն ու կամքին՝ իրականություն դառնալու համար: Եվ Ժիրայրը, հաշվելով բոլորներն ու ժամերը, անձկությամբ սպասում էր այն պահին, երբ հնարավորություն պիտի ունենար պոկվել տեղից ու վազել, վազել, վազել՝ անցնելու այդ հազար վարիանտ-ճանապարհներից որեւէ մեկով:

Իսկ ո՞ր մեկով:

Բանտարկության առաջին տարիներին մտածելով այդ մասին, նա մոլորվել էր անորոշության մեջ: Նա նման էր մի մարդու, որը պատրաստվում էր շուկա մտնել՝ մի սահմանափակ գումար գրպանում: Քանի դեռ չի գնել ոչինչ՝ նա պոտենցիալ կերպով կարող է գնել ամեն ինչ՝ բոլոր մրգերը, բոլոր պտուղները, բոլոր բարիքները: Բայց բավական է, որ գնի դրանցից մեկը՝ ծախսելով ունեցած դրամը, որպեսզի մնացյալ ամեն ինչը նրա համար դառնա այլեւս անհասանելի: Այդպես երիտասարդն է հաճախ տատանվում մասնագիտություն ընտրելիս, այդպես աղջիկն է ընտրություն կատարում իրեն դուր եկած երիտասարդների միջեւ...

Սակայն հետո, ժամանակ անց, Ժիրայրը հասկացավ, թե ինչ էր նրան հարկավոր: Հետագա կյանքի համար վարիանտներից նա վճռականապես ընտրեց մեկը: Դա նրա անցյալ կյանքն էր՝ շատ թեթեւակի սրբագրված եւ բարեփոխված: Նա ճիշտ էր ապրել իր կյանքը եւ որքան էլ որ ուշադիր էր նայում դրան՝ չէր գտնում զոջալու կամ իրեն դատապարտելու որեւէ լուրջ հիմք:

Այժմ, անցնելով Երեւանի փողոցներով, նա սրբագրում էր իր մի բացթողումը: Գուցե դա միակ բանն էր, որի համար նա հաճախ հանդիմանել էր իրեն այնտեղ: Իր կյանքի առաջին կեսը նա ապրել էր մի տեսակ ավտոմատիկորեն, առանց մտածելու դրա մասին, անդրադառնալու դրա գեղեցկությանը: Ութ հազարից ավելի անգամներ նա անցյալում տեսել էր Երեւանի առավոտները՝ առանց ուշադրություն դարձնելու դրանց վրա: Հարկավոր էր «այն» ողբերգությունը, հարկավոր էր այդ առավոտների վեց հազար անգամ կրկնված կորուստը, որպեսզի նա անդրադառնար, թե որքան երջանիկ էր եղել նա անցյալում:

Նա հանդիմանել էր իրեն նաեւ այն բանի համար, որ հարկ եղածի չափ չէր սիրել կնոջը, հարկ եղածի չափ չէր զբաղվել իր Հովիկով... Իհարկե, դա բոլորովին էլ այդպես չէր, բայց «այնտեղ» անցյալի ամեն ինչը նրան թվում էր ե՛ւ լավ, ե՛ւ իր կողմից բավարար չափով չճաշակած: Այ, երբ նա վերադառնա, կապրի այնպես, որ այդ կյանքը լինի ե՛ւ իր անցած կյանքի շարունակությունը, ե՛ւ անսահմանորեն դրանից տարբեր, ավելի հարուստ: Նա կապրի ավելի լայն բացած աչքերով, ունկնդիր սրտով, զգաստ ուղեղով... Կապրի ինչպես սպունգ եւ միաժամանակ ինչպես ջրցան...

Եվ ահա, այժմ՝ առաջին առավոտը Երեւանում... Սկսվում է Ժիրայրի նոր կյանքը՝ տառապանքներից իմաստնա՞ած, խոհերով խորացած... Եվ եթե կարելի է մի բառով արտահայտել նրա վերաբերմունքը դեպի Երեւանը, դեպի աշխարհը, ապա այդ բառը, որն ամենագեղեցիկն է եւ ամենակենսալին, ամենաստեղծագործն ու ամենասահագուրդը, դա՝ ազահություն բառն է:

8

Ժիրայրը գնաց մշտական անձնագիր ստանալու, բայց դեռ շուտ էր, այդ գործով զբաղվող մարդը դեռ չէր եկել: Քարտուղարուհին, կանխատեսորեն ստուգելով նրա փաստաթղթերը, նկատեց, որ լուսանկար չկա: Ժիրայրն ինքն իրենից դժգոհ՝ ձեռքով խփեց ճակատին: Քարտուղարուհին հանգստացրեց նրան, որ նա կհասցնի հենց հիմա լուսանկարվել ու ստանալ նկարը: Պայուսակից ու բուշլատից դատելով, որ նա եկվոր է, տվեց մոտակա լուսանկարչատան հասցեն: Ամբողջ խոսակցության ընթացքում աղջիկը շատ սիրալիր էր ու ժպտում էր, եւ Ժիրայրն այդպիսի վերաբերմունքը լիովին վերագրեց նրա սրտաբաց բնավորությանը, զուցե նաեւ լուսանկարի մոռանալու պատճառով իր թողած զվարճալի տպավորությանը: «Կար ժամանակ,— մտովին հառաչեց նա,— երբ աղջիկները մի այլ պատճառով էին ինձ հետ խոսում այդ կերպ սիրալիր»...

Այդ լուսանկարչատունը նա գիտեր, դա վաղուց գոյություն ուներ: Մուտքի մոտ կախված էր Ժիրայրին այնքան վաղուց ծանոթ ազգանունով ցուցանակը, միայն թե այժմ ավելի գեղեցկարցած եւ թարմացրած:

Դրա հակառակ, լուսանկարիչը, դեռ «այն» ժամանակ ծեր, ավելի էր ծերացել ու թռչնել: Չնայած դրան, նա առաջվա պես աշխույժ էր եւ թեթեւաշարժ:

Միայն մի հայացք նետելով այցելուի վրա, նա ասաց քաղաքավարությամբ.

— Բարի եք վերադարձել: Անձնագրի համա՞ր: Նստեցեք խնդրեմ: Հանեցեք ձեր բուշխատը:

Մոտ քաշելով եռոտանի մի դեղին դինոզավր, ծերունին իր ավեհեր գլուխը սուզեց դրա ետեւից կախված սեւ ծածկոցի տակ, դուրս հանեց, նորից սուզեց, եւ այնտեղից լավեց նրա ձայնը.

— Նայեցեք այս կողմ:

Մի անգամ եւս դուրս գալով այնտեղից, նա մոտեցավ Ժիրայրին, նրա գլուխն ուղղեց դեպի աջ, կզակը ծռեց դեպի ձախ, պատի վրա ցույց տվեց էլեկտրական հոսանքի անջատիչը.

— Նայեցեք դրան:

Դինոզավրը նորից դարձավ հինգոտանի: Բրածո այդ կենդանին, դեղին խորանարդ գլխով, թափահարեց իր մարդկային ձեռքերը եւ ասաց.

— Լավ է:

Ավեհեր լուսանկարիչը դուրս ելավ վերջին անգամ, կանգնեց գործիքի կողքին, ասաց հանդիսավոր.

— Ուշադրություն...

Գործիքի առջեւամասից նա պոկեց կոշկաներկի տուփի մեծության սեւ կափարիչը, օդում մի բարդ շարժում կատարեց դրանով: Կափարիչը դանդաղ ճախրելով մոտեցավ եւ արագ փակեց դինոզավրի միակ աչքը:

— Քսան բոպեից կստանաք,— խոստացավ ծերունին:— Իսկ որպեսզի չձանձրանաք՝ խնդրեմ, այսօրվա թերթեր, այս ամսվա ժուռնալներ, այս տարվա մոդաների ալբոմ: Իսկ եթե կուզենաք՝ խնդրեմ, բոլոր ժամանակների կոմպլետներ...

Նա ձեռքով ցույց տվեց անկյունում դրված սեղանը, որի վրա դարսված էին լրագրերի կոմպլետներ հիշեցնող մեծ կազմեր՝ ստվարաթղթե թերթերով:

Անցյալից եկող այդպիսի մանրուք, բայց Ժիրայրը հիշեց.— ծերունին պահում էր ոչ միայն հին տարիների նեգատիվները, այլեւ պոզիտիվները, որոնցով ամեն մարդ, ըստ հարկի, կարող էր տարիներ հետո նորից պատվիրել իր նկարը:

Նա գնաց Ժիրայրի նկարը մշակելու՝ նախապես հարցնելով.

— Ձեզ վե՞ց հատ: Երե՞ք: Միանգամայն բավական է: Եթե էլի կարիք լինի՝ կարող եք պատվիրել վաղը կամ երեսուն տարի հետո: Ավելի երկար երաշխիք չեմ կարող տալ, որովհետեւ արդեն ծերանում եմ...

Ժիրայրը բաց արեց սեղանի վրա դրված կոմպլետներից մեկը եւ սկսեց թերթել: 1912 թիվ: Ապա հաջորդը՝ 1932 թիվ: Երրորդը՝ 1915 թիվ: Դա նման էր ժամանակի մեջ ետ ու առաջ ճոճվելու: Կոմերիտական: Աղա: Կարմիր հարսանիք: Եկեղեցական պսակ:

Պիտոներների ջոկատ՝ դրոշակով: Ոստիկան՝ պատիվ բռնած: Իսանում՝ լայնեզր շյապայով եւ հին մոդայի կոֆտայով: Կարմիրբանակայիններ՝ ձիերի վրա: Ուսանող՝ ուսադիրներ ունեցող համազգեստով...

Եվ բոլոր ալբոմներից տեղ-տեղ պոկված էին նկարներ՝ երբեմն առանձին-առանձին, երբեմն մի քանի հաստ իրար կողքի: Տխուր հունձ... Երբեմն դրանք պոկվել էին՝ տանելով իրենց հետ ստվարաթղթի մի շերտ, երբեմն, ընդհակառակը, թողնելով դրա վրա իրենց հետքը:

Ի՞նչ օրինաչափությամբ էին պոկված դրանք: Ինչո՞ւ շուրջն ամեն տեղ ապրում դին այլ լուսանկարներ, իսկ դրանք չկային... Իսկ ի՞նչ օրինաչափությամբ է չորանում ծառն անտարում: Ծուրջը բոլոր մյուսներին բավարարում է ե՛ւ հողը, ե՛ւ խոնավությունը, ե՛ւ արեւը, իսկ նրանց՝ ոչ:

Ժիրայրը փնտրեց 1936 թվի ալբոմը, բայց այդպիսին չկար սեղանի վրա: Այդ թվի զարնանը նա լուսանկարվել էր իրենց հիմնարկի պատի թերթի համար, երբ նրան պարզեւատրել էին որպես լավ աշխատողի:

Կոմպլեկտներից մեկը Ժիրայրի ուշադրությունը գրավեց իր անհասկանալի մակագրությամբ: Կազմի վրա, փոխանակ տարեթվի, գրված էր միայն մի տառ՝ «Փ»: Այնտեղ կային տարբեր տարիների լուսանկարներ, դա երեւում էր հագուստների, բեղերի, ֆոնի, արքեսուարի տարբերությունից: Ովքե՞ր էին նկարված այնտեղ, ի՞նչն էր կապում նրանց բոլորին իրար հետ: Թե՛ գուցե դա պատահական հավաքածու էր:

Ալբոմում ներկայացված էր մի ամբողջ ժողովուրդ՝ թախծոտ աչքերով: Աչքերը՝ ահա թե ինչն էր նրանց մեջ ընդհանուրը: Աչքերը՝ սեւ ու շագանակագույն, նշածեւ ու գեղեցիկ: Եվ բոլորը՝ թախծոտ: Դա հայ ժողովուրդն էր:

Թերթելով ալբոմը, Ժիրայրն աստիճանաբար սկսեց նկատել նաեւ իրար նման դիմագծեր ունեցող մարդկանց՝ տարբեր տարիքի մեջ: Երկու, երեք, երբեմն ավելի նկարներ ներկայացնում էին նույն մարդուն կամ գուցե արյունակից հարազատների:

Խորքի դռնից սպասարան դուրս ելավ ծերունին՝ պատրաստի փոքրիկ լուսանկարները ձեռքին: Ժիրայրը մեծ զարմանքով նայեց նրան:

— Ի՞նչ եք նայում ինձ,— հարցրեց ծերունին:

Ժիրայրը մի պահ ոչինչ չպատասխանեց:

— Բացատրեք, ինչո՞ւ եք նայում, դե՞,— քաջալերաբար ժպտաց լուսանկարիչը՝ սպասողական նայելով նստածին, կարծես քաջ գիտենալով նրա պատասխանը:

— Հիմարություն եւ ուրիշ ոչինչ,— գլուխն օրորեց Ժիրայրը:— Ձեզ մոտ լուսանկարների աշխարհ է եւ կենդանի մարդն անսպասելի է դառնում այստեղ:

— Ճիշտ է,— գոհ պատասխանեց ծերունին:— Ես այդպես էլ հասկացա ձեզ: Բայց, ափսոս, որքան էլ կենդանի, ես այլեւս պոզիտիվ չեմ, այլ նեգատիվ, մագերս՝ սպիտակ, իսկ դեմքս՝ համարյա սեւ... Համեցեք ձեր նկարները: Նայեցեք: Հավանո՞ւմ եք: Չէի ասի, թե սա դուք եք: Սա դուք էիիք՝ քսան թույն առաջ:

— Քսանութ,— ժպտաց Ժիրայրը՝ նայելով պատի ժամացույցին:— Ի միջի այլոց, ի՞նչ է նշանակում «Փ»:

— Տիեզերք:

— Ներեցեք,— հակաճառեց ժիրայրը՝ վճարելով լուսանկարների համար,— բայց տիեզերքը «փ»-ով չի սկսվում:

— Եվ սկսվում է, եւ վերջանում:

— Լավ,— համաձայնվեց ժիրայրը՝ չուզենալով գլուխ կոտրել խրթին կամ անհեթեթ այդ բացատրության վրա,— ենթադրենք, թե այդպես է: Բայց ի՞նչ կապ ունի տիեզերքը ձեր լուսանկարչատան հետ:

— Դուք ինձ հիասթափեցնում եք, երիտասարդ,— հանդիմանաբար գլուխն օրորեց ծերունին:— Ի՞նչպես չեք տեսնում, որ դրանք երկուսն անսահման նման են իրար...

Փակելու համար խելքից դուրս այդ խոսակցությունը, ժիրայրը հարցրեց.

— Ինձ ցույց չե՞ք տա 36 թվի ալբոմը: Ես ուզում եմ տեսնել ինձ այնտեղ:

— Եթե չեք պոկված,— նախազգուշացրեց լուսանկարիչը:— Հույս ունենանք, որ ճողոպրել եք: Կան նաեւ այդպիսիները՝ որոշ քանակությամբ:

Նա սեղանի վերելի պատի պահարանից հանեց պահանջված կոմպլեկտը: Դրեց սեղանի վրա, բայց ձեռքը դրեց վրան՝ թույլ չտալով բաց անել:

— Դուք, երիտասարդ, երեկ երեկո նայե՞լ եք երկնքին:

— Այո: Բայց ինչո՞ւ եք հարցնում:

— Տեսե՞լ եք երեկվա աստղերը: Երեկվա,— շեշտեց նա:

— Իհարկե:

Ակներել էր, որ ծերունին առաջին անգամը չ, ինչ վարում էր այդ խոսակցությունը: Նա ժպտաց եւ օրորեց գլուխը

— Ոչ, երիտասարդ, ոչ միայն դուք, այլեւ Վիկտոր Համբարձումյանն անգամ չէր կարող տեսնել երեկվա աստղերը: Դուք երկնակամարում տեսել եք մի աստղ, ինչպիսին նա եղել է տասնմեկ լուսային տարի սրանից առաջ: Եվ տեսել եք մի աստղ, ինչպիսին նա եղել է հարյուր տարի առաջ: Մի ուրիշը՝ միլիոն տարի սրանից առաջ: Եվ այդպես շարունակ: Ժամանակների խառնուրդ է երկնքում, երիտասարդ: Մենք նայում ենք եւ հիացմունքից հառաչում՝ Լեյու աստղը թարթեց Մեջնունի աստղին եւ Մեջնունի աստղն իսկույն նույնպիսի թարթումով պատասխանեց նրան: Բայց գիտե՞ք, որ այդ երկու թարթումների միջեւ անցել են լուսային տարիներ, ընդ որում՝ նախ եղել է պատասխան-թարթումը, ապա միայն առաջին թարթումը...

— Դուք փիլիսոփա եք,— հարգանքով ասաց ժիրայրը եւ հանկարծ նրա համար պարզ դարձավ, թե ինչ էր նշանակում միակ տառն ալբոմի վրա:

— Հիմա նայեցեք այստեղ,— կարծես հետելելով նրա մտքերին, ասաց ծերունին՝ բաց անելով «Փ» ալբոմը:— Դուք նմանություն գտնո՞ւմ եք այս պատանի աղջկա եւ այս տարիքոտ կնոջ միջեւ:

— Այո, իհարկե:

— Գիտե՞ք, որ նրանք մայր ու աղջիկ են:

— Կարելի էր ենթադրել:

— Իսկ գիտե՞ք, որ պատանի աղջիկը մայրն է, իսկ տարիքոտ կինը՝ աղջիկը...

Տպավորությունը Ժիրայրի վրա արտակարգ էր իր անսպասելիությամբ: Ծերունին շողաց ներքին բավականությունից: Անշուշտ, առաջին անգամը չէր, որ նա ականատես էր լինում այդ անսպասելի նախադասության թողած տպավորությանը:

— Ինչպես տիեզերքում, ժամանակի խառնուրդ է նաև լուսանկարչատանը, երիտասարդ: Ոչ միայն այս ալբոմում, այլև բոլոր մյուս: Ես կարող եմ իրար մոտ բերել երկու նկար՝ պասք եւ թոռը: Պասքը՝ մի տարեկան, մորից մերկ, փորի վրա պառկած: Եվ թոռը՝ պեղծեր ծերունի՝ ձեռնափայտով ու ակնոցներով: Պասին, իհարկե, ես չեմ նկարել, ես այդքան հին լուսանկարիչ չեմ: Բերել էին ինձ մոտ մեծացնելու,— իհարկե, նկարը, եւ ոչ թե նրան,— իսկ ես մի օրինակ պահեցի ինձ համար: Կամ սա: Նայեցեք: Տեսնո՞ւմ եք այս պիոներին՝ փողկապով ու լայնեզր գլխարկով: Հայրն է: Իսկ սա՝ նույնպես փողկապով ու լայնեզր գլխարկով՝ որդին: Դա ես ինքս եմ դիտմամբ նկարել միելնույն ֆոնի վրա: Դա մեր կողքի հին դպրոցի պատն էր: Անցյալ տարի քանդեցին: Ափսոս: Ես ուզում էի երրորդ սերնդին եւս նկարել նույն ֆոնի վրա: Էֆեկտի համար: Իհարկե, ամեն սերունդ ունի իր ֆոնը, ես դա գիտեմ: Իսկ լայնեզր գլխարկը ես մինչև հիմա էլ պահում եմ: Եթե կուզենաք՝ ձեզ էլ կնկարեմ դրանով: Դուք պիոներ եղե՞լ եք:

— Հենց դժբախտությունն էլ այն է, որ «եղել եմ» եւ այլևս չեմ,— ժպտաց Ժիրայրը:

— Դա ոչինչ: Երբեմն ծերունիներն էլ են նկարվում այդ գլխարկով: Նախկին պիոներները: Դուք, երիտասարդ, անշուշտ ուշադրություն դարձրել եք, որ ահա մի քանի տարի է, ինչ մեր երկիրն սկսել է բաց թողնել խորհրդային ծերունիների առաջին քանակները:

— Ինչո՞ւ եք ինձ անվանում երիտասարդ: Ես արդեն երեսունինը տարեկան եմ:

— Կարծում եք հարաբերականորե՞ն, իմ համեմատությամբ: Դուք ուշադիր նայե՞լ եք Վալերի Բոյուտովի կամ Հովհաննես Թումանյանի վերջին լուսանկարներին, երբ նրանք հիսուն ու մի քանի տարեկան էին: Խոր ծերունիներ... Չկարծեք, թե միայն բեղ ու մորուք ունենալու պատճառով: Իսկ հիմա մարդիկ ավելի ուշ են ծերանում, ոմանք՝ բոլորովին: Իսկ այժմ, խնդրեմ, գտեք ձեզ այստեղ...

Նա ձեռքը վերցրեց 36 թվի ալբոմից:

Ժիրայրը հուզմունքով բաց արեց այն եւ սկսեց թերթել: Ուշադիր նայելով ամեն մի նկարի, նա շուռ տվեց առաջին սովորաթուղթը, երկրորդը, երրորդը: Ուզում էր շուռ տալ նաև չորրորդը, բայց ծերունին բռնեց նրա ձեռքը.

— Անցնում եք ձեզ, երիտասարդ, ահա դուք:

— Ե՛ս...— ապշեց Ժիրայրը՝ հայացքը հառելով կրծքից հետ լուսանկարված մի երիտասարդի վրա: Եվ, ինքն էլ չիմացավ, թե ինչպես, դուրս թռավ նրա բերանից.— այս հիմա՞րը...

Ալբոմից նրան էր նայում կյանքով հարբած մի զվարթ, անհոգ դեմք: Թվում էր, թե ուր որ է նա բաց է անելու բերանը եւ ասելու, որ Հովիկի դեղը նա հիմա կպատվիրի եւ տուն վերադառնալիս հետը կբերի, իսկ գրպարտությունների հերքումը կգրի մի քանի օր հետո, կիրակի, երբ ազատ ժամանակ ունենա դրանով զբաղվելու: Շատ վրագ չէ...

— Հարգանք ունեցեք,— նախատեց ծերունին,— չէ՞ որ այդ դուք եք:

Հանկարծ Ժիրայրն անսպասելիորեն թեքվեց դեպի լուսանկարը եւ, առանց վախենալու թատրոնականությունից, առանց վախենալու ծիծաղելի լինելուց, շոյեց իր նկարը եւ ասաց.

— Ներողություն կոպիտ խոսքերին համար: Ներիր ինձ, սիրելիս: Դու հիմար չեիր, ոչ: Եվ հիմա էլ դու նույն այքերով ես նայում կյանքին, նույն, նույն... Որովհետեւ քեզանից խլեցին ամեն ինչ՝ կին, երեխաներ, տուն, խլեցին քո երիտասարդությունը, պատիվը, ազատությունը, բայց քո հավատը՝ ոչ...

Կարելի՞ էր արդյոք կասկածել, որ փիլիսոփա-լուսանկարիչը ոչնչով չէր զիջում իր արտասովոր այցելուին: Լայն շարժումով բաց անելով դուռը դեպի փողոց, նա ձեռքը մեկնեց դեպի այն կողմ եւ ասաց թատրոնական ժեստով.

— Գնա, երիտասարդ... Քո տեղը լուսանկարների մեջ չէ, այլ կենդանի մարդկանց: Գնա եւ տար քեզ հետ քեզ...

Փողոցում գործնական առօրյայի շունչն իսկույն զգաստացրեց Ժիրայրին, եւ նա մտքում ծիծաղեց իր եւ լուսանկարչի վրա: Բայց սիրտը հանդիմանում էր նրան կեղծիքի համար: Սուրբ պահերի վրա չեն ծիծաղում: Մի ձեւացնիր քո առաջ, թե իբր ծիծաղում ես:

9

Երբեմն, երբ մտնում ես մի աղքատիկ բնակարան, որտեղ բնակիչներն աշխատել են ուրիշների այքին բարեկեցիկ ցույց տալ իրենց գոյությունը, դու, իրոք, խաբվում ես առաջին հայացքից: Բայց շատ շուտով դու ճիշտ սեղանի ետեւում տեսնում ես ցամաք հացով անցկացվող սովորական օրերը, գեղեցիկ վերմակի տակ՝ քրքրված ներքնակը...

Ժիրայրը երջանիկ էր, որ Երեւանի վրա նետած իր երկրորդ հայացքը չէր բերում նրան տխուր հիասթափություն: Ո՛չ քաղաքն էր իր ցույց դրել իրեն շքեղ երեսի կողմից եւ ո՛չ էլ ինքն յ վերադարձածի իր խնդությունը վերագրել նրան: Քաղաքն այդպիսին էր իրապես:

Ճիշտ է, այժմ շրջելով երեկվանից ավելի շատ, նա տեսնում էր նաեւ իր գիտեցած Երեւանի անխախտ մնացած ոչ միայն անկյունները, այլեւ խոշոր հատվածներ, ամբողջ թաղամասեր: Բայց այժմ դրանք ե՛ւ նույնն էին, ե՛ւ ուրիշ: Գուցե նոր Երեւանի ֆո՞նն էր պատճառը, որի վրա երեւում էին դրանք ամեն անգամ: Գուցե բուն այդ հին վայրերում գոյություն ունեցող ինչ-որ բարեկարգություննե՞ր, որոնք Ժիրայրը ոչ այնքան նկատում էր, որքան զգում: Եվ, գուցե, ամենայն հավանականությամբ, պատճառը մարդի՞կ էին՝ ամեն տեղ շաղ եկած, որոնք ոչ միայն պարզապես անձանոթ էին նրան, այլեւ նրա ճանաչած մարդկանցից որոշակիորեն ավելի լավ հագնված ու գեղեցիկ:

Երկրորդ տպավորություն, ճիշտ տպավորություն... Իսկապես, ինչո՞ւ ենք մենք ամեն ինչում թերագնահատում երկրորդը, տալիս ենք առաջնություն առաջինին... Գուցե դա իրավացի է միայն սպորտային մրցումների նկատմամբ: Բայց առաջին համբույրը, օրինակ, միշտ լինում է այնպիսի շփոթմունքի մեջ, որ դու չես զգում դրա ամբողջ երանությունը: Դու այդ զգում ես միայն երկրորդի ժամանակ: Առաջին համբույրը՝ դա երկրորդ համբույրն է: Իսկ առաջինն ի՞նչ, դա... գրոյական համբույր է...

Ժիրայրը համարյա ցատումով ետ հրեց իրենից այդ հիմար մտքերն ու դատողությունները, նայեց շուրջը:

Անցավ մի երիտասարդ՝ ուշադիր նայելով Ժիրայրին: Մի՞թե ծանոթ: Ոչ, իհարկե: Նա հազիվ լինի քսանհինգ տարեկան, ուրեմն «այն» ժամանակ եղել է ինը տարեկան...

Երիտասարդը մոտեցավ եւ շնջաց.

— Լավ ածելիքներ: Շվեդական:

Եվ հենց գրպանից հանեց դեղերի մի տուփ ցելոֆանի տակից երեւացող գունագեղ պիտակով: «Սպեկուլյանտ»,— մտածեց Ժիրայրը, բայց մերժելիս ժպտաց նրան:

Շուտով նա անցավ ունիվերսալի մոտով: Այնտեղ, առաջին հարկում, խոնվել էին տղամարդիկ: «Շվեդական շեղբեր»,— նորից ժպտաց Ժիրայրը եւ այդտեղ միայն հիշեց, որ ահա երեք օր է, ինչ նա չի ածիլվել: «Այնտեղ» դա միանգամայն բնական էր, բայց այստեղ...

Նա սկսեց աչքերով փնտրել վարսավիրանոց:

...Ով երկրորդ անգամ չի կարդում գիրքը՝ ուրեմն նա ոչինչ չի կարդում: Ով «բիս» չի բղավում երգչին՝ նորից լսելու իր հավանած երգը՝ նշանակում է նա այնքան էլ չի հավանել եւ ուժեղ չէ նրա ցանկությունը՝ ավելի լրիվ ըմբռնվելու այն...

Ժիրայրն այս անգամ չբարկացավ, այլ ներողամտաբար ժպտաց պրտկերես մտքի վրա, որը համառորեն վերադարձել էր իր գլուխը: «Էլի՞ դու, հիմար միտք, տափակ դատողություն... Ի՞նչ ես ուզում ինձանից, անպիտան, կորիք գնա»...

Բայց ինչո՞ւ հիմար, ինչո՞ւ տափակ: Ժիրայրը պատրաստվում է սկսել իր երկրորդ կյանքը եւ այժմ դա նրան թվում է ավելի սքանչելի, քան առաջինը: Ոչ, ոչ, դա նրանից չէ այդպես թվում, որ նա սպասում է ինչ-որ նոր եւ արտակարգ բանի: Ի՞նչ նոր եւ արտակարգ բան կարող է սպասել մի մարդ՝ առանց մասնագիտության, առանց մեծ կրթության, առանց միջնա դասի ջանքերի հասակի... Լավագույն դեպքում նրա կյանքը կրկնվելու է նույնությամբ: Բայց եւ այնպես դա լինելու է սքանչելի, որովհետեւ Ժիրայրն այժմ գիտե, կյանքի համբույրի համը...

Դա նրանից է, որ մի օր խլեցին նրանից այդ կյանքը եւ ստիպեցին տարիներ շարունակ կսկծալ դրա համար, նորից ու նորից անդրադառնալ դրան, նորից ու նորից զգալ կորցրածի երբեմնի երանությունը: Մարսափելի միտք, բայց, իրոք, գուցե դա լավ եղավ, որ նա ժամանակավորապես զրկվեց կյանքից: Նա սկսեց գնահատել այն...

Ահա ապրում են այս մարդիկ եւ, անշուշտ, ամեն վայրկյան չեն մտածում իրենց գոյության սքանչելիության մասին: Ահա, օրինակ, այս ծերունին: Քայլում է իր համար, բացել է թերթը եւ կարդում է քայելիս: Մի՞թե մտածում է երբեւէ, թե ինչ երջանկություն է՝ քայել ասֆալտով, չսպասել, թե թրմփալու ես փոսի մեջ, սայթաքելու ես ցեխի վրա, ոտքդ դիպչելու է քարի կամ... կտրված ծառի կոճղի... Քայլել անտարբեր եւ կարդալ իր թերթը...

Իսկ Ժիրայրը պատրաստ է համբուրել ասֆալտը, պառկել դրա վրա բերանքսիվայր, շոյել դա երկու ձեռքերով, եւ օրհնել դա հնարող գիտնականին, դա փռող պետությանը...

Ապրել երկրորդ կյանքով... Եվ ոչ թե պարզապես ապրել: Տասնվեց տարի, երկու ամիս եւ տասնհինգ օր ապրել կրկնապատկված կյանքով՝ կորցրած նույնքան ժամկետի դիմաց... Իսկ այնուհետեւ, այդպիսի ինտենսիվ, հարուստ կյանքի վարժված, ապրել է՛լ ավելի, եռապատկված, տասնվապատկված կյանքով՝ այն տարիների, տասնամյակների, դարերի դիմաց, երբ դու չես եղել եւ այլեւս չես լինելու...

Ժիրայրը հանկարծ զգաց, որ արագացրել է քայլերը, համարյա վազում է: Բայց զգալուց հետո էլ նա չդանդաղեցրեց իր ընթացքը: Հարկավոր է շտապել, շտապել, շտապել... Կյանքը սլանում է նրա կողքերով, լգիսավերելով, ոտքերի տակով, նրա միջով: Նա զգում է սլացող կյանքի առաջացրած քամին: Շտապել, սլանալ դրա հետ, հավասարվել դրան այնպես, որ այլևս դադարի քամին, որ ոչինչ քո մոտով չանցնի առաջ, քեզանից առաջ: Այդպես, երբեմն, կողք-կողքի գնում են տրամվայն ու ավտոբուսը: Եվ եթե քեզ դուր է եկել մի գեղեցիկ կին ավտոբուսում, ապա դու կուշտ կարող ես նայել նրան քո տրամվայի լուսամուտից, որպես թե երկուսդ էլ անշարժ նստած լինեք դեմ-դիաց...

Նորից կին... Ինչո՞ւ այդ պատկերն է մտնում նրա գլուխն ամեն անգամ.— համբույր... կին...

Շտապել, շտապել, շտապել... Բայց դեպի ո՞ւր: Ամեն տեղ, ամեն տեղ... Այո, նաև դեպի վարսավիրանոց: Շտապել, վար թափել դեմքն աղավաղող այդ մազերը, վերստանալ ավելի երիտասարդ տեսք՝ որքան որ հնարավոր է, որքան որ մատչելի է դա նրան: Երիտասարդը կարող է շրջել նաև չաժիված, նա կարող է դուր գալ նաև այդպես: Բայց Ժիրայրի նման միջին տարիքի մարդը...

Համբույր, կին, դուր գալ... Ի՞նչ է պատահել Ժիրայրին այսօր... Նա այնտեղ, անընդհատ եւ անընդհատ, երագում էր Բրաբի մասին, բայց նրա երագների մեջ Բրաբին կին չէր, այլ Բրաբին էր, իր Բրաբին: Իսկ այսօր նա շարունակ ու շարունակ վերադառնում է դեպի կինը, բայց այժմ արդեն դա կինն է ընդհանրապես, բայց ոչ Բրաբին...

10

Այդ ամբողջ օրը Ժիրայրը շրջում էր տարիների իր անբաժան ընկեր պայուսակը ձեռքում բռնած: Լուսանկարչատուն, վարսավիրանոց, խանութներ... Քանի դեռ նա աժիված չէր եւ մանավանդ բուշատով էր եւ իր մնացյալ խեղճ, աղքատիկ հագուստով՝ պայուսակը սագում էր նրա տեսքին եւ ոչ ոք նրա վրա ուշադրություն չէր դարձնում: Բայց երբ նա, ունիվերմագում եւ այլ խանութներում հետզհետե գնեց եւ հագավ բաց-սրճագույն կոստյում՝ կրեմագույն վերնաշապկի հետ, դեղին տուֆլիներ, ֆետրե գլխարկ, մարդկի սկսեցին ուշադրություն դարձնել նրա վրա, ավելի շուտ՝ նրա պայուսակի: Մանավանդ որ պայուսակը հետզհետե ավելի էր ուռուցկանում ու կլորանում մի կերպ իր մեջ տեղավորված բուշատից ու մյուս հագուստներից:

Մարդկանց հայացքները, վերջապես, հասան Ժիրայրի գիտակցությանը: Իսկ երբ նա վերջին խանութում գնեց մի լավ փողպատ եւ կապեց՝ նայելով հայելու մեջ, եւ դրանից հետո կռացավ՝ վերցնելու պայուսակը, նա, ոչ առանց կսկիծի, զգաց, որ հասել է ժամանակը, որպեսզի ինքը եւ իր այդքան տարիների անբաժան ընկերն ընդմիշտ անջատվեն միմյանցից...

Նրա գիտակցության ինչ-որ անկյունում ինքնաբերաբար ծագեց մի հիմար միտք,— որքան հիմար մտքեր էին ծագում այսօր նրա գլխում,— որ անարդար բան է, երբ մի ընկերը նորում է իր տեսքը ոտից գլուխ, իսկ մյուսին թողնում է հնոտիքի մեջ: Հարկավոր է նրա վրայից նույնպես հանել քրքրվածը եւ փոխարենը հագցնել նորը... Բայց այդտեղ նա սթափվեց, ծիծաղեց իր վրա, ուժով ստիպեց իրեն ըմբռնել այն պարզ միտքը, որ իր «ընկերն» իրոք ընկեր չէ, որ նա չունի հագուստ, որը կարելի լիներ փոխել, որ ինքը հենց

«հագուստ» է, պատյան, որը փոխել՝ կնշանակեր դեն նետել այն եւ փոխարենը վերցնել մի այլ պատյան՝ պորտֆել, փոքրիկ ճամբրուկ՝ արհեստավորական գործիքներով, կամ մի այլ բան...

Եվ հենց այդտեղ էլ նա ցավով անդրադարձավ, որ գիտեր իր առաջիկա անելիքի կեսը միայն՝ նետել պայուսակը: Իսկ թե ինչ էր վերցնելու դրա փոխարեն իր ձեռքը՝ հայտնի չէր...

Որովհետեւ քաղաքի կենտրոնում մարդիկ շատ էին եւ համարյա բոլորը, նրա մոտով անցնելիս, նայում էին նրան ու նրա բեռին, նա սկսեց ճնշվել այդ հայացքներից եւ ընտրել ավելի եւ ավելի սակավամարդ փողոցներ: Այդպիսով նա մտավ, վերջապես, մի նրբանցք եւ շունչ քաշեց: Նա հիշում էր այդ նրբանցքը՝ երկար, ոլորապտույտ: Կարելի էր շատ բռնակներ քայլել այնտեղով եւ չհանդիպել ոչ ոքի...

Բայց դա կարելի էր, իսկ այժմ այլեւս կարելի չէ: Ամեն քայլափոխին նրան հանդիպում էին մարդիկ: Եվ եթե կենտրոնական փողոցներում, ուրիշ մարդկանցով լի, նրանք երբեմն չէին նկատում Ժիրայրին, ապա այստեղ, յուրաքանչյուրը, մենակության մեջ նրա հետ դեմ-դիմացի թողնված, անպայման նայում էր տարօրինակ անցորդին, եւ Ժիրայրը չէր կարողանում որոշել՝ իր քրքրված գորշ պայուսակն էին անտեղի համարումն նրանք, թե՛ նոր եւ գեղեցիկ հագուստը...

Եվ նրբանցքն ինքը նույնպես, որը մի ժամանակ երկար էր, այլեւս երկար չէ: Շուտով Ժիրայրը դուրս եկավ մի շատ մեծ շենքի շինարարության մոտ: Շեղակի ու երկար ձգվել էր ապագա շենքը՝ ընդհատելով նրբանցքը: Իր երկարության մեծ մասում դա դեռեւս նկուղային հարկ էր՝ հագիվ մինչեւ գետնի մակերեսը բարձրացած: Մյուս մասում դա միայն փորված հիմք էր, որտեղ բանվորներն այժմ նետում էին խոշոր քարեր՝ հետզհետե գծագրելով ապագա պատերի հիմքը:

Ժիրայրը հիշեց. «այն» ժամանակ, երբ կառուցվում էր որեւէ շենք, անպայման կատարվում էր դրա հիմնադրումը: Մարդիկ այդ արարողությանը գալիս էին երկուսական գլխարկներով.— նորերը՝ գլխներին, հները՝ թելերի տակ: Եվ երբ համապատասխան անձնավորությունը երկարավուն հիմնափոսներից մեկի մեջ դնում էր առաջին հիմնաքարը, մյուսները բոլոր կողմերից այնտեղ էին նետում իրենց թելատակերին պահած գլխարկները...

Այժմ, անշուշտ, այդ սովորությունը գոյություն չունեւր, այլապես հարկ կլինեւր բաց անել գլխարկի նորանոր գործարաններ...

Իսկ ի՞նչ կլինի, եթե Ժիրայրը տուրք տա հին սովորությանը, նետի այնտեղ իր գլխարկը, իսկ դրա հետ մեկտեղ նաեւ պայուսակը՝ բուշատով եւ ամբողջ մյուս բեռով...

Մոտենալով այն երկարավուն փոսին, ուր բանվորները նետում էին սուր կողեր ունեցող անկանոն լեռ քարեր, Ժիրայրը ձեռքով արեց մի բանվորի՝ «սպասիր»: Վերջինս հասկացողաբար կանգ առավ՝ քարը երկու ձեռքերում, ծնկների մոտ բռնած: Ժիրայրը փոսի մեջ նետեց իր բեռը, եւ բանվորը ծանր քարը շարտեց դրա վրա՝ թաղելով ընդմիջտ: Բայց այդ բռնակին մոտիկում լավեց մի խիստ ձայն.

— Սպասեցեք... Այդ ի՞նչ եք անում այդտեղ...

Արագ քայլերով մոտեցավ մաքուր հագնված մի երիտասարդ՝ աշխուղեկը: «Այն» թվականին, երբ ամեն մարդու ստիպում էին կասկածել ամեն մարդու վրա, աշխուղեկին,

անպայման, կարող էր թվալ, թե դժոխային մեքենա դրեցին ապագա շենքի տակ: Բայց այժմ նա բարկացած էր միայն այն պատճառով, որ մի անձանոթ մարդ ինչ-որ բան է կատարում շենքի հիմքի հետ,— թեկուզեւ անմեղ բան,— առանց իրազեկ դարձնելու նրան:

— Մի անհանգստանաք, ընկեր,— ժպտաց Ժիրայրը,— ես այնտեղ նետեցի իմ հագուստն ու պայուսակը:

— Այդպիսի սովորություն գոյություն չունի,— առանց իր տոնը մեղմացնելու, ասաց աշխղեկը:— Գլխարկ՝ խնդրեմ: Մնացածը վերցնել: Հանիր, վարպետ...

Դեռ նոր էր բանվորը ետ տարել քարը, երբ աշխղեկը ձեռքով արեց արագ-արագ՝ «տեղը դնել»... Դառնալով դեպի Ժիրայրը, նա շփոթված վար կախեց աչքերը եւ շնչաց.

— Ներողություն...

Ապա, բռնելով նրա ձեռքը, ամուր սեղմեց սպորտսմենի իր ամբողջ ուժով, նայեց ուղիղ աչքերի մեջ եւ ասաց կայտառ.

— Բարով եք վերադարձել...— Եվ ավելացրեց համարյա չդողացող ձայնով.— իսկ իմ հայրն այլեւս երբեք իր պայուսակը չի գցի ոչ մի հիմքի մեջ...

Որովհետեւ նա դեռ բռնել էր Ժիրայրի ձեռքը, Ժիրայրն ուժով, համարյա կոպտությամբ պոկեց այն եւ շտապեց շուռ տալ երեսը, գնալ: Արագ հեռանալով այդտեղից, նա իր ետեվում լսեց աշխղեկի նորից խիստ ձայնը՝ ուղղված բանվորներին.

— Ի՞նչ եք հավաքվել, մարդ չե՞ք տեսել, ի՞նչ է: Գնացեք ձեր աշխատանքին...

11

Եվս մի տեղ գնաց Ժիրայրն այդ օրը: Ինչո՞ւ գնաց՝ չգիտեր, բայց զգում էր, որ անկարող էր չգնալ...

Դեռ հեռվից նկատեց, որ իրենց փողոցն այլեւս չկար: Դրա փոխարեն ձգված էր մի ուրիշը՝ շքեղ, բազմահարկ, ասֆալտապատ: Մտնելով այդտեղ, նա նորակառույց շենքերի միջեւ տեսավ դեռ կանգուն մնացած մի տնակ եւ որոշեց.— իրենց տան կողմում շենքերը կառուցված էին նույն գծի վրա, իսկ փողոցը լայնացված էր դիմացի կողմի հաշվին:

Քանի՜ անգամ էր նա աշխատանքից շտապել տուն՝ անկյունի աղբյուրից ջուր բերելու, կնոջն օգնելու համար: Աղբյուրը չկա: Անկյունը՝ նույնպես: Ամեն բնակարան ունի ջրի ծորակներ:

Երբ Բրաբրին հարկավոր էր լինում մթերք գնել խանութներից, նա վերցնում էր իրենց հասարակ պայուսակը, գրկում էր Հովիկին եւ գնում Աբովյան.— մոտիկում խանութներ չկային: Այժմ մթերային, արդյունաբերական եւ այլ ապրանքների խանութները գտնվում են հենց նույն փողոցի վրա:

Ինչպիսի՜ խնամքով էր Ժիրայրը թեւանցուկ անում իր կնոջը՝ մանավանդ նրա հղիության ամիսներին, երբ նրանք անցնում էին իրենց նեղ փողոցի համարյա միշտ ցեխոտ ու սայթաքուն մայթերով: Այժմ ասֆալտից են ե՛ւ մայթերը, ե՛ւ սալահատակը:

Նրանց փոքրիկ բակում կային երեք-չորս նիհար ծառեր, որոնց ծվեն-ծվեն ստվերի մեջ, ամռան շոգերին, Բրաբրին ու հարեւան կանայք պատսպարում էին իրենց փոքր

երեխաներին: Այժմ բոլոր այս մեծ շենքերն ունեն փարթամ ծառերով լի սովերախիտ բակեր: Ահա դրանցից մեկը, որ երեւում է դարպասի միջով...

«Այ, հիմա պիտի ապրեինք այստեղ, Բրաբի, իմ երջանկություն»,— հառաչանքի պես անցավ Ժիրայրի սրտով: Բայց նրա խոսքերն ուղղված էին ոչ թե երեկվա եւ այսօրվա անձանոթ կնոջը, այլ մի նիհար, սիրելի կնոջ, որն այլեւս չկար:

«Հիմա պիտի ապրեինք, Բրաբի»...

Դեպի այստեղ գալիս նա համարյա չէր կասկածում, որ տեսնելու էր իր նախկին տունը՝ դեռեւս կանգուն: Անշուշտ, դա նրա ուժեղ ցանկությունն էր, որը հնչում էր համարյա որպէս համոզմունք: Հոգու մի հեռավոր անկյունում նա տանջալի հստակությամբ գիտակցում էր այդ: Ուստի եւ քարացավ, կանգ առավ անսպասելիությունից, երբ հեռվում տեսավ իր նախկին տունը՝ իրոք որ կանգուն: Հարեւան ոչ մի տնակ չէր մնացել, իսկ դա կանգուն էր՝ երկու հսկա շենքերի միջեւ սեղմված...

Դա է նրա տունը... Ժիրայրն սկսեց վազել: Այստեղ է նրա բնակարանը եւ ոչ թե այնտեղ: Հիմա այնտեղից դուրս կգա «այն» Բրաբին՝ «այն» Հովիկին գրկած եւ կնայի, թե չի՞ գալիս արդյոք ամուսինը.— արդեն աշխատանքից վերադառնալու ժամանակ է...

Մարդու հոգուն վայրկենապէս տիրապետող ո՞ր զգացումն է արդյոք ուժեղ՝ բաղձա՞նքը, պատրանքի քաղցրությունը, թե մի այլ բան, որն ստիպում է նույնիսկ երկար ապրած եւ երկար տառապած մարդուն, կյանքի փորձի տեր եւ զգաստ մարդուն, հավատալ այդպիսի անհեթեթության...

Ժիրայրը վազում էր: Նա այլեւս չէր տեսնում բազմահարկ նոր շենքերը, տեսնում էր միայն այդ միհարկանի տնակը: Ահա փոքրիկ դարպասը: Նա խուժեց ներս: Ահա սապնաջրից թրջված եւ սպիտակած բակը՝ երեք-չորս նիհար ծառերով: Ահա իրենց դուռը: Դրա վրա գրված չէ՝ «Գլենց», գրված չէր նաեւ «այն» ժամանակ: Այո, դա իր տունն է...

Ժիրայրն սթափվեց միայն սենյակում՝ տեսնելով անձանոթ մի կնոջ եւ երիտասարդ աղջկա: Նստել էին այդ երկու կանայք իրենց աղքատիկ սենյակում՝ անգործ, անխոս, անշարժ, կարծես կայարանում էին եւ գնացքի էին սպասում: Կամ գուցե սպասում էին Ժիրայրի՞ն...

— Ներեցեք...— աղերսեց ներխուժած անձանոթ մարդը:— Ներեցեք, խնդրում եմ, ես նույնիսկ չթակեցի դուռը...

— Համեցեք...— անտարբեր ձայնով ասաց կինը՝ առանց տեղից շարժվելու, ցույց տալով երրորդ, ազատ աթոռը: Սակայն դա անքաղաքավարություն չէ, այլ անկարողություն: Ժիրայրը նկատեց, որ նա իր տեղում մնաց վեր կենալու մի անգործ փորձից հետո միայն, կարծես ոտքերի մի անբուժելի ցավ կամ ուսերին իջած մի ծանր վիշտ մեխել էր նրան իր աթոռին:

Իսկ երիտասարդ աղջիկը նույնիսկ չբարձրացրեց գլուխը, չնայեց եկվորին:

— Բանն այն է, որ ես մի ժամանակ ապրել եմ այս սենյակում...— սկսեց արդարանալ Ժիրայրը:

— Դուք է՞լ,— անտարբեր արձագանքեց կինը:— Հին տուն է, շատերն ապրած կլինեն:

— Ես վաղուց չեմ եղել այստեղ, եւ դրա համար...

— Ո՞ր թվերին եք ապրել: Երբ յոթ ամիս առաջ մեզ փոխադրեցին այստեղ, իմացանք, որ ապրելիս են եղել երկու ամուրի երիտասարդներ:

— Ես այստեղ ապրել եմ «այն» տարի...

Մայր ու աղջիկ հանկարծ ճիչ արձակեցին եւ նայեցին այցելուին: Ժիրայրի մարմնով սարսուռ անցավ, բայց ոչ այնքան անսպասելի ճիչից, որքան որ աղջկա խոշոր, սեւ ու տենդահար աչքերի սարսափած եւ սարսափելի հայացքից:

— Ինչո՞ւ եք եկել,— հուսահատ բացականչեց կինը՝ վեր ցատկելով տեղից:— Ի՞նչ եք ուզում մեզանից: Խղճացեք զոնե թոքախտավոր աղջկան...

— Ի՞նչ պատահեց...— սառեց Ժիրայրը.— ես չեմ հասկանում...

— Նրա՛ հետ մաքրեցեք ձեր հաշիվը, նրա՛,— հեկեկաց կինը,— մենք ի՞նչ մեղավոր ենք:

— Ի՞նչ հաշիվ... Ո՞ւմ հետ...

— Ձեր քննիչի, իմ ամուսնու...— կինը փղձկաց:— Գնացեք մի բան էլ դուք ասացեք, որ ավելի լավ գնդակահարեն նրան: Նա դեռ էնտեղ է...

Եվ ձեռքը երկարեց դեպի քաղաքի այն կողմը, դեպի հեռու այն շենքը, որն այնքա՛ն քաջ ծանոթ էր Ժիրայրին...

Նա ոտքի ցատկեց: Ինչպես նախորդ օրը, Բրաբրին տեսնելիս, հիմա եւս նա կանգ առավ մոլորված՝ չգիտենալով ինչ անել՝ փախչե՞լ, մնա՞լ, լռե՞լ, խոսե՞լ... Վերջապես նա արտասանեց հաշտարար, կարեկցորեն.

— Դուք ի՞նչ մեղավոր եք:

— «Որդին հոր համար պատասխանատու չէ», այո՞,— ջղաձիգ քմծիծաղեց հիվանդ աղջիկը՝ նորից շանթելով Ժիրայրին իր տագնապահար, բայց իրապես խեղճ հայացքով:— Լսել ենք: Ասում էին այն ժամանակ, ասում են նաեւ հիմա: Դա չի խանգարում...

— Լռեցեք, խնդրում եմ,— ընդհատեց Ժիրայրը:— Ես չգիտեի, թե ով էր ապրում այստեղ: Ես չեմ եկել վրեժ լուծելու, այն էլ՝ ձեզանից:

— Իսկ եթե նա տա՞նք լինեք...— չարախինդ հարցրեց կինը՝ ենթադրելով, թե կարկամեցրեց այցելուին: Եվ ամբողջ իրանով ձգվեց դեպի նա՝ դաժանորեն զվարճանալու համար նրա անել վիճակից:

Լարված նրան էր նայում նաեւ աղջիկը:

— Ի՞նչ խոսել այդ մասին...— խուսափեց անկոչ հյուրը:

— Իսկ եթե տա՞նք լինեք,— ճիչով, հիստերիկայի մեջ ընկնելու պատրաստ, կրկնեց կինը՝ ձեռքերը ցնցելով:

Կնոջ զայրույթը փոխարկվեց Ժիրայրին: Նա պոռթկաց կատաղությամբ՝ առանց խնայելու կանանց.

— Եթե տանք լինեք, ես նրա...— եւ կանգ առավ կտրուկ, սթափվեց.— ես նրան կվերցնեի հավի ճուտի պես՝ թելերից, ոտքերից եւ ինքս կտանեի... այնտեղ:

— Տարել են ձեզանից առաջ: Արդեն հինգ ամիս է: Գո՞հ եք:

Ժիրայրն ուզեց չպատասխանել, բայց չկարողացավ:

— Գոհ եմ,— բաց թողեց նա հատու:

— Դե ուրեմն կորեք-գնացեք,— արձագանքեց կինը կամացուկ, ջախջախված ձայնով:

Ժիրայրը դանդաղ մոտեցավ դռանը եւ հանկարծ նկատեց. նա իր փոքր որդու հասակը դանակով խազել էր դռան վրա... Հիշեց նույնիսկ, թե ինչպես եղավ դա: Հովիկը, որ մոր հետ դուրս էր եկել նախասենյակ, մտավ ներս՝ օրորվելով իր դեռ անհաստատ ոտքերի վրա: Ժիրայրը նետվեց դեպի նա, պահեց նրան շեմքի վրա, համբուրեց, ապա, գրպանից հանելով ծալովի դանակը, խազեց այդ նշանը:

Իսկ հետագա նշանները խազելու ժամանակ չունեցավ...

Դառնալով դեպի կանայք, նա հարցրեց.

— Իսկ ձեզ ինչո՞ւ են փոխադրել այստեղ: Չէ՞ որ...

— Որովհետեւ «որդին հոր համար պատասխանատու չէ»,— չար ծաղրով կրկնեց աղջիկը:

— Միայ ես ասում,— հանկացծ բարկացավ մայրն աղջկա վրա՝ մոռանալով այցելուի ներկայությունը:— Տեղն է մեզ: «Այն» տարի հայրդ գրավե՞ց ազատված բնակարաններից մեկը՝ ամբողջ կահ-կարասիով: Իսկ ես չասացի՞, որ հալալ չի լինի դա մեզ: Յոթ ամիս առաջ տերը վերադարձավ, բնակարանն ազատեցինք: Ամեն ինչ արդարացի է:

— Իսկ հիմի էլ սա պիտի ազատենք,— գվարթ քրքջաց աղջիկը, եւ Ժիրայրի մարմինը նորից փշաքաղվեց:— Հիշո՞ւմ ես, հենց որ մտանք ներս, հայրիկը քնծիծաղեց ու ասաց, որ ինքն է սրա տիրոջը...

— Ինձ ոչինչ հարկավոր չէ...— կամացուկ արտասանեց Ժիրայրը:

— Ո՞ւմ է պետք այս ավերակը,— հանգստացրեց աղջկան մայրը:— Նրան լավ տուն կտան...

Ժիրայրը վերադարձավ սենյակի կենտրոնը: Կինը ձգվեց նստած տեղից, մոտ քաշեց երրորդ աթոռը նրա համար: Կարծես այդպես պիտի լիներ: Ժիրայրը նստեց, կախեց գլուխը, երկար ժամանակ լուռ մտածում էր: Կանայք նույնպես, չխոսեցին: Կարծես այդպես պիտի լիներ:

Քիչ հետո, գլուխը բարձրացնելով վեր, նա հարցրեց կնոջը.

— Իսկ ձեր ամուսինը... լա՛վ մարդ էր տանը:

— Շատ լավ,— ոչ մարտահրավիրաբար, այլ ընկճված, պատասխանեց կինը:

— Միրո՞ւմ էր ձեզ: Եվ ձեզ:

— Շատ: Ոչ խմում էր, ոչ ծխում, ոչ ման էր գալիս ուրիշների հետ: Ուրախ, բարի: Միրում էր հարեւանների երեխաներին, նրանք էլ՝ նրան:

Ժիրայրը դարձավ դեպի աղջիկը, որը նրան էր նայում՝ կարծես սպասելով հարցերի:

— Դուք երբվանի՞ց եք հիվանդ:

— Վաղուց:

Ժիրայրը նայեց հարցական:

— Ոչ վերջին յոթ ամսում,— հեզմանքով ճշաց աղջիկը:— Արդեն տասը տարի է:

— Պատերազմի ժամանակից...— հաշվեց Ժիրայրը՝ գոհ, որ գտավ բացատրությունը:— Վատ եք ապրել...

— Ի՞նչպես կարող էինք,— քննադատեց աղջիկը:— Պատերազմը «մեզ» չէր վերաբերում: Մենք միշտ լավ ենք ապրել:

— Ուրեմն ինչպե՞ս...

— Ինչպե՞ս, ինչպե՞ս...— համբերությունից դուրս ելավ հիվանդը, եւ նրա աչքերը նորից փայլեցին տենդոտ:— Ինչպես որ տոնական զբոսանքի ժամանակ «նա» մոտենում է զվարճացողների խմբին, մի բռնակով մի կողմ է կանչում ամենաուրախին ու շնչում է նրա ականջին՝ «Իսկույն գնացեք տուն, հանվեցեք, մտեք անկողին, երեք օր հետո կգամ ձեզ տանելու»...

Ժիրայրը նույնիսկ ետ քաշվեց այդ սարսափելի աղջկանից:

— Հայրն ամեն տարի երեքական ամսով սանատորիա էր ուղարկում: Մահվանից ազատեց: Խեղճ աղջիկն արդեն լրիվ առողջանալու վրա էր ու կառողջանար, եթե... Էդպիսի հայր, էդպիսի...

Ժիրայրը ցատկեց ոտքի:

— Գիտե՞ք ինչ...— ասաց նա մետաղային չոր ձայնով՝ շեշտակի նայելով մերթ կնոջ, մերթ աղջկա աչքերին:— Դուք խորհրդային քաղաքացիներ եք, եւ ես ուզում եմ, որ մի քիչ էլ դուք ատեք նրան: Ոչ, ոչ թե մի քիչ, այլ... Ինձ ներեցեք, օրիորդ...

Իր վրայից պոկելով նոր կոստյումի բանկոնը, ապա կրեմագույն վերնաշապիկը, նա հանեց նաեւ դեռ չփոխած հին ու կեղտոտ ներքնաշապիկը եւ լուռ ու դանդաղ շուռ գալով ոտքերի վրա, ցուցադրեց ինչ-որ անջնջելի սպիներ...

Կանայք նայեցին միայն մի պահ եւ փակեցին աչքերը: Ժիրայրը, շարունակ լուռ, հագնվեց, ապա, միայն դուրս գալուց առաջ, կրկնեց.

— Դուք ի՞նչ մեղավոր եք...

— Իսկ ի՞նչ մեղավոր էր նա... սրիկան,— ասաց կինը նրա ետեւից:— Մեղավորը...

Ժիրայրը դուրս ելավ՝ առանց սպասելու շարունակությանը:

12

Կիրակի երեկոյան Ժիրայրը տուն գնաց Բրաբիի պատվիրած ժամից էլ ավելի ուշ՝ ութն անց կես: Դուռը բաց արեց զոգնոց կապած մի անծանոթ կին, որը նրա բարեւին պատասխանելուց հետո նորից շտապեց դեպի խոհանոց:

Դրսում ցուրտ երեկո էր, եւ Ժիրայրը բավականությամբ զգաց նախասենյակի տաքությունը: Հանելով գլխարկը, նա դրեց փոքրիկ սեղանակի վրա եւ չտեսավ կախարանը, որն ամբողջովին զբաղված էր գլխարկներով ու թելթել վերարկուներով:

Բնակարանում բացարձակ լռություն էր: «Մի՞թե շուտ եմ եկել»,— մտածեց նա, բայց եւ իսկույն հիշեց, որ փողոցի անկյան ժամացույցի վրա ութն անց էր կես: «Երեւի սխալ էր ցույց տալիս»,— մտածեց նա նորից:

Այնուամենայնիվ, «իր» սենյակից նա լսեց ինչ-որ միալար ձայն՝ դռան ծածկված լինելուց՝ շատ խուլ: Երեւի Ջոնն էր բանաստեղծություն արտասանում: Բայց մի՞թե նա սիրում է այդ գործը...

Դուռը բաց անելիս Ժիրայրը նույնիսկ ետ ընկրկեց բնագոբաբար: Սենյակը, խիստ ուժեղ լուսավորված, լիք-լցված էր մարդկանցով՝ ընդարձակ ու երկար սեղանի շուրջը բոլորված:

Ոչ որ չնկատեց նրան, որովհետեւ նույն պահին բաժակաճառ ասողն ավարտեց խոսքը եւ մարդիկ նախ ծափահարեցին, ապա, վերցնելով գավաթները, ամեն կողմից ձգվեցին դեպի Խիտան՝ շնորհավորելու: Նրան նայեց նաեւ Ժիրայրը եւ տեսավ աթոռ նրա կողքին: Իր աղջիկը տեղ էր պահել հայրիկի համար...

Բրաբին նստել էր սեղանի ներքեւի ծայրում: Նա գլխով արեց Ժիրայրին՝ ամեն ինչ գնում է նորմալ: Սպասելով մի փոքր, մինչեւ որ մարդիկ բան ուտեն խմիչքից հետո, նա լցրեց իր շատ փոքրիկ գավաթը եւ ելավ ոտքի:

Խիտան սեղանի տակ հուզված սեղմեց հոր ձեռքը՝ «սկսվում է ամենակարեւորը»...

— Հարգելի հյուրեր,— ասաց կինը,— այս տարի Խիտայի ծննդյան տարեդարձը հատկապես ուրախալի է նրա համար, որովհետեւ նա տոնում է հեռու տեղերից վերադարձած իր հոր հետ...

Ավարտե՞ց նա, թե դեռ պիտի շարունակեր, բայց այդ բոլորին Խիտան գրկեց հորը եւ ամուր համբուրեց նրա այտը: Սեղանը թնդաց զարմանքի եւ ուրախության բացականչություններից, բոլորը ոտքի ելան, լցրեցին իրենց գավաթները: Աթոռների գոռոռոցներ: Բոլորը, դուրս գալով իրենց տեղերից, խուռներամ մոտեցան Ժիրայրին՝ գավաթ խփելու նրա հետ: «Բարի եք վերադարձել»... «Ապաշխարանք լինի»... «Հաղթեց արդարությունը»... «Բարի եք վերադարձել»... Եվ հանկարծ, այդ ոգևորված բացականչությունների միջից, սովորական եւ ցածր ձայնով.

— Ժիրո՞...

Ժիրայրը կնճռոտվեց իր անվան միշտ իր համար տհաճ այդպիսի կրճատումից, նայեց զարմանքով եւ իսկույն ճանաչեց՝ Անթառամը, իր ու Բրաբիի երբեմնի մտերիմ ընկերուհին: Կարճիկ, նիհար, դեռ «այն» ժամանակ թառամած, Անթառամը թվում էր իսկականից շատ ավելի տարիքոտ, համարյա պարավ: Դա եւս խիստ տհաճ էր, կարծես նար իր ներկայությամբ մերկացնում էր Ժիրայրին ու Բրաբիին, ասում էր նրանց. «Մի ձեւանաք երիտասարդ, դուք իմ ընկերներն եք, հետեւաբար եւ իմ տարիքին. դուք թաքցնում եք դա, իսկ ես ահա բացահայտում եմ»...

Բայց ամենատհաճն այն էր, որ Անթառամը, սեղանից հագիվ մի քիչ բարձր, կանգնել եւ մի այնպիսի ծուռ-ծուռ հայացքով ու կիսաժպիտով էր նայում Ժիրայրին, կարծես ուզում էր ասել՝ «Ժիրո՞, ի՞նչ ես քեզանից ուրիշ բան ձեւացնում, ով-ով, ես հո գիտե՞մ, թե ով ես դու»: Խոսքը միայն տարիքի մասին չէր, ոչ: Անթառամը նույնությամբ պահպանվել էր «այն» տարիներից՝ իր անճաշակ հագուստով, իր ցածր կուլտուրայով, իր տարրական կրթությամբ, իր պրիմիտիվ շարժումներով, եւ այժմ նա իր «Ժիրո» դիմումով եւ ծուռ-ծուռ

նայելով կարծես հայտարարում էր ի լուր բոլորի, որ նա էլ ժիրայրը հավասարներ են, որ իր բոլոր հատկությունները ոչ միայն իրենն են, այլև իրենցը... Իրենցն են՝ ժիրայրի հետ միասին, բայց ոչ Բրաբրի, որովհետև նա ամենից առաջ ժիրայրի ընկերուհին էր, դեռ նրա ամուրի ժամանակ, եւ նա էր Անթառամին ծանոթացրել իր կնոջ հետ: Նաև նրա համար, որ Բրաբրին անճանաչելիորեն փոխվել էր, դարձել ուրիշ մարդ, իսկ Անթառամն ու ժիրայրը մնացել էին նույնը...

— Ճանաչեցի... — զսպելով տհաճության զգացումը, ճիգով ժպտաց ժիրայրը: — Բարեւ, Անթառամ...

Իսկ երբ կինը լնգլնգալով վերադարձավ իր տեղը, ժիրայրը նոր միայն հիշեց նրա կաղ լինելը եւ մտքում դատապարտեց իրեն՝ նրա հանդեպ ոտնեցած անախորժ զգացումի համար:

Երբ սեղանի շուրջը վերահաստատվեց կարգը, ժիրայրի ներսում եւս հաստատվեց կարգը, եւ նա հանգիստ նայեց շուրջը: Բոլոր կողմերից նրան էին նայում մարդկանց բարի հայացքները՝ ուշադիր ու կարեկից, նրան ամեն կերպ օգնելու պատրաստակամ: Ու թեև նա չուներ ո՛չ ճնշված ու տանջահար տեսք, ո՛չ աղքատիկ կամ անճաշակ հագուստ, ո՛չ նստել էր անշնորհք դիրքով, բայց նեղված զգաց իրեն: «Կարեկցությունը միշտ նսեմացնում է կարեկցվածին», — հիշեց նա:

Գավաթը ձեռքին, վեր կացավ մի հաղթանդամ ու գեղեցիկ տղամարդ՝ սեղանի գլխավերելում, «թամադայի» տեղում:

— Հարգելի սեղանակիցներ,— ասաց նա իր այնպիսի հաճելի տեմբր ունեցող թավ ձայնով, որ ժիրայրն ականա նախանձ զգաց նրա հանդեպ: — Ես այս բաժակն ուզում եմ բարձրացնել ընկեր... — նա կռացրեց գլուխը, որպեսզի մեկը փսփսա ականջին նրա անունը:

— Ժիրայր... — ասաց Խիտան բարձր ձայնով:

— ... Ընկեր ժիրայրի կենացը: Ես չեմ կարող որոշել, թե որ չափով է դա նրա կենացը եւ որ չափով մեր արդարադատության կենացը, որովհետև չլինել մեկը՝ չէր լինի նաև մյուսն այստեղ...

Երևի ինքն էլ զգալով, որ ասաց խորիմաստության պրետենզիա ունեցող տրաֆարետային խոսքեր, նա պառուզա տվեց՝ չթաքցնելով իր դժգոհությունն իրենից: Մի պահ վճռեց խոսքի շարունակության մեջ ուղղել իրեն, բայց ազնվորեն հրաժարվեց կոծկելուց եւ առնական, գրավիչ ժպիտով մտերմաբար դիմեց վերադարձածին:

— Ձեր կենացը, ժիրայր:

Մյուսներն էլ էին ուզում ասել նույնը, բայց նույն պահին, Խիտան, ոտքի կանգնելով, արտասանեց կամացուկ, իր կրծքային ձայնով.

Ծիծեռնակը բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, ե՛ւ երգում.
Ամեն մի շյուղ կայցնելիս
Առաջվա բույնն էր հիշում...
Նա հիշում էր անցած տարին,
Իր սնուցած ձագերին...

— Երեխա ժամանակվա սիրած բանաստեղծություններից է,— ընդհատելով աղջկան, գուսպ ժպտաց Բրաքին Ավետովնան:— Բայց դու արդեն մեծ ես, աղջիկս:

Այժմ արդեն հայրն ինքը սեղանի տակ սեղմեց իր աղջկա բարակ ձեռքը՝ ամուր, ամուր, առանց վախենալու, որ կարող է ցավացնել: Միաժամանակ նա խիստ զայրացավ իր վրա. ի՞նչ լավանն է դարձել, նորից արցունքները սրարշավ խուժեցին դեպի աչքերը... Ինչպիսի՛ խելոք աղջիկ... Ի՞նչպես չհպարտանալ, որ դու ես նրա հայրը...

Խիտան գրկեց հորը եւ բոլորը ծափահարեցին:

— Կարելի՞ է ինձ էլ մի բան կարդալ հայրիկի պատվին,— լավեց Ջոնի ձայնը, եւ միայն այդտեղ Ժիրայրը տեսավ, որ որդին նստած է համարյա իր դիմացը:

Պատանին վեր կացավ տեղից, մոտեցավ գրքերի պահարանին եւ երկար փնտրում էր՝ հատակին պագած: Սեղանի շուրջը տիրեց ակամա լռություն: Վերջապես նա վերադարձավ մի փոքրիկ, անկազմ գրքույկ ձեռքին: Է. Սետոն-Տոմպսոն, «Թեւավորը»,— կարդաց Ժիրայրը շապիկի վրա: Անշուշտ, դա տղան կարդացել էր դեռ այն ժամանակներում, երբ «ժամանակ ուներ» հետաքրքրվելու տեխնիկայից բացի էլի ուրիշ բաներով...

Ջոնը, թերթելով գրքույկը, ստիպեց սեղանին՝ սպասել էլի մի երկու բուպե, ապա կարդաց.

«Դպի տո՛ւն, հարսզատ, սեփական տուն: Գուցե երբեք մարդկային սիրտն այնպիսի բուռն սիրտով չի բարբախել իր տան համար, ինչպես Թեւավորի սիրտը, Փորձություններն ու նեղությունները, որ նա կրել էր հին աղավնետանը, բոլորը մոռացվեցին: Ոչ գեղության տարիները, ոչ ընկերուհու կապը, ոչ էլ մահվան վախը չկարողացան նրա մեջ սպանել այդ ուժը: Եվ թեւավորը, եթե, իհարկե, երգելու շնորհք ունենար, կերգեր՝ ինչպես երգում են մարդիկ ամենամեծ ուրախության թորեին: Դուրզ գալով ազատ օդի մեջ, նա մեծ, ընդարձակ շրջաններով սկսեց բարձրանալ դեպի եթերը, ավելի բարձր եւ բարձր, քանի զնաց լայնացրեց այդ շրջանները, թռչելով որպես մի նետ, կապույտ անհունության մեջ թափահարելով իր սպիտակ թելերը, մինչեւ որ դրանք, որպես հուրհրատող կայծեր, սկսեցին փայլել արեւի ճառագայթների տակ»...

— Ի՞նչ եք սկսել մանկական գրվածքներ արտասանել,— հանգիստ զարմանքով հարցրեց մայրը:

— Դրանք մանկական գրվածքներ չեն,— բացականչեց Խիտան:

— Իսկ դու լռիր,— ժպտաց մայրը՝ նայելով նրա աչքերին,— քո տոնակատարությանը դու համեստ պետք է պահես քեզ:

Բայց Խիտան, հոր թելի տակ ծվարած, ըստ երեւույթին դուրս էր եկել մոր հնազանդությունից:

— Մա իմ տոնակատարությունը չէ,— ասաց նա,— այլ հայրիկի: Եվ իմ: Միասին:

Մայրը գլուխն օրորեց ժպիտով.— «անուղղելի»...

Մի քանի բուպե անց, հյուրերը նորից վերադարձան իրենց գործերին՝ մոռանալով Ժիրայրին: Բայց դա անտարբերություն չէր կամ անուշադրություն, եւ տեղի ունեցավ ինքնաբերաբար: Եվ, իրոք, կարեկցության զգացումը պասսիվ վիճակում կարող է մնալ միայն մի պահ, որից հետո կամ պետք է վերածվի գործի, կամ թաքնվի: Իսկ ի՞նչ կարող էին

անել սեղանակիցները Ժիրայրի համար՝ այդտեղ, սեղանի շուրջը: Այ, ուրիշ բան, եթե նա վաղը որեւէ խնդրով դիմի նրանց: Մի՞թե նրանցից որեւէ մեկը կհանայի իր ձեռքից եկածը՝ նրան օգնելու, տեղավորելու, նրա համար հարմարություններ ստեղծելու...

Ուրիշ ի՞նչ կարելի է անել սեղանի շուրջը: Հարցուփորձե՞լ նրան: Բայց ամեն ինչ պարզ է, եւ, բացի դրանից, չպետք է անհանգստացնել դեռ այնքան թարմ վերքը: Գուցե պարզապես խոսակցե՞լ նրա հետ: Իսկ ինչի՞ մասին: Կարելի է, իհարկե, գտնել խոսակցության հազար ու մի նյութ: Բայց դու չես ճանաչում նրան եւ կարող ես մի անտեղի հարցով հայտնվել հարցաքննողի դերում: Գուցե նա անկարող է պատասխանել քո հարցին իր անտեղյակությամբ, կրթությամբ, սահմանափակությամբ... «Կոնսերվացիայի» ենթարկվելիս նա եղել է երիտասարդ, եւ անշուշտ, քիչ բան է իմացել, իսկ այժմ անսահման ետ է մնացել կյանքից...

Իհարկե, այդ դատողությունները չեկան ոչ մեկի գլուխը, բայց դա չէր նշանակում, թե դրանք այնտեղ չէին արդեն: Եվ բոլորը նորից անցան իրենց խոսակցություններին՝ իրենց հարեւանների հետ, կամ սեղանի վրայով՝ հեռու նստածների հետ:

Միայն Խիտան էր, որ ամեն ինչ մոռացած, միայն իր հորով զբաղված, նրա ափսեի վրա դնում էր շարունակ նորանոր համեղ պատառներ եւ անդադար շոյվում էր նրա թեւին. եւ Ջոնն էր, որ շուտ-շուտ նաում էր հորը՝ հպարտությամբ, եւ քրոջը՝ նախանձով. եւ Անթառամն էր, որը, երբ էլ Ժիրայրը նայեր նրան, հայացքը հառել էր իր երբեմնի ընկերոջ վրա եւ աչքերով կարծես կրկնում էր նույնը՝ «Ժիրո՞»...

Խիտան սկսեց կամացուկ ձայնով ծանոթություն տալ հորը հյուրերի մասին:

— Դա մայրիկի պարտկազմակերպության քարտուղարն է իր կնոջ հետ: Նրա կողքինը նույնպես գործարանի դիրեկտոր է, բայց հետինն իր կինը չէ, նա ամուրի է: Այս մյուս զույգն իմ ամենամտերիմ ընկերուհու ծնողներն են: Ես ինքս եմ նրանց ծանոթացրել մայրիկի հետ: Երկուսն էլ ինժեներներ են, աշխատում են շինարարության վրա: Այն զովելին դերասան է: Ինչո՞ւ է մայրիկը հրավիրել նրան՝ չեմ հասկանում: Երեւակայիր, հայրիկ, մի անգամ եկավ մեր տուն, Ջոնն ու մայրիկը տանը չէին, սկսեց սեր բացատրել ինձ: Չի էլ ամաչում, տարիքոտ մարդ է՝ քսանչորս տարեկան...

— Իսկ նա՞ ով է,— ընդհատելով, հարցրեց Ժիրայրը՝ ցույց տալով «թամադային»:

— Նա՞... Նա մայրիկի հին ընկերներից է: Ես չգիտեմ, թե որտեղ է աշխատում: Ոչ, հայրիկ, դա «նա» չէ, «նա» այստեղ չէ...

— Ես հենց այնպես հարցրի,— հանգստացրեց հայրն աղջկան՝ անտարբեր ձայնով: Բայց ինչ-որ սուր մագիլներ չանգռեցին նրա սիրտը: «Նա»... Ուրեմն, իրոք, «նա» գոյություն ունի կամ ունեցել է...

Եթե «նա» գոյություն ունի հիմա՝ դա Ժիրայրին չի վերաբերում բոլորովին: Իսկ եթե գոյություն է ունեցել դեռ այն ժամանակ, երբ ապրում էր «այն» Բրաբին, Ժիրայրի Բրաբին... Կա՞ ավելի դաժան խանդ, քան խանդն անցյալի նկատմամբ... «Նա» եւ Ժիրայրի Բրաբին՝ միասին...

Ժիրայրն ուժեղ ցնցեց գլուխը՝ անտանելի պատկերը ետ վանելու համար, եւ նրա հայացքը հանդիպեց Խիտայի աչքերին՝ անշարժ սեւեռված հոր վրա:

— Ի՞նչ ես նայում ինձ այդպես,— բարկացավ հայրը՝ բավական կոպիտ:

Բայց աղջիկը չվիրավորվեց: Նա ձեռքը դրեց հոր ձեռքի վրա եւ շնչաց կամացուկ.

— Թող սա վերջին անգամը լինի, հայրիկ, որ դու այսպիսի տոնով ես խոսում ինձ հետ: Ինչո՞ւ ես թաքնվում քեզանից ու ինձանից, այսբերգ: Եվ մի՞թե կարող ես: ո՞ւր պիտի խուսափես իմ աչքերից...

Ապա, տեսնելով հոր տեղի տալը միանգամից, ավելացրեց.

— Թաքնվել էիր ուզում՝ չպիտի ստեղծեիր հասկացող աղջիկ:

— Ես չեմ ստեղծել քեզ,— ժպտաց Ժիրայրը,— այլ մայրիկդ:

— Ոչ, դու: Գիտեմ ինչ պիտի հակաճառես՝ բիոլոգիական հայր...

Ժիրայրն ապշած նայեց աղջկան: Մտքե՞ր է կարդում նա, ի՞նչ է... Եվ ոչ միայն մտքեր: Չէ՞ որ ճիշտ նույն բառերով էր ծաղրում Ժիրայրն իրեն՝ երեկ չէ մյուս օրը...

— Ի՞նչ գործ ունի այստեղ բիոլոգիան,— շարունակեց աղջիկը՝ կանացիորեն ցնցելով իր նիհար եւ գեղեցիկ ուսերը՝ լայն դեկոլտեի մեջ:— Թեեւ, իհարկեւ, գիտությունը չի ժխտում նաեւ ժառանգականությունը: Բայց դա չէ կարելուորը, հայրիկ: Ով էլ իմանար դեռ փոքր հասակից, որ շատ հեռու տեղում ունի հայր, որին չի տեսել եւ որն էլ չի տեսել նրան՝ նա կդառնար երազկոտ: Ով էլ հասկանար մի օր, որ իր հայրը գոհ է գնացել անարդարության՝ նա կդառնար թախծոտ: Վաղը կհավաքվեն իմ ընկեր-ընկերուհիները: Դեռ մինչեւ անցյալ տարի, երբ նրանք սեղանի շուրջը եւ ընդհանրապես երբեւէ խոսում էին իրենց հայրերի մասին, կամ ինչո՞ւ խոսում, հենց միայն արտասանում էին «հայրիկ» բառը, իմ աչքերը լցվում էին արցունքով: Դու գիտե՞ս ինչ է նշանակում իմ տարիքի աղջկա համար՝ տարիներ շարունակ թաքցնել արցունքները: Չգիտես: Վաղն իմ առաջին տարեդարձն է, երբ ես իսկապես ուրախանալու եմ իմ ընկեր-ընկերուհիների հետ...

— Մի՞թե դու նրանցից ոչ մեկին բաց չէիր անում սիրտդ,— ճնշում դնելով իր վրա, որ չբղաջի, հարցրեց հայրը:

— Ինչո՞ւ բաց անեի: Նրանք բոլորն էլ հայր ունեին:

— Ուրեմն, քո կարծիքով, այնքան էգոիստ էին, որ...

— Ես էի էգոիստը: Չէի ուզում, որ ինձ խղճան: Մի ժամանակ ունեի մի ընկերուհի, որի հայրը նույնպես... Բայց ես նրան էլ չէի ասում ոչինչ, որովհետեւ եթե նստեինք եւ լաց լինեինք միասին, նա լաց պիտի լիներ ոչ թե քեզ համար, այլ իր հոր: Ուրեմն ավելի լավ չէ՞ր առանձին-առանձին...

— Դու նույնիսկ լացել ես ինձ համար...

— Կարծում ես՝ հաճա՞խ: Ոչ, միշտ: Թեեւ ես լալկան չեմ: Լալիս էի, սրբում աչքերս եւ վազում ուրախանալու բոլորի հետ...

Մի պահ լռելուց հետո նա ժպտաց.

— Օրինակ վերցրու աղջկանիցդ, հայրիկ, տեսնո՞ւմ ես, ես ոչինչ չեմ թաքցնում քեզանից: Դու էլ չպիտի թաքցնես: Ես միշտ այդպես եմ պատկերացրել քեզ:

— Ճիշտ ես պատկերացրել:

Հայր ու աղջիկ ծիծաղեցին բարձրաձայն, միմյանցից գոհ:

Բրաբին, համարյա անթարթ, նայում էր նրանց: Անհնար էր հասկանալ նրա անդրդվելի դեմքից՝ ի՞նչ էր զգում կամ մտածում նա այդ ժամանակ: Բարկանո՞ւմ էր աղջկա վար՝ նրա շաղակրատության համար, նախանձո՞ւմ էր նրա մտերմությանը Ժիրայրի հետ, հետաքրքրվո՞ւմ էր նրանց գրույցի բովանդակությամբ, թե՛ մտածում էր իր եւ իր նախկին ամուսնու հետագա փոխհարաբերությունների մասին...

— Հիմա հասկացա՞ր, հայրիկ, որ դու ես ստեղծել ինձ այսպես,— ասաց Խիտան՝ իբրև եզրակացություն իր պատմության:— Դու «այնտեղից» ավելի մեծ դեր ես խաղացել ինձ համար, քան մայրիկն՝ այստեղ...

Լավեցին աթոռների միահամուռ զոզոռոցներ: Ժիրայրը մեքենաբար ձեռքը տարավ իր գավաթին՝ բարձրացնելու համար եւս մի անձանոթ մարդու կենացը: Բայց մարդիկ ոտքի էին ելել ոչ թե գավաթ խփելու, այլ ընդմիջում տալու, ծխելու համար: Տղամարդիկ դուրս ելան նախասենյակ կամ բակի կողմի պատշգամբը, կանայք մնացին տեղում կամ մտան ննջարան՝ զբաղվելու համար գուտ կանացի խոսակցություններով: Բրաբին գնաց խոհանոց: Չոնն շտապեց իր արհեստանոցը, եւ, ուշադրություն չգրավելու համար չվառելով այնտեղի լամպը, լուսնի լույսի տակ սկսեց զննել իր կիսատ սարքը, ապա ձեռք վերցրեց պտուտակիչը:

Քանի որ Բրաբին Ժիրայրին հյուրերին ներկայացնելիս շատ ճարպիկ կերպով, անվանելով նրան «Խիտայի հայր», անպատասխան էր թողել բնականորեն ծագող այն հարցը, թե ապա ի՞ր համար ով էր նա այժմ, կանայք, օգտվելով ընդմիջումից, ուզեցին պարզել այդ: Յուրաքանչյուրն աշխատում էր իր կերպ՝ նայած բնավորությանը, դաստիարակությանը, հետաքրքրության աստիճանին: Մեկն աչքով անցկացրեց մահճակալների տեղադրությունը ննջարանում եւ նույնիսկ ուշադրություն դարձրեց, որ բնակարանում հայտնվել է ծալովի մահճակալ, որն առաջ չկար: Մյուսը, միանգամայն անմեղ տոնով, հարցրեց Խիտային. «Հիմա դու ո՞րտեղ ես քնում, Խիտոչկա», որի դիմաց ստացավ խիստ որոշակի եւ ոչ պակաս նախատական պատասխան՝ «մեր տանը»: Երրորդը ոչինչ չհարցրեց ոչ որի, այլ մի պահ մտնելով խոհանոց, շնչաց Բրաբիի ականջին՝ «Վերջապես ամուսինդ վերադարձավ», որի դիմաց Բրաբին տխուր ցույց տվեց ինչ-որ խմորեղեն եւ ասաց, որ, ափսոս, այնքան լավ չի ստացվել, որքան նա ուզում էր:

Բայց այդ բոլորից չպետք էր ենթադրել, թե նրանք վատ կանայք էին, քաղքենիներ եւ այլն: Նրանք պարզապես կանայք էին: Ամուսինների ապագա փոխհարաբերությունների հարցը նրանց չէր կարող չհետաքրքրել մանավանդ այն պատճառով, որ նրանք գիտեին Բրաբիի անցյալ տարիների կյանքը, որը Ժիրայրը չգիտեր: Չէին կարող չհետաքրքրվել նաեւ այն պատճառով, որ Ժիրայրը «հետաքրքիր տղամարդ» էր, որը, նույնպես, Ժիրայրը չգիտեր:

Խիտան սեղանի վրայից սկսեց հավաքել ավելորդ ամանեղենը եւ տանել խոհանոց, իսկ այնտեղից բերել նոր ուտելիքներ: Գոզնոց կապած կինն օգնում էր նրան, ավելի շուտ՝ խանգարում, պահանջելով, որ չկեղտոտի հագուստը եւ ամեն ինչ թողնի նրան անելու:

Ժիրայրը ծխող չէր, բայց նույնպես դուրս եկավ սենյակից՝ նկատելով, որ այնտեղ մնացել են միայն կանայք, որոնք այժմ, պատրաստական նայում էին նրան՝ պատասխանելու համար նրա հարցերին եւ մեկ-մեկ էլ իրենք տալու խորամանկ հարցեր:

Մտտենալով խոհանոցի դռանը, Ժիրայրն այնտեղ տեսավ Բրաբիին եւ «թամադային»՝ միայսին կանգնած: Բայց դա սիրականների հանդիպում չէր՝ րոպեական մենակության

մեջ: Դա ավելին էր: Նրանք թողնում էին ամուսինների տպավորություն: Բրաբին, մտազբաղ դեմքով, խորհրդակցում էր նրա հետ, թե ինչ հերթականությամբ մատուցի հաշորդ պնակներն ու խմիչքները: Իսկ տղամարդը, տանու մարդու գործնական տոնով խորհուրդներ էր տալիս, ոչ, կարգադրություններ էր անում, մատնացույց անելով պնակներն ու շշերը:

Ժիրայրն անտարբեր անցավ նրանց մոտով եւ խոհանոցի մյուս ժռնով դուրս ելավ պատշգամբ: Սենյակից սկսած, նա ուներ այն անախորժ զգացումը, թե Անթառամը կաղեկաղ գալիս է իր ետեւից: Պատշգամբում շուռ եկավ, նայեց: Իրոք, կանգնած էր Անթառամը...

Նրանից ազատվելու համար Ժիրայրը մտավ իր որդու արհեստանոցը: Անթառամը՝ նրա ետեւից: Ժիրայրը դուրս ելավ: Անթառամը՝ նրա ետեւից: Քիչ է մնում շուռ գաս եւ բղավես նրա երեսնիվար. «Ի՞նչ ես ուզում ինձանից, ինչո՞ւ ես հետեւում ինձ իմ անցյալի պես: Բոլորն իրենց ետեւում ունեն կրթություն, աշխատանք, կենսափորձ, սպրումներ, բավականություններ, հարուստ ու գեղեցիկ, իսկ ես իմ ետեւում՝ միայն քեզ»...

Չսպելով տհաճության ավելի եւ ավելի աճող զգացումը, Ժիրայրը դիմեց նրան բռնազբոսիկ ժպտալով.

— Դե, Անթառամ, պատիմը տեսնեմ...

Եվ այդտեղ նա հիշեց, որ «այն» ժամանակ Անթառամը դեռ աղջիկ էր:

— Ամուսնացե՛լ ես:

Կաղ կինն իր հասակի ցածրերից ծուռ-ծուռ նայեց վեր եւ թափ տվեց ձեռքը, այսինքն՝ թե՛ «Ժիրո՞... Ի՞նչպես կարող ես էդպիսի բան ենթադրել»:

Խոսքերով շարունակելով իր հայացքը, նա ասաց.

— Ոչ թե ինձ, քեզ պիտի ամուսնացնենք, Ժիրո, քեզ:

Հասկանալի է... Ուրեմն «նա» գոյություն ունի մինչեւ հիմա: Ժիրայրը շունչ քաշեց թեթեւացած: «Այս» Բրաբին նրան հարկավոր չէր...

— Դու ո՞րտեղ ես աշխատում, Անթառամ,— հարցրեց Ժիրայրը՝ այս անգամ ավելի բարյացակամ:

— Էլի էնտեղ:

— Ո՞րտեղ: Մոռացել եմ: Կինը նորից նայեց նրան ծուռ-ծուռ եւ հանդիմանական՝ «Ի՞նչպես կարելի է մոռանալ, Ժիրո»:

— Լվացքատանը,— ասաց նա խոսքերով:— Հիմի մեխանիկական է: Էդ ի՞նչ հետաքրքիր է, տղա,— ձեռքը թափ տվեց նա:— Դու էն ասա, ի՞նչպես հավանեցիր Հովիկին:

— Լավ տղա է:

— Իսկ Մխիթարուհո՞ւն:

— Ո՞վ է նա:

— Աղջիկդ, ո՞վ: Բրաբիոնն անունը հետո է շուռ տվել, առաջ էդպես էր:

— Մի՞թե այդպիսի կանացի անուն ունենք հայերեն,— տարակուսեց ժիրայրը:

— Ո՞րտեղից, ժիրո: Բրաբիոնի հնարածն է: Քու գնալուց հետո գիշեր-ցերեկ լաց էր լինում: Միշտ քովն էի: Ուրիշ մարդ դուռը բաց չէր անում: Ասում էր՝ «երեխաս որ տղա լինի՝ անունը կոնեմ Մխիթար, որ աղջիկ լինի՝ Մխիթարուհի, որ ինձ մխիթարեն»...

Ժիրայրը քմծիծաղեց դառնությամբ Ողբերգությունը՝ անճանաչելիորեն ոճավորված, «խիտայացած»...

— Իսկ որքա՞ն ժամանակ է:

— Ի՞նչը, ժիրո:

— Որ նա աղջկան Խիտա է կոչել...

— Մի տարեկան էր:

— Պարզ է— շնջաց ժիրայրը:

— Ի՞նչն է պարզ, ժիրո:

— Ամեն ինչ գնում է նորմալ...

Նրանք չէին նկատել, թե ինչպես տղամարդիկ, հետզհետե ավարտելով ծխելը, նորից մտել էին ներս: Ջոնը նույնպես չկար: Այժմ նրանք կանգնած էին մենակ:

Նրանք չնկատեցին նաեւ, թե ինչպես խոհանոցի դռնից մի պահ դուրս նայեց Բրաբին, տեսավ նրանց միասին կանգնած, եւ թե ինչպես, նայելով աշխույժ շարժումներով ժիրայրին ինչ-որ բաներ հաղորդող Անթառամին, քմծիծաղեց՝ թե արհամարհանքով եւ թե գոհանակությամբ:

Ժիրայրը նախ ուզեց չլսել նրան, ապա ձեռք թափ տվեց՝ թող պատմի: Վերջիվերջո պե՞տք է իմանալ ամբողջ ճշմարտությունը, թե ոչ: Իսկ դրա համար ամենահարմար մարդը, իհարկե, Անթառամն է:

Այժմ նա հիշեց ամեն ինչ: Լինելով ի ծնե կաղ եւ չունենալով արտաքին գեղեցկություն, Անթառամը դեռ վաղ մանկությունից հաշտվել էր այդ դառը ճշմարտության հետ, որ ինքը երբեք չի վայելելու սիրո եւ ամուսնության երանությունը: Լացե՞լ, ողբացե՞լ էր դրա համար երբեւէ՝ այժմ չէր կարող ասել նույնիսկ ինքը: Որոշակի էր միայն այն, որ պատանի հասակում արդեն նրա հոգուց ջնջվել էր ամեն մի ավստասանք, կսկիծ, տառապանք: Չնջվել էր աննկատելի ու հեշտ, քանի որ նա երբեք չէր ճաշակել ոչ մի համբույր, գրկախառնություն, չգիտեր, թե ինչ են դրանք: Իրոք որ, կորցնել չունեցածը՝ այնքան էլ սարսափելի չէ...

Մի բան, այնուամենայնիվ, պարզ էր Անթառամի համար.— եթե նա չի ամուսնանալու, չի ունենալու ամուսին ու երեխաներ, էլ ուրեմն նրա ինչի՞ն են պետք կրթությունը, լավ հագնվելը, ճոխ կյանքը: Ինչո՞ւ չարչարվել այդ ամենի համար: Մի կտոր հաց նա միշտ էլ կճարի...

Եվ, կիսատ թողնելով ուսումը, նա երրորդ դասարանից ուղիղ գնացել էր լվացքատուն եւ դարձել էր լվացարարուհի: Քառորդ դարից ավելի լվացք անելուց հետո, ժիրայրի վերադառնալուց երկու տարի առաջ, նրան, լվացքատան ամենաջանասեր բանվորուհուն,

առաջ էին քաշել եւ դարձրել դրա վարիչը: Նա ոչ միայն ժիրայրին չասաց, այլեւ ոչ որի չէր ասել այդ մասին: Ո՞ւմ է դա հետաքրքիր:

Չունենալով իր անձնական կյանքը, Անթառամն սկսել էր ապրել ուրիշների կյանքով: Եվ եթե դրա հետեւանքով նա չէր դարձել բամբասեր, խոսք տանող-բերող, խառնակիչ, ապա շնորհիվ այն բանի, որ նրա հոգում չկար կորցրածի կսկիծ եւ նա չէր նախանձում ոչ ոքի: Ընդհակառակը, նա միանգամայն բնական էր համարում, օրինակ, որ ինքն ապրեր աղքատիկ սենյակում, իսկ գեղեցկի ու զարգացած Բրաբիոնը՝ ճոխ կահավորված, ընդարձակ բնակարանում: Անթառամի համար պարզապէս հետաքրքիր էր ուրիշների կյանքը, որովհետեւ նրա անձնականն անհրապույր էր եւ անհետաքրքիր:

Բայց նա ոչ միայն հետաքրքրություն էր ցույց տալիս ուրիշների գործերին, այլեւ, հարկ եղած դեպքերում, կարեկցություն էւ օժանդակություն: Նա, որ միանգամայն բնական էր համարում իր երբեմնակի հիվանդանալը, դրամ չունենալը եւ այլն, իրար էր անցնում Բրաբիոնի հասարակ հարբուխի պատճառով: Չանգ էր տալիս իրենց փողոցի անկյան ավտոմատ-հեռախոսից, հարցնում էր առողջությունը, վագ էր տալիս դեղատուն՝ դեղ բերելու...

Ի դեպ, այդ բոլորը վերաբերում էր անցյալին: Ահա մի քանի տարի էր, ինչ Բրաբիոնն իր սառը վերաբերմունքով ընդհատել էր այդ անգույն եւ աննշան կնոջ առանց այն էլ խիստ սակավադեպ այցելություններն իր տունը: Իսկ Անթառամն այդ էլ էր համարում միանգամայն բնական եւ վիրավորված չէր Բրաբիոնից...

— Ժիրո ջան,— սկսեց նա իր պատմությունը մտերմական փսփսոցով,— էդ մարդը, չնեղանաս, շատ լավ մարդ էր...

— Ի՞նչ մարդ:

Անթառամը ծուռ-ծուռ նայեց նրան եւ ավելորդ համարեց պատասխանել: Պարզ չէ՞ միթե, թե ինչ մարդ...

— Հենց էն ժամանակ, երբ Բրաբիոնը գիշեր-ցերեկ լաց էր լինում, նրանք ծանոթացել էին: Ասեմ ինչպես էր եղել: Մի անգամ կնոջը ուշքը գնացել էր փողոցում, վեր էր ըկնել: Ինքն էլ՝ Մխիթարուհիով հոյի: Մարդիկ չորս կողմից վագ էին տվել հավաքվել, որ օգնեն, բայց էդ ժամանակ անխիղճի մեկը ճանաչել էր նրան ու ասել.— «Ժողովրդի թշնամի Գլենցի կինն է, դիտմամբ պրովոկացիա է անում, որ խղճահարություն առաջացնի»... Ու...

Անթառամը պառուզա տվեց, լուսնի լույսի տակ քչփորեց ինչ որ փոսիկ՝ պատշգամբի ճաղերի վերնափայտի վրա, որը համարյա նրա դեմքին էր հավասար, եւ շարունակեց.

— Բրաբիոնի մոտ մնացել էր միայն նա: Դե, քու տարիքին, երիտասարդ, տաքարյուն ու ազնիվ տղա, բարկացել էր, որ, ինչպես ասում են՝ «որդին հոր համար պատասխան էր տալիս», ու որոշել էր օգնել նրան: Բերել էր տուն, վագել էր բժշկի, տեղավորել էր տվել ծննդաբերական հիվանդանոցում... Մի խոսքով, ծանոթացել էին...

Նայելով վերեւ՝ Ժիրայրի դեմքին, եւ տեսնելով դրա վրա տանջանքի արտահայտություն, նա վախեցած հանգստացրեց.

— Չկարծես, թե սիրահարվել էին իրար վրա: Կնիկդ էն ժամանակ սիրահարեցնելու բան չէր՝ փորն ուռած, դեմքը վշտից սմքած, վրան-գլուխը կարգի բերելը մոռացած... Խղճահարվել էր ազնիվ տղան: Լավ տղա էր...

Պատուգա տալուց հետո Անթառամը շարունակեց՝ դեմքի վրա խաղացնելով ներողամիտ-արհամարհական ժպիտ.

— Կանայք, ժիրո ջան,— նա այնպես ասաց՝ «կանայք», կարծես ինքը կին չէր,— թույլ արարածներ են, ու տղամարդիկ պիտի ներեն նրանց էդ բանը: Մեկը որ խղճա ու մխիթարի նրանց, էն էլ էդ տեսակ ծանր վշտի ու վիճակի մեջ, նրանք էդպիսի մարդուն իրենց ծոցն էլ կառնեն, կյանքն էլ կնվիրեն: Ոչ թե սիրելուց,— նորից շտապեց հանգստացնել նա ժիրայրին,— այլ երախտագիտությունից: Իսկ սերը գալիս է դրանից հետո, կամաց-կամաց...

Անթառամը բռնեց ժիրայրի բաճկոնի կոճակներից մեկը՝ իրեն ավելի մոտիկը՝ ցածրիներ, եւ ոլորեց մի կողմ, ապա մյուս:

— Էդպես էլ եղել էր... Նա մի ժամանակ գալիս-գնում էր կնոջը մոտ, հետո բոլորովին տեղափոխվեց, սկսեցին միասին ապրել: Հենց նա էր ստիպել կնոջը, որ ազգանունը չփոխի: «Որ ասում ես ժիրայրը լավ մարդ էր՝ ուրեմն կրիր նրա ազգանունը, մի վախենա, թող բոլորն իմանան»... Բայց, ինձ որ հարցնես, ժիրո ջան, նրա համար էնքան էլ հեշտ չէր եղել Բրաբիոնին համոզելը, որովհետեւ նա վախույզ է, դու նրան էդպես մի նայիր: Տղային չհիասթափեցնելու համար ք լսել նրան:

Վերհիշելով, Անթառամը կրկնեց.

— Ազնիվ մարդ էր: Սկզբում գործից վռնդեցին, բայց էլի չվախեցավ: Լավ էր, որ «էն» փոթորիկն անցել էր, թե չէ անմեղ տղային էլ պիտի տանեին ձեր պատճառով՝ քո, Բրաբիոնի, երեխաներիդ...

Վերջին բառի վրա նա խոսքը թեքեց այդ կողմ.

— Երեխաներիդ շատ էր սիրում: Նրանք էլ՝ նրան: Փոքր էին, կարծում էին մինչեւ անգամ, թե իրենց հերն է: Լավ էր պահում, պատասխանատու աշխատողի տղա էր, ինքն էլ լավ աշխատանքի՝ տախնիկ էր: Գնաց պատերազմ, զովհեց...

Անթառամը լռեց: Մուրթ ննջարանի միջով լսվում էին մյուս սենյակում սեղան նստածների ուրախ ձայները: Կիսաբաց դռնից երեւում էր լույսի մի լայն երիզ, որի մեջ՝ մի տղամարդու եւ կնոջ կեսերը: Բակը շրջապատած կորպուսներում լույսերը սակավացել էին, ուշ ժամ էր:

— Բրաբիոնն սպանվածի պես էր,— շարունակեց Անթառամը:— Գիշեր-ցերեկ լաց էր լինում: Ինձ ասում էր, որ դա իր առաջին ու վերջին սերն էր: Եվ, իսկապես, վերջինը եղավ: Արդեն ինը տարի է, որ նա չկա, բայց կնիկդ չի ամուսնանում: Կին է, թույլ արարած, կարող է պատահել, որ իր պահանջները լրացնում է դեսուդեն, բայց չի ամուսնանում: Մի անգամ հարցրի՝ «Բա դու ժիրայրին չէի՞ր սիրում, որ ասում ես, թե առաջին սերդ էր»: Ասաց՝ «Էն ժամանակ ես սերը չէի հասկանում, կարծում էի, թե էն էր, իսկ հիմի տեսնում եմ, որ էս էր»... Դու խո չնեղացա՞ր, ժիրո...

— Ումնի՞ց,— չգիտես ինչու, դուրս թռավ ժիրայրի բերանից:

— Ինձանից: Որ պատմում եմ:

— Ոչ, Անթառամ: Ոչ էլ նրանից: Եվ ոչ էլ «նրանից»: Կյանքն է այդպես,— արհամարհաբար դառը քնծիծաղեց նա:— Մարդկային մարմինն ունի իր անհետաձգելի պահանջները: Բայց հո չի՞ կարելի դրանք բավարարել բացեփաց: Դրա համար էլ մարմնի

կոչի վրա հազգնում են խղճահարության, կարեկցության, երախտագիտության, մինչև իսկ սիրո հագուստները, դրան տալիս են վայելուչ տեսք...

— Տեսնո՞ւմ ես, որ նեղացար,— բացականչեց Անթառամը:— Սկսեցիր դատարկ-դատարկ դուրս տալ: Լսիր շարունակությունը: Բրաբիոնը նրա թելի տակ բավական կրթվել-զարգացել էր, իսկ նրա զոհվելուց հետո մտավ ինստիտուտ, ավարտեց, գործ ստացավ, բնակարան ստացավ...

— Այդ բոլորն արդեն գիտեմ,— ձեռքը թափ տվեց Ժիրայրը:— Եվ կարելու էր չէ: Ծնորհակալություն պատմությանդ համար, Անթառամ...

Երբ նրանք վերադարձան սենյակ, ոչ ոք չնկատեց նրանց մտները, ինչպես, երեւի, չէին նկատել նաեւ բացակայությունը՝ բացի գուցե Բրաբիից ու Ջոնից եւ, իհարկե, Խիտայից:

Բոլորը լսում էին «թամադային»: Ըստ երեւույթին նա խմում էր վերջին կենացը: Խոսելիս նա դիմում էր «օրվա հանցավորին»՝ Խիտային:

Սենյակ մտնելիս Ժիրայրի ականջին հասան «թյուրիմացության զոհ» խոսքերը: Այդ ինքն էր...

Նստելով իր տեղը, նա հանգիստ սպասեց բաժականճառի ավարտմանը: «Թամադան» խոսեց բավական երկար,— անշուշտ զգալիորեն հարբած էր,— գովեց Խիտային, ցանկացավ նրան հետագա հաճողություններ, երջանիկ կյանք իր մայրիկի... Ուզո՞ւմ էր թվարկության կարգով հիշատակել նաեւ հորը, թե ոչ, բայց Խիտան, որ մինչ այդ գլուխը կախ, ամաչկոտ լսում էր նրան, բարձրացրեց հայացքը եւ ավելացրեց բոլորին լսելի ձայնով՝ «... հայրիկի...»: «Եվ Ջոնի հետ»,— ավարտեց «թամադան» իր խոսքը:

Ծափահարություններ, բացականչություններ: Գավաթները ձեռքերին, մարդիկ նորից վեր կացան տեղերից եւ մոտեցան Խիտային: Մայրը համբուրվեց աղջկա հետ եւ շարունակելով պահել դեմքի վրա նրան ուղղված ժպիտը, շուռ եկավ դեպի Ժիրայրը:

— Շատ հետաքրքիր բաժականճառ ասաց: Ափսոս, որ ուշացաք, չսեցիք:

— Չրուցում էինք Անթառամի հետ:

— Ես հենց դրա համար էլ հրավիրել էի նրան,— ասաց Բրաբին եւ նրա ժպիտն ստացավ արհամարհական երանգ Անթառամի հասցեին,— որ զրուցեք:

— Կարելի՞ է ինձ,— դիմեց Ժիրայրը «թամադային»:

— Թամադայի խոսքից հետո մի տեսակ... ընդունված չէ,— ասաց նա ներողամիտ,— բայց ոչինչ, ասացեք, դուք նոր եք եկել:

Մարդիկ, որ պատրաստվում էին դուրս գալ նախասենյակ՝ վերարկուները հագնելու, կանգ առան մի պահ: Ոմանք նստոտեցին տեղերից շարժված եւ անկանոնաբար կանգնած աթոռների վրա: Արդեն ուշ էր:

— Ես այստեղ լսեցի «թյուրիմացության զոհ» խոսքերը՝ իմ հասցեին,— ասաց Ժիրայրը:— Ճի՞շտ է՝ իմ հասցեին:

— Անշուշտ,— հաստատեց «թամադան»՝ նայելով ժամացույցին:

— Դե ուրեմն լսեցեք, հարգելի մարդիկ: Ես թյուրիմացության զոհ չեի: Ինձ տարել էին միանգամայն օրինաչափորեն...

Չարմանքն ու ապշությունը՝ լարված հայացքների ու կտրուկ շարժումների վերածված, շուրջկալեցին խոսողին:

— Ի՞նչ է նշանակում «թյուրիմացության գոհ»,— շարունակեց Ժիրայրը:— Այդ նշանակում է, որ յուրայինները, թշնամու տեղ դնելով, պատժում են յուրայիններին: Բայց մի՞թե, հարգելի յուրայիններ, դուք էիք պատժել իհնձ... Ոչ: Նշանակում է՝ այստեղ չկա ոչ մի թյուրիմացություն, ամեն ինչ կատարվել է արդարության եւ անարդարության պայքարի դաժան տրամաբանության համաձայն...

Մարդկանց հայացքները, Ժիրայրի վրա հառած, հանկարծ դարձան բոլորովին ուրիշ, կարծես առաջին անգամն էին տեսնում նրան: Նստել այդքան ժամանակ միեւնույն սեղանի շուրջը եւ միայն վերջին րոպեին տեսնել՝ առաջին անգամ...

— Ինչո՞ւ ենք մենք այդքան ամաչկոտ,— բացականչեց Ժիրայրը:— Ինչո՞ւ ենք այդպես կիսաձայն խոսում երեսունյոթ թվականի մասին: Իսկ ինչո՞ւ էինք ի լուր աշխարհի, բացեիբաց խոսում քաղաքացիական պատերազմի, նեպի, կոլեկտիվացման ժամանակների պայքարի մասին: Երեսունյոթ թվին եւս շարունակվում էր պայքարը, միայն այն տարբերությամբ, որ, ինչպես ամեն անգամ, այս անգամ էլ նա փոխել էր իր ձեւը: Իսկ դուք ամաչում եք, տրորվելով եք խոսում այդ մասին, կարծես, իրոք, ինքներդ եք եղել մեղավորը, թյուրիմացաբար պատժել եք ձեր հարազատին... Այո, դուք մեղավոր էիք, եւ ես էլ, եւ մենք բոլորս էլ, բայց բոլորովին այլ բանում: Աչալուրջ չէինք եղել, թույլ էինք տվել, որ հաղթեր անարդարությունը, կամայականությունը...

Մի պահ ընդմիջում տալով, Ժիրայրը շարունակեց իր գերազանցության ակամա գիտակցությամբ.

— Այնպես որ, ձեզ բարի գիշեր, բարի ճանապարհ դեպի ձեր տները, եւ մոռացեք այդ բառը՝ «թյուրիմացության գոհ»...

Սակայն Ժիրայրի գերազանցության զգացումը պաշարել էր ոչ միայն նրան, այլեւ բոլորին: Նրանք վեր կացան եւ լուռ, առանց մի խոսք ասելու, խոպարես մտածելով, դուրս ելան նախասենյակ՝ հարզանքի մի վերջին հայացք նետելով վերջին րոպեին իրն բացահայտած ե՛ւ հետաքրքիր, ե՛ւ խելոք մարդու վրա:

Դատարված սենյակում Խիտան գրկեց հորը, գլուխը դրեց նրա կրծքին եւ շնջաց.

— Հայրիկ... Դու ավարտել ես տեր-Թոգիկի ակադեմիան... Միրելի հայրիկ...